

ՆԵԱՆԿՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ
ԿՅԱՆՔԸ

Հ. ՊՈՍԿԻՆ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՄՐՐԿԱՅԱՎԸ

ՊԵՏՇՐԱՏ

087.1
Դ. 74

23 JUN 2009

CONFIDENTIAL INFORMATION

CONFIDENTIAL INFORMATION

CONFIDENTIAL INFORMATION



3 FEB 2014

16765

ՆՅԱՆԱԿՈՐ ՄԱԴԿԱՆՑ ԿՅԱՋԱԾ

առաջ

ՄԱԹԱԻՍ ՄԱՐԿԻ

1868-1936 ՀԱՅ



ԶԵՐԵՎԱՆ-1937

087.1

74-74

սր.

ԱՌԱԿԻՆ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄՐՈԿԱՀԱՎԵ

262
022



ՊԵՏՀՐԱՏ
ՀԱՅԵՐԿԱԿԻՑ ՄԱՆԿՈԱՏ ԳՈԼՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՌԱԺՆԵ

ԳԼՈՒԽ I
ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

«Վեշտ ենք շնչում, վեշտ
ենք հաղնում»:

Առած



Սնձրեային որ, գերեզմանատան ամայի անկյուն,
կպչուն գետին, դագաղ, յերկու գորտ դագաղի խուփի
վրա— ահա այն ամենը, ինչ պահպանել և Գորկու
հիշողությունը իր հոր մասին:

Յեվ յեթե տատը չլիներ, գուցե Գորկին նրա
մասին վոչինչ ել չգիտենար: Մի հասարակ ոռւս մարդ
անհետ չքանում եր կյանքից, չթողնելով վհչ փաստա-
թղթեր, վոչ նամակներ, վոչ իր պատկերները:

Հոր մասին տատի պատմածներից Ալյոշան վերջ
է վերջո իմանում եր մի բան՝ վոր փոքրահասակնե-
րին միշտ ծեծում են: Ալյոշային տանջում եր Վա-
սիլի Կաշիրին պապը, Ալյոշայի հորը տանջում եր
Սավվատի Պետրով պապը: Զարհուրելի մարդ եր այդ
զինվոր Սավվատի Պետրովը:

Նա ծառայում եր յերկար և հասավ սպայության,
բայց դեպի ստորագրյալներն այնքան դաժան եր

վերաբերվում, վոր նրան զրկեցին սպայական աստիճանից և աքսորեցին Սիրիր:

Հավանորեն Սավվատի Պեշկովը հանցավոր երի խկապես գաղանալին բռնությունների մեջ—չե վոր նա այնպիսի ժամանակ եր ապրում, յերբ զինվորի վերաբերմանը դաժան լինելը համարվում եր սպայի անվիճելի արժանիքը:

Ստորագրյալների վրա ունեցած իշխանությունը կորցնելով՝ Սավվատի Պեշկովն իր մեջ յեղած ամբողջ գաղանայինը դարձրեց գեպի իր վորդի Մաքսիմը:

Մաքսիմը շատ անգամ ե փորձել տանից փախչել Զինվորը, շները հետն առած, հետապնդում եր նրան և բռնելով՝ ծեծում եր մինչեւ մահվան դրուը հասցնելը:

Յերբ Սավվատի Պեշկովը մեռավ, Մաքսիմը թողեց ծննդավայրը և վոտքով անցնելով Սիրիրի տարածությունները՝ դուրս լեկավ Նիժնի՛ Վոլգայի վրա: Նա աշակերտ մատավ հյուսնական արհեստանոցը և սովորեց սեղանագործի, հարդարողի ու պաստառողի արհեստները:


Հյուսնական արհեստանոցը գտնվում եր Կաշիրինիներ կատան կողքին, Ներկարարի դուստր Վարդան դարձավ Պեշկովի կինը:

Մաքսիմ Սավվատևիչը տեղափոխվեց Կաշիրինիների մոտ, և այստեղ, Նիժնեգորոդսկի տաղտուկ ու տիմուր փողոցներից մեկի մեշչանական մի տնակում, 1868 թվին ծնվեց Պեշկովների Ալյոշա վորդին:

Դորկին «Մանկություն» գրվածքում հորը մի քանի եց և միայն նվիրում: Բայց նորից ու նորից կարդում ես ալդ եցերը և ավելի ու ավելի յես զգում, վոր Մաքսիմ Սավվատևիչը լավ մարդ ե յեղիւ, և

սկսում ես հասկանալ, թե ինչու Գորկին հոր անունն ե ընտրել կեղծանուն:

Յերիտասարդ ժամանակ Մաքսիմ Սավվատևիչին հալածում ելին նապաստակի պես և տանջում ելին, ինչպես կալանավորական վաշտի զինվորի, բայց, այսուամենայնիվ նա կյանք մտավ անչար և ուրախ:



Նիժնի-Նովգորոդ: Գորկու պապի՝ վ. վ. Կաշիրինի տունը:

Իսկ Կաշիրինների տանը մարդիկ իրենց դաժանությամբ հիշեցնում ելին Սավվատի Պեշկովին: Այստեղ միմյանց ատում ելին յերբեք չմարող գաղանային ատելությամբ:

— Կաշիրինների տանը տուրուղմիոց ե, — աղա-

ղակում եյին փողոցալին լերեխաները և այդ աղա-
ղակը լսվում եր համարյա ամեն որ:

Տուրուղմիոցներն աղմկոտ եյին. սրանց ամեն
մեկի մասին հարեանները գիտեյին: Բայց յերբ ծե-
ծելով մահվան դուռն եյին հասնում, խիում եյին
սուսիկ-փուսիկ, գողի պես: Այսպես եյին դատ տես-
նում իրենց կանանց հետ ներկարար Վասիլի Վասիլիչի
վորդիներն՝ ուրիշներին աննկատելի կերպով:

Մաքսիմ Սավվատեիչը տանն իրեն ոտար եր
զգում և այս պատճառով նրան ատում ելին: Մի ան-
գամ ձմեռը Կաշիրին լեղբայրները նրան գցեցին սառ-
ցածակը: Մաքսիմ Սավվատեիչը հազիվ ազատվեց:

Նա վոչ-վոքի չգանգատվեց, բայց հեռացավ Կա-
շիրինների տանից:

Պեշկովները Վոլգայով ցած գնացին—Հաշտար-
խան, վորտեղ Մաքսիմ Սավվատեիչին ծառայություն
առաջարկեցին:

Այստեղ Պեշկովների ընտանիքում դժբախտու-
թյուն պատահեց: Չորս տարեկան Ալյոշան հիվանդա-
ցավ խոլերայով—սա կիսասիական քաղաքի հաճա-
խակի հյուրն եր. Մանուկը կենդանի մնաց, բայց վա-
րակեց հորը և Մաքսիմ Սավվատեիչը մեռավ:

Ալյոշան նորից ընկավ Նիմնի, Կաշիրինների մոտ,
մի ընտանիք, վորտեղ քիչ եր մնում սպանեյին նրա
հորը:

Ալյոշան լավ եր հիշում յերկարատև ճանապար-
հորդությունը գետով, շոգենավի իերկար ճանապարհը
աշնանահար անտառների և գեղին զառիվերների մո-
տով, քաղաքների մոտով, վորոնք հեռվից խաղալիքա-
յին եյին յերեռում:

Կաշիրիններն արդեն ուրիշ տեղ եյին ապրում—
մի ցածլիկ, կեղտոտ—վարդագույն տան մեջ, վորի տա-
նիքը կարծես աչքերը քաշած գլխարկ լիներ և լուսա-
մուտները՝ չուծ աչքեր:

Անվերջ կշտամբանք, տխմար հայհոլանքներ, գա-
ժան ծեծ, ագահ խոսակցություններ փողի մասին, հուսա-
լքված կոչեր առ աստված—ահա ինչով եր լցվում
կյանքը Կաշիրինների մոտ:

Ալյոշային ամենից շատ դուր չեկավ Վասիլի
Վասիլիչը պապը իր շեկ մորուքով, կանաչ աչքերով
և, կարծես, արյունով կեղտոտված ձեռքերով. ներկը
ծծվել եր նրանց մեջ մինչև կյանքի վերջը: Նրա հայ-
հոյանքն ու աղոթքները, կատակներն ու խրատները
տարորինակ կերպով իմի եյին ձուլվում և դառնում
ինչ վոր ճչոց ու հեգնանք, վոր ժանգի նման նստում
եր մարդու սրտի վրա:

Ալյոշան պապի մեջ զգաց իր գլխավոր թշնամուն
և չսխալեց: Շատ դաժանություններ կրեց Ալյոշան
Կաշիրինների մոտ. և ամենից շատ տառապանք պատ-
ճառեց նրան Վասիլի Վասիլիչը:

Զարհուրելի յեր այդ կյանքը, բայց ավելի զար-
հուրելի յեր այն, վոր ըրջապատում ամեն ինչ թվում
եր նույնպես խավար, կաշիրինյան:

Ալյոշան լուսամուտից նայում եր փողոց և դի-
տում՝ աջից կալանավորական վաշտի հսկա դեղին
շենքը, ձախից՝ Ոստրոմնի հրապարակը և բանտի գորշ
շենքը՝ չորս աշտարակներն անկյուններին:

Իսկ վաշտի և բանտի արանքին, փողոցի չցա-
մաքող ձկուտի մեջ, զարված եյին տներ գարշնա-

գույն, կանաչ, սպիտակ, բայց ամենուրեք նըանց
մեջ, ինչպես կավելների մոտ, կովում եյին խանձ-
ված կարկանդակի և թթված կաթի համար, նույնպես
ապրում եյին խոներով՝ կճուների, ինքնայեռների,
բլինների մասին, նույնպես զվարճանում եյին ան-
վանակոչությամբ և քելեխով, կուշտուկուու ուտելով և
խմելով մինչև անասնանալը:

Նիմուռ համար ե կազմվել այն առածը թե՝ «տները
քարից են, մարդիկ յերկաթից»:

Եերկաթե մարդիկ անհողողդ կերպով հավատում
եյին, վոր նըանց վարած կյանքը ամենականոնավոր
կյանքն ե՝ հաստատված աշխարհի վրա ամուր, ընդիշաւ:

Կարծես խոր փոսի մեջ եր զգում իրեն Ալյոշա
Պեշկովը և նրա հոգու մեջ վաղ ծնունդ առավ ատե-
լություն դեպի մեշանները, դեպի նըանց հոգսերը
հինգ կոպեկանոցների մասին, և հինգ կոպեկանոցների
նման միակերպ խոսակցությունները:

Նա աշխատում եր անջրպետվել այդ մարդկանցից,
ունենալ իր վորեե անկյունը, իր անձեռնմխելի տեղը:

Կաշիրինների տան տաղտկալի ալգում, հեռու-
ներկի չաներից և պարաների վրա փուած փալասնե-
րից՝ Ալյոշան սարքեց փոքրիկ ծաղկաթումբ, ինքը
ծաղիկներ տնկեց, և նըանք լավ աճում եյին:

Մի անգամ նա յեկավ նըանց ջրելու և տեսավ,
վոր ծաղկաթումբը քարուքանդ և արված, ծաղիկները
տրորված են և նըանց վրա պառկած և կաշիրինների
խոզը, վորի հետին վոտքը ջարդել եր դարպանը:

Այսպես ել պհա, մարդիկ ելին խուժում Գորկու
մանկության մեջ և սառնասրաորեն վոտնակոխ ա-
նում այն ամենը, ինչ թանգ եր մանուկի համար:

Բայց նրա մանկության մեջ բերկրանք ել կար-
Ամենամեծ բերկրանքն Ակուլինա իվանովիա-
տատն եր, վորը շատ տարիներ հետո «Մանկության»
միլիոնավոր ընթերցողների համար թանգ դարձավ,
վորպես ամենամերձավոր մարդ:

Ակուլինա իվանովիան Ալյոշա Պեշկովի մեջ պահ-
պանեց մարդկային յերջանկության պարզ և զար-
մանալի հավատը և թույլ չովեց, վոր մանկան հոգուն
տիրի կաշիրինյան խավարը:

Նա ուներ կենցաղավին իմաստություն և այդ՝
շատ տառապանքներ կրած մարդու գծուծ և սևացած
իմաստությունը չեր:

Տատի մեջ ամեն ինչ իրենն եր՝ լավը, չերմը.
այդ ջերմությունը կար նրա ամեն խոսքի և շարժման
մեջ, այն բանում, ինչպես նա քթախոտ եր քաշում
սև արծաթազարդ քթախոտի տուփից կամ ինչպես ծե-
րացած հանգիստ ձեռքով պոկում եր ծանոթ խոտերը
զբոսնելիս:

Տատը կարեկցում եր մարդկանց, ճանաչում եր
անտառը և սիրում եր հեքյաթներն ու իր կարեկցու-
թյունը, սերն ու գիտելիքը հաղորդում եր թոռին
խոսքերով, վոր նման եյին ծաղիկների:

Ալյոշային նա պատմում եր կաշիրինների մասին,
անցյալի մասին, խոտերի բուժական հատկությունների
մասին, սոսկալի հեքյաթներ հաբա ուստաիք
մասին, կամ ավազակների մոր վշտի մասին: Ուստի
տատի հեքյաթներն այն առաջին չգրված գիրքն եյին,
վորը սիրեց Գորկին ընդմիշտ, մինչև կցանքի վերջը:

Նա հեքյաթներ լսում եր նաև գայակ Ցեղանիա-
յից: Դայակը սիրում եր հանդուգն հեքյաթներ աստծու

և տերտերների մասին։ Աստված ապրում եր աշխարհում, ման եր գալիս զյուղամիջում, անհաջող խառնը-վում եր զանազան գործերի և դուրս եր գալիս, վոր նա տիմար ե, իսկ յերբեմն ել չար։

Դայակի հեքյաթներում մարդիկ ել վատ եյին՝ դատավորներն արդարությունը դարձրել եյին առելքարի առարկա՝ ինչպես չիթն ու միսը՝ Կալվածատերերը զարմացնում եյին իրենց դաժանությամբ. դաժանության մեջ ել ինչ վոր հիմարություն կար. Վաճառականներն այնքան եյին ագահանում, վոր նրանցից մեկն իր կնոջն ու յերեխաներին հիսուն կոպեկով ծախեց թաթարներին—նրան հիսուն կոպեկ եր պակասում հազարը լրացնելու համար…

Ալյոշան պատրաստ եր հավատալու դայակի հեքյաթներին։ Կաշառակեր դատավորները, դաժան կալվածատերերը, ագահ վաճառականները թվում եյին լավ ծանոթ՝ հիշեցնելով Կաշիրիններին և այն մարդկանց, վորոնք ապրում եյին հարեան տներում։

Բայց տատի և դախակի հեքյաթները վստահություն եյին ներշնչում, վոր այնուամենախիվ լավ մարդ կա աշխարհում։

Մի անգամ այդ մարդը հայտնվեց բոլորովին մոտիկ, հենց Կաշիրինների տանը։ Տնվորը, վոր բնակվեց խոհանոցին կից սենյակում, լարորատորիա սարքեց և ինչ վոր գործեր եր կատարում։ Տարօրինակ եր թվում վոչ թե այն, վոր այդ ակնոցավոր, կորացած և վախտ մարդը զբաղվում եր պլնձե կշեռքով, սպիրտավառով և գծվածքներով, այլ այն, վոր նա իր զբաղմունքի համար փող չեր ստանում և չեր ել ձգտում ստանալու։

Նա մեղմ եր և շատ միայնակ, կաշիրինները նրան, ինարկե, տանել չեյին կարողանում, և պապը, վերջիւնը, տնվորին խնդրեց հեռանալ։

Տնվորն անհայտացավ իր կշեռքների և պնակների հետ, բայց Ալյոշան նրան չմոռացավ։

Նա այժմ հաստատ համոզված եր, վոր լավ մարդը մտացածին չե։ Նրան պետք և վորոնել ամենուրեք, ուր մարդիկ տարբերվում են Գորկու մանկության՝ Պալեվոյ և Կանատնի փողոցների բնակիչներից։

Վորոնել—կնշանակի դուրս պրծնել տանից, գնալ հեռու, չքանալ, ինչպես չքացալ տնվորը։

Յել Ալյոշան պատրաստ եր գնալ ում հետ ասես, միայն թե շարժվեր, անշարժ չալլեր…

Կաշիրինների տան մոտով հաճախ անցնում եյին գորշ խալաթներով մարդիկ՝ կալանավորներ, Նրանց տանում եյին նավահանգիստ, վորտեղ նավ եյին նստեցնում և տանում շատ հեռու։ Ալյոշան նախանձում եր նրանց։ Ավելի լավ ե գնալ պահակով, շղթայած վոտներով, բայց և անպես գնալ վորեե տեղ։

Մի անգամ փողոցով տաժանակիրներ եյին գընում։ Նրանցից մեկը՝ մեծ կարմիր սպին ճակատին, ականջն այլանդակված, սարսափելի յեր։ Ալյոշան նրանց հետեւում եր մայթով։ Հանկարծ տաժանակիրն ուրախ գոչեց։

—Հայդա, տղա, գնանք միասին։

Ալյոշան իսկուցն տաժանակիրի մոտ վաղեց, Պահակը յետ հրեց նրան, թե չե Ալյոշան կերթար այդ մարդու հետ—միենույն ե՝ թե ուր, միայն թե գնար և այլիս չվերադառնար։

Բայց նա վերադառնում եր, կյանքը մնում եր

անփոփոխ: Փոխվում եյին միայն տները, վորոնց մեջ
ապրում եյին Կաշիրինները:

Ուսպենսկի վարեջքի կեղտու վարդագույն տա-
նից պապը տեղափոխվեց Պալեվոյ փողոցի մի մեծ
տուն՝ ողետունը ներքնահարկում, իսկ այնտեղից Կա-
նատնի փողոցը, ուուգ կարմրագույն ներկած տունը,
լուսամուտների յերկնագույն փեղկերով:

Զանձրույթը խեղդում եր Ալյոշային: Յերեքն
նա դիմադրում եր նրան կատաղի հանդինությամբ.
բարձրանում եր կտուրը և փակում եր վառարանների
ծինելույզները, ըշշիի կաթսայի մեջ աղ եր լցնում,
թղթե խողովակով փոշի յեր փչում պատի ժամացույ-
ցի մեխանիզմի մեջ:

Ինչու եր անում նա այս բոլորը: Ինքն ել չգիտեր:
Բայց իրբեմն դաժանությունները՝ վոր կյանքը
մերկացնում եր նրա առաջ, նրա մեջ առաջացնում ե-
յին այլ բան—ատելութիւնն: Ալյոշան վկա յեղավ,
թե ինչպես խորթ հայրը փոտքով հարվածում եր նրա
մոր կըծքին:

Ալյոշան ճանկեց դանակը և ամբողջ ուժով խիեց
խորթ նոր կողքին:

Գորկին տասը տարեկան հասակում մարդամեջ
մտավ: Նրա մայրը մեռավ. խորթ հայրը թղթախա-
զում տարվեց և զրկվեց պաշտոնից, պապը մնանկացավ:
Ինքը պիտի ապրուսի միջոց վաստակեր:

Նա ծառայել ե վորպես աշակերտ կոշկենի խա-
նութում և վորպես ամառն լվացող շոգենավում, աշ-
խատել ե գծագրիչի մոտ և պատկերանկարչական
արհեստանոցում, պարապել ե հնոտի հավաքելով և
թռչնորսությամբ:

Կոշկենի խանութում տերը Գորկուն նեղում
եր կեղտու խոսակցություններով խանութ մտնող
գնորդների մասին, գործակատարը՝ սպառնալիքներով,
իսկ Կաշիրինների տղա Սաշան, վոր նույնպես ծա-
ռայում եր խանութում, ասեղներով, վոր հարմարե-
ցնում եր կոշկենի մեջ. մաքրելու ժամանակ Գոր-
կին ամեն անգամ վիրավորում եր ձեռքերը:

Վաճառասեղանի հետեւին կանգնած՝ Գորկին նա-
յում եր լուսամուտով. ձմեռ եր, անցնում եյին հազ-
վաղեպ անցորդներ, ձյունակույտերի վրալով քարշ
ելին գալիս ձիեր, հարևան զանգակատնից լսվում եր
տիսուր զողանջ, և մի ցանկություն կար—վոր, կար-
ծես կույր, կեղտությալի աչքերով տերը շուտով
վրնդեր նրան վորեւ մեղքի համար:

Այդ չպատահեց. բայց, ըշշին կերակրամանով
տաքացնելիս, Գորկին ամանը շուռ տվեց իր վրա և
ձեռքերը խաչեց. Գորկուն ուղարկեցին հիվանդանոց.
անտեղից այլևս չվերադապավ կոշկենի խանութը,
այլ ընկապ իր հեռավոր ազգական գծագրիչի մոտ՝ սո-
վորելու:

Այստեղ ավելի վատ եր, քան կոշկենի խա-
նութում: Նոր տերը նրան գծագրություն չեր սովո-
րեցնում: Գորկին փայտ եր ջաբդում ու կրում, աման
ու հատակ եր լվանում, մաքրում եր ինքնայեռը և
պղնձի ամանները, շուկա յեր գնում, խանութ եր վա-
զում:


Վատն այդ չեր—Գորկին հաճույքով եր աշխա-
տում: Վատն այն եր, վոր գծագրիչի տան կանայք—
նրա կինն ու զոքանչը—հալածում եյին նրան, վի-

բավորում եյին, ծեծում եյին՝ տանտիրուհիների և
ազգականների կրկնակի իրավունքներով։
Կոշկեղենի խանութում Գորկին համբերությամբ
սպասում և արձակման։ Գծագրիչից ինքը հեռացավ—
փախավ, ինչպես մկնիկը ներքնատնից։ Մի քանի որ
նա թափառում եր Նիժնիում, նավահանգիստների և
բեռնողների շուրջը, մինչև նրան հաջողվեց տեղավոր-
վել վորպես աման լվացող «Դորբի» շոգենավի վրա։
«Դորբի» կոչվում եր կալանավորական շոգենա-
վը—նա հետեւից քաշում եր կալանավորներով լաստա-
նավերը։

Շատ ել ավելի չեր Գորկու ազատությունը, քան
կալանավորներինը։ Առավոտյան ժամի վեցից մինչև
կես գիշեր նաև աման եր լվանում, պատռաքաղ ու
դանակ մաքրում։

Բայց այնուամենայնիվ, այստեղ ավելի լավ եր,
քան կոչկալաճառ Պորխունովի կամ գծագրիչ Սերգե-
ևլի մոտ։ Այստեղ լայն և հանդարտ գետն եր, տախ-
տակամածից յերեսում եյին մթին անտառներ և ամա-
յի մարգագետիններ, հազվադեպ անծանոթ քաղաքներ,
ընդարձակ տալրածություններում կորած մենակ գյու-
ղեր։ Բնությունը մոտ եր, կողքին, նա հիշեցնում եր
ազատության մասին, այն լավ ամռան մասին, վոր
մի անգամ Գորկին անցկացրեց մենակ տատի հետ,
յերբ նրա հետ միասին տանից յերկար ժամանակով
գնում եյին անտառ, վորտեղ տատը սովորեցրեց նրան
հավաքել սունկ, բուժական խոտեր և ընկույզ՝ սկյուռ-
ների բներից։

Այդ զբոսանքների ժամանակ Գորկին սիրեց ան-
տառը, և այս պատճառով շոգենավի աման լվացողի
աշխատանքը նա փոխեց թոշնորսի աշխատանքի։



Նիժնի նովորոդի այն տունը, զորտեղ Գորկին ապրում եր
պապի մոտ։

62

Նո գնեց ցանց, բոլորակ, թակարդներ և շինեց
վանդակներ։ Անտառի փոսերում նա հետամտում եր
կարմրակատարիկներին, տարօրինակ թանձրակտուց-
ներին, ճթճթան խաչկառցներին, չար և խելացի
յերաշտահավերին։

Բոնած թոշունները տատը ծախում եր շուկա-
յում։ Այսպիսով, յերկուան ել—Գորկին ու տատը—
մի ժամանակ կերակրվում եյին անտառի շուրջը։

Ամառն անցավ, թոշունները թուան-գնացին,
պետք եր քաղաք վերադառնալ։ Տերերի մոտ աշխա-
տելով՝ նա նորից կորցնում եր ազատությունը և
հաճախ յերկար ժամանակով բաժանվում տատից։

Բայց նա նոր հենարան գտավ։
Այդ գրքերն ելին։

Դժվարին եր Գորկու ուղին դեպի գիրքը:
Պապն եր սովորեցնում նրան զբագիտություն
չեկեղեցական գրքերով, հետո մայրը «աշխարհական»
գրքերով, և այդ ուսուցումը նույնպես դաժան եր, լի
կշամբանքներով, վիրավորանքներով ու պատիճնե-
րով, փորպես առևտրական գործի կամ գծագրության
ուսուցումը:

Իսկ զպրոցում, վորտեղ շատ չմնաց Գորկին, աշա-
կերտները տնապ ելին անում՝ անվանելով նրան հնո-
տիալաճառ և թափառաշրջիկ մուրացկան, պղնձե, կար-
ծես, թթված դեմքով ուսուցիչը, չգիտես ինչու, ան-
տաճնելի կերպով շարունակ կպչում եր նրա ոձիքից:

Բայց, յերբ Գորկին, վերջապես, հասավ գրքին,
գիրքը մտալ նրա կյանքի մեջ իբրև ինչ վոր ամենա-
մեծ, կարեոր և բերկրալի բան:

Հստ յերեսութին, առաջին գրքերից մեկը, վոր
ինքը ձեռք բերեց, Անդերսինի հեքյաթներն ելին:

Նա սկսեց կարգալ «Սոխակը» և այս նրան դուր
յեկալ առաջին դարձվածից՝ «Զինաստանի բոլոր
բնակչիները չինացիներ են, ինքը կայսրն ել չինա-
ցի յե»:

Բայց Անդերսինի հեքյաթները բախտավոր բա-
ցառություն եր: Նա գիրք չեր ընտրում, այլ կարդում
եր այն բոլորը, ինչ նրան ձրի տալիս ելին պատա-
հական բարեկամները, կամ փողով՝ գրային կիսունե-
րի տերերը:

Գորկու մանկական հասակում կարդացած գրքերը
խայտաբղետ ելին, ինչպես այն մարդիկ, վորոնց նա
հանդիպում եր իր ճանապարհին:

Գորկու առաջին գրադարանապետը «Դոբրի» շո-

գենավի խոհարարն եր – գվարդիայի պաշտոնաթող
յենթասպա Ամուրինը:

Յերկաթապատ մնդուկից նա հանում եր ինչ
վոր խորհրդավոր անուններով գրքեր՝ «Омировы
наставления», «Меморий артиллерийские», «Письма
лорда Седенгали»: Ոյնուամենայնիվ, շոգենավի խո-
հարարը Գորկու առաջին ուսուցիչն եր, վորովհետեւ
նա յեր, վոր սեր ներշնչեց նրան դեպի գիրքը:

Գորկին գիրք ճարում եր, վորտեղ միայն կա-
րող եր՝ գիմնազիստներից և յերգիչներից, խանութ-
պաններից և սրբանկարիչներից: Ագահությամբ կար-
գում եր պանդոկների հոտ բանած գոենկաճաշակ գըր-
քույկներ և թարգմանական արկածային վեպեր: Այդ
անպետք բաների մեջ Գորկին պատահաբար հանդի-
պեց ֆրանսիական մեծ գրողների՝ Բալզակի և Ժլյուբի
գրքերին:

Մի տոն որ, բարձրանալով սրահի կտուրը,
մարդկանցից հեռու, նա կարգաց Ֆլոբերի «Պարզ
սիրաը», մի պատմվածք այն մասին, թե ինչպես և
անցըել խոհարարուհին իր հասարակ կյանքը:

Սովորական բառեր, պարփակված սովորական
դարձվածքների մեջ, հուզում, վրավում ելին և պատմ-
վածքը հրաշք եր թվում:

Մի քանի անգամ, համարյա անգիտակցարար,
նա զննում եր տարրինակ գրքերը լույսին բանած,
կարծես ճգնում եր առղամիջերում գտնել այդ հրաշքի
լուծումը, և չեր գտնում: Իսկ այժմ, խոհարարնե-
րի, խանութպանների և յերգիչների սիրելի գրքույկ-
ներին փոխարինելու յեկան գրքեր, վորոնց նա արգեն
ինքն եր սիրում հուզիչ ու խորը սիրով՝ Պուշկին և
Գոգոլ: Տուրքենեկ և Լերմանտով:




Գովասանական թերթ, տրված Ա. Մ. Պետրովնա III
դաստիարական աշակերտ Նիժեգորոդսկու քաղաքացիության մեջ՝
Կոնավինսկու համար պարկին արել և ծանոթություն՝ «նայած առաջարկ աշակերտ Կոնավինսկու»
բարու խոսքը դարձրել «չարաճնություն».

Նրա մեջ շատ վաղ զարգացավ նբարագացությունը դեպի բոլոր ճշմարիտը գրականության մեջ՝

Մայրաքաղաքի յերգիծաբանական ժուռնալներից մեկում Գորկին գտավ մի փոքրիկ պատմվածք, վորը նրան շատ լավ թվաց. Յանկություն ունեցավ, վորինքն ել փորձի այդպես լավ գրել: Պատմվածքի տակ տարրինակ ստորագրություն կար՝ «Անտոշա Զեխոնտե»:

Այդ Զեխոնտեյի մասին Գորկին հարցրեց մի-



«Գուակ կամ անհաղթելի հավատարմություն»
գուենկաճաշակ գրքերից մեկը, վոր կարդացել և
Գորկին մանուկ հասակում:

Ժանոթ գիմնազիստի, սա փրկած նկատեց, վոր պետք
ե լուրջ գրքեր կարդալ, և վոչ թե յերգիծաբանական
ժուռնալներ: Այս Գորկու կարգացած առաջին պատմը՝

ժամանակ եր դեռևս քչերին հայտնի Չհիսովի՝ հետագաւում Գորկու սիրելի զբողի և ընկերով:

Կյանքը Գորկուն թվում եր բանտ, իսկ գրքերը թոշուններ, վորոնց յերգը հասնում եր բանտարկյալին:

Ինչ-վոր ժուռնալում մի անգամ նա տեսավ նշանավոր գիտնական ֆարաղեյի նկարը և կարդաց մի հոդված, վորից նա իմացավ, վոր ֆարաղեյը հասարակ բանվոր եր յեղել:

Այս բանն ապշեցրեց Գորկուն, թվաց անհավատալի:

Նա հետաքրքրվեց իմանալ նկան արդյոք ելի ինչ-վոր նշանավոր մարդիկ, վորոնք առաջ բանվոր են յեղել ժուռնալներում այլևս վոչ վոքի չգտավ, բայց մեկը Գորկուն տվեց Ստեփենսոնի անունը—շուգեկառքի գյուտարարը նույնպես բանվոր եր:

Փառքի չեր ձգտում Գորկին, այլ յերազում եր այնպիսի կյանքի մասին, վորը կարելի լիներ կոչել մարդկային:

Մի ժամանակ Գորկին պատրաստ եր հավատաւու, վոր իսկական կյանք նա կգտնի թատրոնում, Առաջին անգամ նա թատրոն ընկալ պատահաբար տոնավաճառում: Կարմիր աղյուսե շենքում բեմադրում եր յին «Պարոնայք Գոլովկիվները» ըստ Շչեդրինի: Հայտնի դերասան Անդրեևիլ—Բուրլակը պատկերում եր Յուդուշկա Գոլովկիին, և Գորկին քիչ եր մնում լաց լինի ատելությունից—նա ուզում եր վազի բեմ և սպանի Յուդուշկին:

Նա դզաց թատրոնի դարձուրելի ուժը:

Ներկայացումից հետո Գորկին ամբողջ գիշեր թափառում եր տոնավաճառի հետեւ մարդկագետիններում: Ինչ-վոր հարբած մարդ կանգնեցրեց նրան և բոռնցքով հարվածեց դլիսին: Գորկին համարյա ուշա-

դրություն չդարձրեց՝ այնքան նա հավշտակված եր թատրոնական տպագործություններով: Նրան տիրեց թատրոնում խաղալու ցնորքը: Այդ ցնորքը կիսով չափ իրականացավ—նրան թատրոն ընդունեցին ծառայության, բայց վոչ վորպես դերասան, այլ վորպես ստատիստ:

Առաջին ներկայացումը, վորին մասնակցեց Գորկին, մի անշնորհք դրամա յեր յերգեցիկ խորեգով և պարերով—«Քրիստափոր Կոլումբոս կամ Ամերիկայի գյուտը»:

Այդ պիեսում Գորկին ներկայացնում եր հնդիկներից մեկին: Նիզակի փայտի ծայրով բզում եր իսպանացիների փորերին: Բայց, ինքն ամբողջապես «շամփրվեց» սուսերով, մոռացավ մինչև անգամ ցնցվել:

Գորկին դերասան չդարձավ: Պարզվեց, վոր թատրոնը յերբեմն կարող ե տիրել հանդիսատեսներին, բայց գավառական թատրոնի Կուլիսների հետեւ կյանքը տիրուր ե և կոպիտ: Հերոսը, վոր քիչ առաջ սիրածի վոտքերն եր ընկել բղավում եր նրա վրա.—Ինչ քամի յե փչել խելքիդ, վոր քորոցները խրել ես այնտեղ, վորտեղ հարկավոր չի:

Խոկ աղնիի հալը, բեմի վրա վողբալով գժբախտ աղջկանը, կուլիսների հետեւն թշում եր նրա վրա.

—Դու ելի՞ դերդ չգիտես, սովար:

Փորձերի ժամանակ ուժիսյորը ստատիստների հետ վարդում եր, ինչպես տաժանակիրների հետ: Գորկուն նա անվանում եր անիծված պաքսիմատ և անխիղճ կերպարանք: Մութ հանդիսագահիձը թվում եր հսկայական, խոր գերեզման:

Յեվ, մի անդամ ել խաբված կյանքից, Գորկին
թողեց թատրոնը:

Նա հաստատ վորոշեց սովորել:

Ստեփենսոնի անունը տվող գիմնազիստը խոր-
հուրդ եր տալիս գնալ Ղաղան—այնտեղ համալսարան
կար:

Գորկին թողեց ծննդավայրը և գնաց Ղաղան:
Առանց ավտոսանքի յերնա բաժանվում Նիժնիից,
նրա չարդախներից և ներքնատներից, նրա մարդկան-
ցից:

Առ ժամանակ Գորկին 15 տարեկան եր:

ԳԼՈՒԽ

«ՂՈՌՂՈՌԸ»

«Յեթե ինձ առաջարկեյին՝

— Գնա, սովորիր, բաց դրա փոխարեն, կիրակի
որերը Նիկոլաևսկի հրապարակում մենք քեզ կծեծենք
փայտերով, — յես հավանորեն կընդունեյի այդ պայ-
մանը»:

Այսպես եր գրում Գորկին իր հիշողությունների
միջ:

Այնուամենայիվ նրան սովորել չհաջողվեց,

Ղաղան գալով, Գորկին հասկացավ, վոր նա՝ նի-
ժեգորոդյան մեջանը, անտուն-անտեղ մարդը, հա-
մալսարանի յերես չի տեսնի: Նրան ալ բան եր սպա-
սում՝ արվարձանների տների նկուղները, գետի նա-
վամատուցները, ընդհատակյա խմբակները. ծանոթու-

թյուն բոսյակների, վոստիկանների, ուսանողների,
հեղափոխականների հետ:

Այս եր այն համալսարանը, ուր ընկավ Գորկին
և այս համալսարանի ուսումը չեր կարելի մոռանալ....

Գորկին իր համար բնակարան գտավ տիսուր
պարապուտում ավերված մի տան նկուղում, իսկ աշ-
խատանք՝ Ուստիյի գետային նավամատուցներում:
Նրան որական քսան կոպեկ ելին վճարում:

Նա ընկավ նավամատուցների խայտարկետ
բնակչության մեջ՝ բեռնողների, սրիկանների, մու-
րացկանների և ավելի ես խայտարկետ բնակչության
«Ապակու գործարանի»: Այսպիս, չգիտես՝ ինչու, կոչ-
վում եր հին կիսավեր շենքը. գուցե այն պատճառով,
վոր նրա պատուհաններում վոչ մի հատ վողջ ապակի
չկա:

Ապակու գործարանը Ղաղանի բոսյակների հա-
մալսարման տեղն եր: Այստեղ ելին հանդիպում հա-
մալսարանից վարպած ուսանողը և տասը տարվա
տաժանակիր աշխատանք կրած ծերունի փալասահա-
վաքը, մուրացկանը, վոր առաջ անասնաբույժ եր
յեղել և թափառաշրջիկը, վորը մի ժամանակ սպա-
սալորի պաշտօն եր վարել նահանգապետի մոտ:

Բոլորի անցյալը տարբեր եր, իսկ ներկան միա-
նման՝ քաղցած և անտանելի:

Տարօրինակ և հաճախ անհասկանալի ելին թվում
նրանք Գորկուն, այնուամենայնիվ նա բոսյակներին
համարում եր ավելի լավ, քան այն սովորական մար-
դիկ, վորոնք ապրում ելին թիթեղապատ մնդուկնե-
րով ու գուշնզգույն թղթերով պաճուճած լուսամուտ-
ներով իրենց տնակներում: Բոսյակները հարթում ե-
լին, կովում, գողանում, բայց ագահություն չելին

անում. փող չեյին դիզում, կյանքից չեյին գանգատվում և մեշանների մասին խոսում եյին ծաղրով ու արհամարհանքով: Մի անգամ մեկը գողացել եր վորսորդական լավ կողիկներ, Վորոշվեց այդ խմիչքետալ, Բայց բոսյակներից մեկը, ճիվանդ և դրանից միքանի որ առաջ վոստիկանությունից ծեծ կերած, առաց, վոր պետք ե խմիչքի տալ միայն ձտքերը, իսկ թաթամասերը կտրել և տալ «ուսանողին», վորը մաներ գալիս քրքրված կողիկներով:

—կմըսեցնի վոտքերը՝ կտակի, իսկ նա լավ մարդ է:
Այդ մարդկանցից շատերը Գորկուն հիշեցնում եյին արկածախնդրական պատմվածքների գործող անձանց:

Բայց միայն գրքի արկածների հերոսները չելին, վոր գրավում եյին Գորկուն, Նրա մեջ ապրում երինչ վոր ավելի նշանակալի ցնորք: Նա հրում եր նրանդեպի այլ մարդիկ, անծանոթ մտքեր, չկարդացած գրքեր:

Ըսկերները Գորկուն տարան քաղաքի ծայրամասի նսկարավաճառի խանութը: Նրա տերն եր հեղափոխական Անդրեյ Դերենկովը: Խանութում վաճառում եյին շաքար, մոմ, կարամել, ոճառ, բայց խանութի յետեր սենյակում կախված եր Գերցենի նկարը և պահված եյին արգելված գրքեր:

Պատմվածքները և վեպերը փոխարինելու յեկան գիտականների, մտածողների և հեղափոխականների գրքերը:

Դերենկովի խանութից Գորկին ընկալ ուսանողական գաղտնի խմբակների մեջ: Այստեղ ուսումնա-

սիրում եյին պատմության և քաղաքատնտեսության վերաբերյալ աշխատություններ, կարդում եյին զեկուցումներ և աղմկալի վեճեր եյին ունենում Ռուսաստանի հեղափոխության վիճակի մասին.

Սա հեղափոխական յերիտասարդության ազատամալսարան եր, և Գորկուն ավելի շատ գիտելիք ավեց, քան կարող եր տալ Ղազանի կայսերական համալսարանը:

Գորկին այստեղ ծանոթացավ Աղամ Սմիտի աշխատություններին, Զերնիշեվսկու գրքերին, Կարլ Մարքսի հեղինակություններին: Մարքսի «Կապիտալը» այն ժամանակ հազվագյուտ գիրք եր և նրա առաջին գլուխն անցնում եր ձեռքից-ձեռք արտադրած...

Յերր Ղազանի ժանդարմները մի անգամ Գորկու մոտ խուղարկություն կատարեցին՝ գտան քաղվածքներով լի մի տետրակ: Գորկու բախտից տետրակի քաղվածքները Մարքսից չեյին, այլ ավելի անմեղ գրքից՝ «Ժամանակակից ուսումնաք բարույականության մասին և նրա պատմությունը» Միրտով-Լավրովի:

Այնուամենայնիվ ժանդարմները շտապեցին այդ մասին հաղորդել Նիժնի Պեշկովի ծննդավայրի իշխանություններին: Այն հանգամանքը, վոր այս փայտ ջարդող և բեռներ կըող համարակ մարդը կարդում եր գիտական գրքեր և նրանցից քաղվածքներ կատարում, շատ կասկածելի յերկաց:

Գորկուն խմբակներում միայն նրա բարձր բարու համար չեյին «Ղողողո» անվանում—նա զեկուցումներ եր տալիս, մասնակցում եր յերկարատև գիշերակին վիճաբանություններին, և բոլորը, ինչ նա առում եր, անդիր արած չեր, և գրքերից չեր, այլ

իրենն եր, խորը կշռադատած։ Նա կարողացավ կյանքը
ճանաչել շատ ավելի խոր, քան իր շատ ընկերները,
և այդ պատճառով նրա նկատողությունները հաճախ
շշմեցնում ելին իրենց կծու անսպասելիութամբ։

— Դու, բարեկամ, ուշադրության ես առնում վոչ
այն, ինչ պետք ե, — բարկացած նախատեց Գորկուն
նրա ուսուցիչներից մեկը։

Շատ բան, վոր Գորկին գտնում եր զրքերում,
թվում եր լավ ծանոթ։ Թաղաքատնտեսության յերկերի
հեղինակները նկարագրում եյին բանվորների տիտուր
վիճակը, բայց այդ վիճակը Գորկին կը եր սեփա-
կան փորձով։

Ղաղանում նրան վիճակից անցնել ամենածանր
դասընթացներն այն համալսարաններում, վորոնց
կյանքը պատրաստել եր Գորկու համար։

ՅԵՐԿՈՒ ՀԱՅԱԳՈՐԾԱՐԱՆ

«Պատմվածքում խիստ զգացվում ե խորը,
բութիկի հոտ և զայխ»։

Ա. Պ. Չեխովի Գորկուն գրած նամակից

Յեկալ աշունը։ Վերջին շոգենավերն շտապում
եյին գեղի գետածցերը։ Մեռելային դրություն տի-
րեց նավամատուցներում, գետի վրա այլև աշխա-
տանք չկար։

Գորկին թափառում եր անշարժացած Ռւստիում՝
դատարկ խոշոր արկղների և տախտակներով մեխած
շենքերի մոտով։

Նա քաղցած եր մնում, գիշերում եր ուր հասներ,
մինչև անգամ գետափին, շուռ տված նավակի տակ,

և համոզվում եր, վոր աշունը վատ ժամանակ ե անա-
պատճան մարդու համար։

Գորկին պատրաստ եր ձեռնարկել ամեն տեսակ
աշխատանքի, միայն թե նա ապաստարան տար նրան։

Ամսական յերեք ուրելով նա վարձվեց վորպե-
հացթուխի ողնական Սեմենովի կրենդելի հիմնար-
կում։

Սեմենովի հիմնարկը տեղավորված եր ներքնա-
տանը։ Կրենդելանոցի լուսամուտները նայում եյին
դեպի ձորակը։ Տերը նրանց փակել եր յերկաթներով,
վորպեսզի բանվորները չկաբողանան հաց տալ մու-
րացկաններին։

Այդ ներքնատանը Գորկին որվա լնթացքում
պետք ե տասնչորս ժամ կրենդել ծալեր «Յ» տափի
ձևով։ Գորկին վաղուց գիտեր, թե ինչ և ծանր ֆի-
զիկական աշխատանքը, բայց աշխատանքը Սեմենո-
վի մոտ, նրան՝ ուժեղ և զիմացկուն պատանուն, թվում
եր հյուծող, անստանելի...»

Յերբեմն Գորկուն այնպիսի զգացում եր պատում,
վոր կարծես յերեքհարկանի, տունը, վորտեղ տեղա-
վորված եր կրենդելանոցը, շինված եր ուղղակի նրա-
ուսերի վրա։

Տան հարկանուհիները Սեմենովի բանվորներին
անվանում եյին «կալանավորիկներ»։

Սեմենովը վոչ միայն ուժասպառ եր անում իր
«տղաներին» տասնչորսժամյա աշխատանքով, այլև
անդադար ծաղրում եր նրանց, ծեծում, տուգանում և
պատժում եր, կարծես թե փուռը իրոք կալանավո-
րական վաշտ լիներ։

Բայց Գորկին Սեմենովի դաժանության վրա-

չեր զարմանում—նա արդեն բավականաշափ տեսել եր կյանքում։ Նրան ուրիշ բան եր ապշեցրել—բանվորների խոնարհությունը և նրանց պատրաստակամությունը՝ մինչև անգամ հիանալու Սեմենովի շահատենչությամբ։ Գորկին գործատերերի մասին այլ կերպ եր մտածում և այդ մասին՝ խոսում եր ընկերների հետ։ Ի՞նչպես յեղավ՝ մի անգամ Սեմենովին ականջ դրեց դրույցին։

—Ինչի՞ մասին ես դողուացնում, Հոռողոս։

Գորկին պատժվեց. առանց հերթափոխի մի շաբաթ խմոր եր հունցում։

Մական Դուզոսը կարողանում եր պաշտպանել մարդկային արժանապատվությունը. Սեմենովը համոզվեց, վոր իր մոտ ներքեռում, ներքնատրնը, կամի մարդ, վորին կոտրել նրան չի հաջողվի։

Մինչև անգամ աշխատանքի ժամանակ Գորկին գրքից չեր բաժանվում։ Նա տաշեղներից սարքել եր գրակալինման մի բան և գիրքը դնում եր նրա վրա։ Այս թույլ եր տալիս նրան կարդալ և միաժամանակ՝ դասավորել կընդելները կաղապարների վրա։

Մի անգամ անսպասելի կերպով մտնելով փուռը՝ Սեմենովը Գորկուն բռնեց լեզ Տոլստոյ կարդալիս։ Տերն ուզում եր գիրքը գցի վառարանը։

—Գիրքն այրել չի կարելի, —ասաց Գորկին, բռնելով Սեմենովի ձեռքը։

Այս այնքան ազդու ասվեց, վոր Սեմենովը վերադարձեց նրան գիրքը և լուս դուրս գնաց։

Մի ուրիշ անգամ, յերբ տերը ծաղրում եր առանձնապես լկտի կերպով, Գորկին հանգիստ կերպով բռնեց նրա ականջը և թափահարեց։ Սեմենովին այն-

պես եր սովորել բանվորների ստրկական հնագանդության, վոր նա ավելի շուտ շփոթվեց, քան բարկացավ։ Բայց Գորկին պաշտպանում եր վոչ միայն սեփական արժանապատվությունը—նա ձգտում եր պաշտպան կանգնել նաև իր ընկերներին։

Վառարանի վրայի Գորկու սնդուկում կար վոտանավորների մի պատառուտուն գրքույկ։ Սեմենովյան «կալանավորիկներին» Գորկին կարգում եր բանաստեղծի տողերը՝

«Ո՞վ մարդ, վորքան բարձր ե քո կոչումը»...

Գորկին ուզում եր, վոր այդ բարձր կոչման մասին բանվորները գոնե հիշեցնելին իրենց գործատիրոջը. վորձեց գործադուլ կազմակերպել, բայց անհաջող։

Հեղափոխականների հետ ունեցած ծանոթությունը նրան ոգնեց ազատվել Սեմենովի մոտ ծառայելուց։

Սնդրեյ Դերենկովը բուլկիարան բացեց՝ սրայեկամուտը պիտի գնար հեղափոխական նպատակներին։ Բուլկիարանին թխողի ողնական եր հարկավոր և ինարկե, Գորկին այդ բանի համար ամենահարմար մարդն եր։

Սեմենովի մոտից նա անցավ Դերենկովի մոտ։ Խմոր եր հունցում, հացը գցում եր փուռը և բուլկիյեր տանում ուսանողական սեղանատունը։ Իր զամբյուղի մեջ Գորկին հաճախ պահում եր հեղափոխական գրականություն, վորը՝ բուլկիների հետ միասին անհամարելի կերպով պիտի դներ ուսանողներից վորեն մեկի ձեռքը։

Դերենկովի բուլկիարանը հարևան եր ժանդարմական վարչությանը։ Կապույտ համազգեստներով ժան-

դարմներն անցնում եյին ցանկապատի վրայից և գաւլիս եյին բուլկու:

Դերենկովի հիմնարկը կասկածներ եր առաջաշնուռ:

—Կարդալ սկզբում ես,—հարցուփորձ եր անում Գորկուն քաղաքապահ վոստիկան Նիկիֆորիչը.—Որինակ, ի՞նչ դրբեր:

Նիկիֆորիչը հացթուխի ոգնականին հրավիրում եր իր բուդկան և խոսակցություն եր սկսում ուսանողների ու ժողովրդի թշնամիների մասին:

—Անտեսանելի թելը,—բացատրում եր Նիկիֆորիչը,—սարդի վոստայնի թելի պես գուրս և գալիս որտեց նորին կալսերական մեծության, թագավոր կայսր Ալեքսանդր Յերրորդի և այլն, նա անցնում եապարօնակը մինհստրների միջով, նորին ըարձր գերազանցություն նահանգապետի միջով և բոլոր պաշտոնականի, մինչև վերջին զինվորը: Այս թելով ամեն ինչ կապված ե, ամեն ինչ հյուսվածապատված ե: Նրանտեսանելի ամրությամբ ել պահվում ե առհավետ տիրոջ թագավորությունը... Հասկացմար:

Գորկին հասկանում եր: Նա ինքն արդեն ավելի և ավելի պարզ զգում եր այդ անտեսանելի թել հետաձտության և մատնության....

Ամբողջ կյանքը ցանցված եր այդ թելերով: Նրա ոգնությամբ կառավարությունն ընդհատակից դուրս եր կորզում հեղափոխականներին, բանտ եր նետում նրանց, տաժանակիր աշխատանքների յեր ուղարկում:

Անտեսանելի թելը ցանցում եր և մի քիչ ավելի թույլ մարդկանց՝ նրանց, ով տեսնում եր կյանքի անարդարությունները, բայց իր մեջ ուժ չեր գտնում:

պայքարի մտնելու: Ամեն մի դեռևս չկորացած մարդու շուրջը գատարկություն եր առաջանում: Նրանից դուրս գալը դժվար եր:

Այդ գատարկությունն աստիճանաբար սկսում եր զգալ նաև Գորկին:

Դերենկովի բուլկիանոցում կյանքն ավելի թեթև եր, քան Սեմեոնովի կրենդելանոցում, բայց այստեղ ել աշխատանքը խլում եր ամբողջ որը, հաճախ նաև գիշերվա մի մասը:

Գորկին հոգնած գալիս եր իր փոքրիկ սենյակը և, գրքին մոտեցնելով պղտոր-յերկնագույն ապակիով լամպը, սկսում եր կարգաբ: Գիշերային այդ ժամերին Գորկին ձեռք եր բերում ընդարձակ գիտելիքներ: Շուռ տված արկղի վրա—սա Գորկուն ծառայում եր սեղանի տեղ—Պուշկինի հետ միասին դրված եր Փիզիոլոգ Սեչենովի «Գլխի ուղեղի ռեֆլեքսները» աշխատությունը:

Հաճախ, ծածկելով գիրքը, նա յերազում եր այլ կյանքի մասին՝ խելացի և գրավիչ, վորը պետք ե գույություն ունենար վորեն տեղ:

Ցանկություն եր առաջանում վորեն մեկին հաղորդել այդ յերազանքները:

Տագնապով և հույսերով, արհամարհելով վտանգները, վորոնց ակնարկում եր Նիկիֆորիչը, Գորկին գնում եր նրանց մոտ, ով ասլրում եր հեղափոխության խոհերով:

Հնդիատակյա խմբակներում նրան հանդիպում եյին համակրանքով, բայց վերաբերվում ելին մի քիչ բարձրամտորեն՝ ինչպես հաճախ վերաբերվում են ինտելիգենտ մարդիկ ինքնուսին:

Գորկուն այդպես ել ներկայացնում ելին՝

—ինքնում... ժողովրդից:

Նըա վրա զարմանում ելին, բայց լուռմ ելին
անտարքեր, ինկ յերեմ ել ծաղրում ելին:

Գորկին յերեմն սկսում եր խոսել իր յերա-
գանքների մասին:

—Թողեք,—կարում ելին նրան:

Յեկ Գորկին փակվում եր իր մեջ:

Նա մի տեսրակ սարքեց, ուր գրքերի քաղվածք-
ների արանքներին մտցնում եր սեփական հեղինա-
կության վոտանավորներ: Գրում եր դժբախտ ընկերոջ՝
ապակի՝ գցող Անտոլիի մասին, գարնան ձյունի մասին,
վորը սև ցեխ դարձած հոսում ե փոք ներքնատունը,
նաև վոլգայի մասին, վորը սիրում եր: Այս տեսրակը
Գորկին խնամքով թագցնում եր բոլորից:

«ՄԻ ԴԵԳՐ ՄԱԿԱՐԻ ԿՅԱՆՔԻՑ»

Դուք, տիկին, գիտեք անկասկած,
վորես մեջոց ասամսացավի գեմ,
ինկ իմ ատամնացավը որտիս մեջ
եւ Այդ գարշելի ցավ եւ նրան
շատ լավ ոգնում ե կապարը այն
ատամի փոշով, զոր հնարել ե
բերտող Շվարցը:
Հենրիխ Հայնե

Նիժնիից նամակ յեկալ — մեռել ե տատը, Գորկու
միակ մոտիկ և թանկագին մարդն ամբողջ աշխար-
հում:

Աշուն եր, անվերջ անձրես եր գալիս, թվում եր,
թե այն անտեսանելի վոստայնը, վորի մասին խոսում

եր Նիկիֆորիչն իր բուդկայում, կարծես պատել եր
հիվանդ բնությանը:

Գորկին մտաբերում եր անցյալը, տատին, հրա-
շալի զրոսանքները դեպի անտառ, գրքերը — այս լավը
և պայծառն եր, ինկ բոլոր մնացածը ճնշում եր, ինչ-
պես այս յերկարատև աշունը:

Գիշերները Գորկու սենյակից վհատ ձայներ ելին
գալիս — ձանձրությոց նա սկսեց ջութակ նվագել սու-
վորել...

Այդ տարին շատ ինքնասպանություններ բերեց:
Մահից առաջ գրած գրության մեջ մի ուսանող գրում
եր «կանքից արագորեն հեռանալու մասին»:

Կյանքից արագորեն հեռանալու ձգտում ելին և
Գորկու մի քանի ընկերները: Ինքնասպանություն
գործեց Մուլիկանտսկին, մի ուսանող յերկար մազե-
րով և միշտ տիսուր դեմքով...

1887 թիվ դեկտեմբերի 14-ին, Ղազանի «Յօլժ-
սկի վեշտիկ» լրագրում լույս տեսավ մի տեղեկու-
թյուն.

«Դեկտեմբերի 12-ին, յերեկոյան ժամը 8-ին,
Պողոսունի փողոցում, Կազանկա գետի ափին, նի-
ժեգորոդյան ցեխային Ալեքսեյ Մաքսիմիչ Պեշկով
ատրճանակից կրակեց իր ձախ կողքին՝ իրեն կյան-
քից զրկելու դիտավորությամբ: Պեշկովը իսկույն ու-
ղարկվեց զեմսկի հիվանդանոցը, վորտեղ նրան բժշկա-
կան ոգնություն տալու ժամանակ, բժշկի կողմից
վերը համարված ե վտանգավոր Գտնված առմասակում
Պեշկովը խնդրում ե վոչ վոքի չմեղադրել իր մահվան
մեջ:

Այն մասին, թե ինչու «նիժեգորոդյան ցեխա-



Գորկին Կազմանում ապրած ժամանակ

յին Ալեքսեյ Մաքսիմիչ Պեշկովը կրակեց ատրճանակից իր ձախ կողքին», քառորդ դար հետո բացարձեց ինքը՝ Գորկին իր «Դեպք Մակարի կյանքից» պատմվածքում։ Այն միայն դիպված երեղել, բայց վողբերդական դիպված, վորը մի անգամ ել հիշեցրեց Գորկու անսահման ծանր կյանքի ուղու մասին։

Իր կյանքին վերջ տալու վերոշումն ընդունելով՝ Գորկին գնաց շուկա, այստեղ յերեք ոռոքով գնեց մի ծանր Տուլայի ատրճանակ։

Գիշերը Գորկին քաղաքից դուրս գնաց...
Նրան գտան ձյունի մեջ պառկած, գետի դառիվայրի

ցեղին և տարան հիլանդանոց, Նրա գրավանում հայտաբերեցին տարորինակ գրություն։

«Իմ մահվան մեջ ինդրում եմ մեղադրել գերմանական բանաստեղծ Հայնեյին, վորը հնարել եւ ատամնացավը սրտի մեջ։ Սրան կցում եմ իմ փաստաթուղթը, հատկապես սարքված այս գեպքի համար։ Խնդրում եմ իմ աճյունը կտրել և զննել թե ինչ սատանա յիր նստած իմ մեջ վերջին ժամանակները։

Կցած փաստաթղթից յերեսում ե, վոր յես Ա. Պեշկովն եմ, իսկ այս գրությունից, հուսով եմ, վոշինչ չի յերեսում։

Բժիշկը հայտարարեց, վոր յերեք որից հետո վերավորը կմեռնի։ Այս խոսքերը հասան Գորկու գիտակցությանը։

— Իսկ յես չեմ մեռնի, — ասաց նա։

Պրոֆեսորը բարկացավ։ Ըստ յերեսույթին, հիվանդի վարքը նրան անքաղաքավարի թվաց։ Գորկին չմեռավ։

Գորկու դանդաղ և ծանր ապաքինման որերին, հիվանդասենյակ յեկան նրա հին ընկերները՝ Սեմեոնովի կրենդիլանոցի բանվորները, Նրանցից նա լսեց հասարակ, սիրալիր, մարդկալին խոսքեր։ Յեվ Գորկին զգաց, վոր «սրտի ատամնացավը» հանդարտվեց և ապրել եռուում։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ

Նա վերագրձավ Դերենկովի բուլկիանոցը, բայց վոչ լերկար ժամանակով։

Այստեղ եր գալիս լերբեմն Միլսայիլ Անտոնովիչ

Ռոմասը: Դարբնի վորդի, նախկին յերկաթուղային բանվոր, հին հեղափոխական, արդեն տասը տարի ցարական աքսոր կրած, մի մարդ, վոր անսովոր ուժի և անհողողության անդորրության տեր մարդու տպավորություն եր թողնում:

Ռոմասը ուշադրություն դարձրեց հացթուխի ոգնականի վրա և հասկացավ, վոր Գորկուն պետք եռ ոգնել ապրելու:

Ռոմասը կանչեց Գորկուն իր մոտ՝ մերձվոլգյան Կրասնովիդովում գյուղը: Ռոմասն այստեղ ուներ մանրավաճառի կրպակ, վորը նա պահում եր, վորպեսողի, գյուղում ապրելով, հեղափոխական պրոպագնադ տանի գյուղացիների մեջ:

Գորկին գնաց Ռոմասի մոտ:

Կրասնովիդովում նա առաջին անգամ յերես առ յերես հանդիպեց գյուղացիներին: Յեկ Կրասնովիդովում ապրած ամեն մի որը պատում եր նրան ավելի ու ավելի ծանր զգացումով: Գորկու կարդացած շատ գրքերում գյուղացին պատկերվում եր, վորպես յերազող պարզասիրտ եյակ: Կրասնովիդովում Գորկին այլ բան տեսավ—կույր չարություն և գալիք ագահություն: Կոտրած կավե քը բերեանի համար յերեք ընտանիք կովում ելին ցցերով, կոտրեցին պառավի ձեռքը և ջարդեցին տղայի գլուխը: Յեկ այսպիսի տուրուգըմփոցներ պատահում ելին համարյա ամեն շաբաթ:

Կրասնովիդովոյի հարուստներն ատում եյին Ռոմասին և նրա կրպակը: Յերեկոները կրպակի մոտ բազմություն եր հավաքվում: Ռոմասի հասցեյին լսվում եյին չարամիտ բացականչություններ:

Գորկու գալուց քիչ հետո կուլակներն սկսեցին գործել:

Գյուղացի հզոտը Ռոմասի հետ բարեկամություն եր անում—նրան գտան վոլգայի ափին մեռած, գանգը ջարդված:

Իրեն՝ Ռոմասի վրա հրացան կրակեցին:

Հետո խրճիթում, վորտեղ ապրում եր Ռոմասը, կուլակները պայիթեցրին վառարանը՝ վառելափայտի մի կտորի մեջ վառող եյին լցրել: Վերջապես հրդեհեցին կրպակն եր խրճիթն ել: Կրպակը Գորկուն պատեց չարգախում: Նա մուշտակի մեջ փաթաթվելով, գուրս թռավ լուսամուտից:

Ռոմասի կրպակն ալրվեց: Գորկին հարկադրված եր ուրիշ ապաստարան վորոնել:

Նա թողեց Կրասնովիդովոն: Իր ընկեր Բարինովի հետ նա ուղևորվեց Վոլգայով ցած, դեպի Հաշտարխան: Յերկար լողում եյին յերբեմն գաղտնի, անտում, մարդատար շոգենավերով, յերբեմն նավաստի վարձվելով լաստանավերի վրա: Վերջապես հասան Կասպիականին: Այստեղ Գորկին առաջին անգամ ծով տեսավ և այստեղ յերեկվա հացթուխն ու խանութի գործակատարն սկսեց զբաղվել ձկնորսությամբ:

ԳԼՈՒԽ III

ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՊԱՀԱԿ

Կասպիականից վերադառնալուց հետո Գորկուն անբարեկամբույր և ոտարթվաց Ղազանը, Դերենկովի կրպակն արդեն չկար, անհայտացել եյին նաև հին ծանօթներից շատերը: Քաղաքում Գորկու համար

գործ չճարվեց։ Նա մտավ յերկաթուղալին հետ ընկած ֆոբրինկա կայարանը վորպես գիշերային պահակ։

Դեռևս վաղուց, մանկության որերին, նա յերազում եր դուքս պըծնել քաղաքից, ապրել վորսե անտառային պահակատան կամ մարդկանցից մոռացված կիսակայարանում։

Ենք ահա մանկական տխուր յերազանքը կատարվեց։ Բայց բանից դուքս լեկավ, վոր կյանքն այստեղ ել հալածում եր նրան։

Ամեն որ, յերեկոյան վեցից մինչև առավոտյան վեցը, Գորկին՝ մահակը ձեռին, ման եր գալիս պահստի շուրջը և պահպանում պարկերով ալյուրը։

Գորկուն հաջողվում եր ալյուրը պաշտպանել հարևան կազակային ստանիցաների գողերից։ Բայց միայն նրանք չեյին գողանում։ Գողանում եր ինքը՝ կայարանապետը, մի հսկա մարդ՝ խեցգետնի աշքերով և սկս մորուքով, վորին։ Աֆրիկան ելին անվանում։ Յերբ հարավից՝ Կասպիականից վագոնները Դոբրինկա եյին գալիս, Աֆրիկանը կոտրում եր այդ վագոնները—նրանք բեռնված եյին լինում պարսկական մետաքսով և արևելյան քաղցրեղնով։ Գողացածը վաճառվում եր և ձեռք բերած փողերով Աֆրիկանը սարքում եր վայրենի կերուխում, վորոնց մասնակցել հարկադրում եր և Գորկուն։ Բարեբախտաբար Գորկուն վիճակից կալարանում ծառայել միայն մի քանի ամիս։ Նրան ատեց Աֆրիկանի խոհարարուհին։ Նույնպես հսկա, ինչպես և իր տերը, ալդ կինը սպառնում եր՝

— Տանջելով հոգիդ կհանեմ։

Ենք Գորկին գիշերային հերթափոխությունից հետո, խոհարարուհու հրամանով, պետք և աշխատեր

Աֆրիկանի տանը՝ դռնապանի, վառարձն վառդղի և ձիապանի տեղ։

Գորկին ճանապարհի վարչությանը գանգատ գըրեց։ Հազիվ թե այստեղ քննեյին գիշերային պահակի տված գանգատը, ինչ-վոր խոհարարուհու մասին։ Բայց Գորկու մտքովն անցավ իր դիմումը շարադրել վոտանավորով։ Տաղոկությունից թառամող յերկաթուղացին պաշտոնական գաղաքը, ապրանքային կայանը՝ պարկեր ու բրեզինտներ պահպանելու։

Գավառական քաղաքն ապշեցրեց Գորկուն իր այլանդակ ու անմլտ գոյությամբ։

Քաղաքագլուխը հրավիրում եր հոգեորականությանը մաղթանք կատարել՝ ջրհորներից սատանաներին արտաքսելու համար, քաղաքային դպրոցի ուսուցիչը-շաբաթ որերը բաղնիքում ծեծում եր իր կնոջը։ Վոչ այդ մաղթանքները, վոչ ծեծերը Բորիսովգերսկում վոչ-վոքի չեյին վրդովում, վոչ-վոքի չեյին զարմացնում...»

«Պահապան» պատմվածքում Գորկին գրում եր Բորիսովգերսկի կանքի մասին։

«Եթերագելով ինչ-վոր մեծ սխրագործությունների մասին, կյանքի պայծառ ուրախությունների մասին՝ յես պահպանում եյի պարկերը, բրեղենտները, ասպարները, կոմերը և փայտը մոտիկ ստանիցաների կազակների հափշտակությունից։ Յես կարդում եյի Հայնեն ու Շեքսպիրը, իսկ գիշերները, հանկարծ մտաբերելով իրականությունը, վոր կամացուկ միտում եր

շուրջս, ժամերով նստում եյի կամ պառկում, վոչինչ
չհասկանալով, կարծես շշմած՝ գլխիս հասցրած՝ գա-
վազանի հարվածից:

Բորիսովկերսկի բերկաթուղում շատ ինտելիգենտ
մարդիկ եյին աշխատում՝ նախկին ուսանողներ, սե-
մինարիստներ, վիճակագիրներ, սպաներ: Սրանցից
վորանք համարվում եյին քաղաքականապես ռանքարե-
նույաց, յեղել եյին բանտերում և աքսորում:

Գորկին զայրույթով եր հաղորդում նրանց իր
դիտողությունները Բորիսովկերսկի բնակիչների մա-
սին: Ինտելիգենտները Գորկուն լուսմ եյին ծիծաղով՝
այդ բոլոր պատմությունները նրանց ուրախ անեկ-
դուտներ եյին թվում:

Այդ բանը Գորկուն զարմացնում եր: Ղազանում,
հեղափոխական խմբակներում, նա զգում եր, վոր ինչ
վոր գիծ բաժանում ե նրան ինտելիգենտներից: Այդ
ցավ եր պատճառում, բայց գենի այդ մարդիկ Գոր-
կին հարգանք եր տածում: Խսկ այստեղ, Բորիսովկե-
րում, նա ինտելիգենտների մեջ տեսավ միայն գա-
վառային: Գուեհկաբարո պաշտօնալաներ: Նրանցից մեկը
միայն Բաժենովը, լսելով Գորկուն՝ ասաց.

Վորքամն ծանր ե ալդ:

Նա ալս ասաց անկեղծորեն: Յեվ Գորկին հար-
գանք զգաց դեպի Բաժենովը:

Ինքը Գորկին, կարծես թե, խիստ հագեցած եր
մթին տպավորություններով: Նրան պատում եր ան-
ձանոթ չարություն և արհամարհանքի հորդումը գեպի
մարդիկ: Գրքերը, վոր նա կարդում եր իր ծանր մե-
նության մեջ, ասում եյին նրան, վոր կյանքի մեջ
կա վոչ միայն ապականվածն ու անմիտը, այլ և պայ-
ծառն ու բերկրալին:

Գորկին ամուր կերպով հավատում եր այս աշ-
խարհին, բայց կյանքը նրան նոր վիրավորանք և վիշտ
եր բերում:

Գորկուն Բորիսովկերսկից տեղափոխեցին Կրու-
տայա կաչարանը, վորպես կշուրդ:

Ստեղներում կորած այս կայարանում այնպես
եր սեղմվում սիրտը դատարկութիւն զգացումից, վոր
մարդ իրեն զգում եր ինչպես ողային զանգի տակ
դրված: Սուլում եյին սըվլիկները, նվում եյին մո-
ծակները, աղմկում եյին հազվագեղ գնացքները և այս
եր բոլորը, ինչով կյանքն այստեղ հիշեցնում եր իր
մասին: Բորիսովկերսկում գոնե գրքեր կային և պար-
կերի ու բրեգենտների հետ քարշ գալուց հետո, Գոր-
կին առանձնանում եր Հայնեյի և Շեքսպիրի հետ:
Խսկ այստեղ վոչինչ չկար, բացի արդեն կարդացած
«Նիվա»-ի համարներից:

Մի անգամ Գորկին Կրուտայա կայարանում տե-
ղեկություն ստացավ, վոր Բորիսովկերսկի նրա միակ
բարեկամ Բաժենովը գնացել ե գերեզմանատուն և
ինքնասպանություն գործեր: Մահից առաջ գրած տոմ-
սում նա խնդրել ե իր գրքերն ուղարկել Կրուտայա
«Մաքսիմիչին»....

Գորկուն շատ անգամ ե պատահել վկա լինել
թե ինչպես կյանքից հեռանում եյին հենց այն մար-
դիկ, վորոնք Գորկուն ուրիշներից լավ եյին թվում:

* *

Գորկու 22-րդ տարին եր գնում. պետք ե կոչ-
վեր զինվորական ծառայության: Կրուտայան նա թո-

ղեց և վոտքով ճանապարհ ընկավ դեպի ծննդավայրը:
Գարզն եր, բայց Գորկին Նիժնի ընկնելու հույս
ուներ միայն աշնանը

ԳԼՈՒԽ IV

«ԾԵՐ ԿԱՂՆՈՒ ՅԵՐԳԸ»

Նա գնում եր Դոնի մարզով, անցավ Տամբովի
և Ռյազանի կողմերով, ալցելում եր ստանիցաները,
գյուղերը, վանքերը՝ հաց ճարելով անցորդ մարդու
պատահական աշխատանքով:

Այս Գորկու առաջին ճանապարհորդությունն եր
մուսաստանում:

Վերջապես, սեպտեմբերին Գորկին ընկավ Մոսկվա:

Նա շտապեց Խամովնիկի. այստեղ կար մի հին
տերունական տուն և այդ տանն ապրում եր Լեվ
Տոլստոյը:

Գորկին Տոլստոյին տանը չգտավ, Սոֆիա Անդրեևնան մեծ գրողի կինը, անծանոթին տարավ խոռ
հանոց և նրան հյուրասիրեց մի բաժակ սուրճով և
քուլկով: Կոմնուէին ընդումին նկատեց, վոր Լեվ Նիկոլաևիչի մոտ բազմաթիվ մութ դատարկապորտներ են
գալիս: Գորկին քաղաքավարությամբ համաձայնեց
սրա հետ:

Գորկին այսուհետև պիտի գնար Նիժնի: Ահա թե
ինչպես ե հիշում Գորկին այդ ճանապարհորդությունը.
«Սեպտեմբերի վերջն եր, աշնանային անձրևներն

առատությամբ ցողում ելին գետինը, փշաքաղված
դաշտերում թափառում եր սառն հողմը, անտառները
պայծառորեն նախշված ելին, այդ տարգա շատ գեղեցիկ ժամանակն ե, բայց մի քիչ անհարմար՝ վոտքով
ճանապարհորդելու համար, մանավանդ մաշված կունկներով:

Մոսկվա—Ապրանքալին կալարանում լես համոզեցի ուղեկցողին, վոր ինձ թողնի անասունների վագոնը. սրանով ութ չերեղեղական յեզ գնում ելին Նիժնիի սպանդանոցը: Նրանցից հինգն իրենց միանգամացն հանգիստ ելին պահում, բայց մյուսներին, ինչինչ պատճառներով, յես դուրս չեկա և նրանք ամբողջ ճանապարհին աշխատում ելին ինձ զանազան անախորժություններ պատճառել. յերբ այդ նրանց հաջողվում եր, յեզները՝ բավարպված փնչացնում և բառաչում ելին:

Իսկ ուղեկցողը՝ ծուռ վոտքերով մարդուկ, փոքրիկ, հարբած, կրծած բեխերով, ինձ՝ վրա դրեց իմ ուղեկիցներին կերակրելու պարտականությունը. կանգառման ժամանակ նա դռնով ներս եր կոխում մեխտիս խոտ և հրամայում:

—Հյուրասիրիք:

Եեզների հետ յես անցկացրի յերեսունչորս ժամ, միամտորեն կարծելով, վոր իմ կյանքում յեղբեք այլես չեմ հանդիպի ավելի կոպիտ անասունների, քան սրանքքա:

Գորկին Նիժնի լեռ գնում գրական բեռով: Նրա մաղախում կար մի տեսրակ վոտանավորներ և պոեմ «Ծեր կաղնու յերգը» անունով:

Հեղինակը՝ նրանով հիացած եր և հաստատ հա-

վատում եր, վոր յեթե տպագրվի՝ նա նկատելի հետք
կթողնի մարդկային կյանքում յերկրի վրա:

Գորկուն զինվոր չտարան:

— Ծակոտկեն և թոքը, ամբողջովին ծակծկված
ե, — հայտնեց զինվորական բժիշկը:

Գետք և տեղ գտնել: Խոհարարի նախկին աշա-
կերտը, կրենդելագործը, թատրոնի ստատիստը և յեր-
կաթուղային պահապանը վարձվեց սևագործ բանվոր
գարեջրի պահեստում և բավարական կվասի ցրող սայ-
լապան....

Անցորդները շուռ ելին գալիս նրան նայելու,
Նա այնպես եր հագնվում՝ ոտքերային բանդիտի լայ-
նագույն շլյապա, խոհարարի սպիտակ կուրտկա և
քաղաքապահ վոստիկանի կապույտ շալվար:

Գորկու վրա ուշադրություն դարձրեց նաև վոս-
տիկանությունը: Բայց նրան զբաղեցնողը բավարա-
կան կվաս ցրողի տարրորինակ հագուստը չեր...

Այն ժամանակ Նիմնիում ապրում ելին շատ հե-
ղափոխականներ: Երանց մեջ կային Գորկու Ղաղանի
հին ծանոթներից, վորոնք վտարված ելին Նիմնի
Ղաղանի համալսարանի խոռվություններից հետո:

Խոհարարի կուրտկով և քաղաքապահի շալվարով
մարդն սկսեց հաճախել անլեզաւ խմբակները:

Գորկին տեղալորվեց մի բնակարանում Ղաղանից
վտարված յերկու քաղաքականների հետ, մեկը՝ նախ-
կին ուսուցիչ Զեկինը և մըուսը՝ նախկին ուսանող
Սոմովը:

Այս հանգամանքը հատուկ կասկած առաջացրեց
իշխանությունների մեջը:

Այն տան շուրջը, վորտեղ ապրում ելին Գորկին

և իր ընկերները, հետախույզներ յերկացին: Նիմնիու-
թյան մեջ Ալեքսեյ Պետրովի մասին զանազան
քաղաքներ հաբցումներ ուղարկեցին:

Շուտով իշխանությունը Պետերբուրգից հրաման
ստացավ ձերբակալելու Սոմովին: Սակայն վոստիկա-
նությունը նրան արգեն չփառվ, Սոմովն անհայտացել
եր: Սկսեցին հարցուփորձ անել Գորկուն:

«Պետրովն այդ հարցաքննության ժամանակ լիրին
պահում եր վերին աստիճանի հանդուգն, նույնիկ
անպատճառ», ժանդարմները զեկուցեցին իշխանու-
թյանը:

Գորկուն ձերբակալեցին և զրին Նիմնիության
բանտը՝ նրա չորս կլոր աշտարակներից մեկը:

— Դուք ինչ հեղափոխական եք, — մոթմաթալով
ասաց նրան հարցաքննության ժամանակ ժանդար-
մական գեներալը: — Դուք այստեղ գրում եք վոտանա-
վորներ և առհասարակ...Այ, վոր ձեղ բաց թողնեմ,
ձեր ձեռագրերը ցուց տվեք Կորունկոյին: Ծանթ
եք նրա հետ:

Ցեղ հրաժեշտի ժամանակ ավելացրեց՝

— Ձեզ սովորել ե պետք, թեկուզ գրել, բայց վոչ
այս....

«Այսը» կնշանակեր հեղափոխական աշխատանք:
Գեներալը չեր նախատեսում, վոր մի քանի տարուց
հետո հենց Գորկու գրածները կդառնան ժանդարմնե-
րի մեծագույն տագնապի առարկա:

Գորկին բանտում նստեց մի ամիս: Նրան թո-
ղին, բայց նա արդեն «անբարեհույս» եր, մի մարդ,
վոր գտնվում է վոստիկանության անդադար հսկողու-
թյան տակ:

Հեղափոխական պայքարից Գորկին չհրաժարվեց:
Սակայն ժանդարմական գեներալի մի խորհրդին հետևեց. նա գնաց Կորունկոյի մոտ:

Այդ տարիները Կորունկոն ապրում եր Նիժնինում: Նրա անունը հանրածանոթ եր:

Իստելիգենցիան տարված եր նրա պատմվածքների և վեպիկների ընթերցանությամբ, նահանգապետները և վաճառականները վախենում եյին նրա մերկացնող լրագրային հոգվածներից:

Ժողովրդի մեջ տարածված եր տարորինակ լեգենդ, թե իբր Կորունկոն ինչ-վոր մեկի կողմից ուղարկված և արտասահմանից՝ ցարական կառավարության դեմ պայքարելու համար:

Մոայլ ու անձոռնի Գորկին Կորունկոյի առաջդպեց «Ծեր կաղնու յերգը», այն, ինչ իրեն այնքան դուր եր գալիս:

Կորունկոն թերթեց հաստ ձեռագիրը...»

— Այսեղ զրված ե «զիզգաց», այս, ինչպես յերկում ե, վրիպակ ե, ալսպիսի խոսք չկա, կա զիզգաց...

Գորկին իրեն շնորհապարտ զգաց դեպի անվանի գրողը նրա համար, վոր նա խնայեց սկսնակ գրողի ինքնասիրությունը. ավագ, «զիզգաց»-ը վրիպակ չեր:

Կորունկոն սկսեց խոսել այն մասին, վոր Գորկու գրվածքների մեջ պակասում և մեղմությունը:

Պահմում այսպիսի տեղ կար՝ «Я в мир привешел, чтоб не соглашаться. Раз это так»*)...»

*) «Յես աշխարհ եմ յեկեւ գորակոզի չհամաձայնեմ: Թանիք վոր այդ այդպիս ես...»

— «раз так», անպետք ե,—նկատեց Կորունկոն: — Այս անպատշաճ և տգեղ դարձվածք ե: Բայ տակ, բայ էտակ, դուք լսում եք:

Գորկին առաջին անգամն եր լսում:

Մի քանի որից հետո Կորունկոն յետ ուղարկեց ձեռագիրը:

Շապիկի վրա նա գրել եր՝

«Այս «Յերգ»-ով դժվար ե դատել ձեր ընդունակությունների մասին, բայց, թվում ե, դուք ունեք այդ: Դրեցեք վորեւ բան, վոր դուք կրել եք և ցույց տվեր ինձ: Յես վոտանավոր գնահատող չեմ, ձերը ինձ անհասկանալի յերեաց, թեև կան առանձին տողեր՝ ուժեղ և պայծառաւ:»

Զդրել վհչ վոտանավոր, վհչ արձակ—ալսպես վորոշեց սրանից հետո Գորկին:

Վորոշումը լուրջ եր: Նա նիժնիում յերկու տարի ապրեց և այդ ժամանակի ընթացքում վոչ մի անգամ գրիչ չկերցրեց ձեռքը:

Բայց պետք եր ապրել ինչ-վոր ուրիշ բանով, բացի ներքնատանը գարեջրի տակառներ գլորելուց...

Իսկ ամեն ինչ այնպիս եր գասավորվում, վոր այստեղ ել՝ նիժնիում, Գորկին սկսում եր զգալ արդեն ծանոթ գատարկությունը, վորը հիշեցնում եր Կորուտայա կայարանի տրաում կյանքի որերի մասին...

Նա այցելում եր իստելիգենտական խմբակները: Նրանց մասնակցողների մեջ նա գտնում եր, վոր լավ մարդիկ շատ կան: Բայց Գորկին ավելի և ավելի պարզ տեսնում եր, վոր այդ լավ մարդիկն ել կտրված են ժողովրդից և կյանքից: Նրանք գրքեր եյին կարդում, վիճում ելին հեշտ ու ճարպիկ, և միայն...

իսկ Գորկին ուրիշ բան եր վորոնում. նա վորո-
նում եր մեծ կյանք, մեծ զգացումներ...

Նրան թվում եր, վոր լավ կլիներ գնար վորեն
տեղ, շատ հեռու: Սկսեց հոգալ կամավոր մտնելու
տեղադրական խմբի մեջ—մի ծանոթ սպա խոստացավ
նրան վերցնել իր հետ Պամիր:

Բայց Գորկուն խմբի մեջ չվերցրին—չե՛ վոր նա
այժմ «անբարենույս» եր:

Մի անգամ ամառային գիշերը Գորկին նստած
եր Ոտկոսի վրա. այստեղից յերեւմ եր Վոլգան և
գետի մյուս կողմի մարդագետինների մշուշոտ քողը:

Նրա կողքին նստարանին կամացուկ նստեց մի
գանգուր մորուքով մարդ: Այդ Կորունկոն եր:

—Հը, զբաւմ եք, —հարցը նա:

—Վաչ:

—Ափսոս: Յես լուրջ յենթագրում եմ, վոր դուք
ընդունակություններ ունեք: Վատ եք տրամադրված,
պարոն...

Այդ ձիշտ եր— Գորկին վատ եր տրամադրված:
Իր գրական ձիբքին այժմ նա չեր հավատում,
ինտելիգենտների գրալին վեճերը նրան հոգսեցնում
եյին և թվում եյին վոչ պիտանի: Յեվ, վերջապես,
նա սիրեց, սիրեց ուժեղ առաջին անգամ, բայց նա,
վորին սիրում եր, ամուսնացած եր և չեր վստահում
նրա պատճառով ամուսնուն թողնել...

Յեվ Գորկին թողեց նիժնին, ինչպես յերկու տա-
րի առաջ թողել եր յերկաթուղու խուլ կայարանը, և
նորից գնաց թափառելու Ռուսիայում:

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

«Այս մի վերին աստվածանի
կասկածելի մարդ ե, կարդա-
ցած, գրչն լավ ակրապե-
տող, նա անցել ե համարյա-
ամբողջ Ռուսաստանը (մեծ
մասմբ վոտով):
Վասիկանական զործից՝
Գորկու մասին

Գորկին գնում եր Վոլգայի ափով: Յարիցինում
նա բաժանվեց՝ գետից և առաջ շարժվեց տափաստա-
նով:

Ռոստովում նա կանգ առավ: Ռոստովի կեղտու
նավահանգստում աշխատանք ձարվեց՝ թյուրքական
շոգենավից հում կաշվի հակեր և ծիսախոտի արկղներ
կրելու: Սշխատել հարկադրված եր նույնքան, վորքան
Սեմենովի մոտ՝ որական 15 ժամ: Բայց իր աշխա-
տանքի համար Գորկին ստանում եր որական հիսուն
կոպեկ:

Դա չլսված հարստություն եր: Սեմենովը նրան
տասը կոպեկ եր վճարում:

Սշխատանքի կարճատև ընդհատումների ժամա-
նակ, Գորկին իր նոր ընկերների հետ շատապում եր
ծովագին ձեռաց շինած խոհանոցները, վորոնցից փո-
րոտիքի սուր հոտ եր փչում: Ավելի լավ որերը գնում
եր «Եյշուպա» հանելուկային ցուցանակ ունեցող պան-
դոկը, վորտեղ լցվում եյին բերնակիրներ և կառա-
պաններ:

Գորկին ընակվում եր նավահանգստի մոտ մի
ներքնատան, վորտեղ ինչ վոր պառավ հինդ կոպեկով
գիշերելու անկյուն եր տալիս նրան:

Ծոստովից Գորկին նորից առաջ շարժվեց: Նա
յեղավ Ուկրայնայում, այստեղից ընկավ Բեսսարաբիա
և հասավ Դանուբի ափերին—ուղիղ Ծումինիայի սահ-
մաններին:

Մի քանի տարուց հետո ժանդարմական իշխա-
նությունները, Պետերբուրգ տված զեկուցի մեջ, Գոր-
կու մասին հաղորդում եյին,

«Պեշկովը, վոտքով անցնելով Նիժնի Նովգորո-
դից Բեսսարաբիա, ուղում եր այստեղից անցնել Ծու-
մինիա, վորպեսզի հետո անցնի Ֆրանսիա, բայց նրան
չթողին սահմանն անցնել և ուղերդվեց Ղրիմ և Անդր-
կովկաս»:

Այս վերադարձի ճանապարհը՝ Բեսսարաբիայից
Անդրկովկաս—մի քանի հազար վերստ հսկայական ճա-
նապարհ—Գորկին դնում եր մեծ մասամբ Սև ծո-
վի ափերով:

Նա թափառում եր յերկար՝ մոտ յերկու տարի:
Գնում եր գյուղից գյուղ, առւրից առւր, ճանաչում եր
նոր անծանոթ յերկներ՝ Մոլգավիա և Ղրիմ, Կուբան
ու Վրաստան:

Գորկին տեսնում եր ծով, նավահանգիստաներ,
նավեր, ձիերի յերամակներ, խարույկներ տափաստա-
նում, հեռավոր սարեր, գնչուների թափառախմբեր,
մենակյացներ, մաքսանենգներ, ձկնորսներ, մուրաց-
կաններ, ուխտավորներ...

Տափաստանում նրան վրա յեն հասնում ամպրոպ-
ներ, կալծակները շլացնում եյին աչքերը, կերչի նե-

զուցում նա քիչ եր մնում խեղպի: Ռազմավիրական
ճանապարհին նա լնկավ ձյունի բուքի մեջ...

Յեվ համարյա միշտ, որն որի վրա, նրան հետա-
մտում եր քաղցը:

Նա գնում եր հարուստ յերկրով, բայց հաճախ
նրա մաղախում վոչ մի կտոր հաց չեր լինում. այս
վիրապորական եր թվում և, գլխավորապես, խանգա-
րում եր մտածել:

Լավ եր Արխաղիայում, Գորկին այստեղ կերա-
կրվում եր հարբեցնող մեղրով: Այս մեղրը մեղուները
հավաքում են գափնիից և ազալիսից, իսկ նա
նում եր փչակներից և լցնում եր իր ամանը...

Բայց ճամբորդական ճանը որերին հարկադրված
եր լինում ձեռք զարկել ամեն տեսակ աշխատանքի:
Գորկին՝ բատրակություն եր անում կովկասի չերքեղա-
կան առւներում և Ուկրայնավի հրեական գաղութ-
ներում՝ խոհարարություն եր անում, աշխատում
եր աղահանքերում և խճուղիները կառուցման վրա,
ձկնորսական ձեռնարկություններում ոդնում եր ուռ-
կանը քաշելու—սրա համար ընթրիք եր ստանում:

Մի անգամ հարկադրված յեղավ համաձայներ
վոր աղոթքներ կարդա հանգուցյալի վրա—տափաս-
տանի գյուղում վոչ մի ուրիշ աշխատանք չճարվեց:
Յեվ նա ամբողջ գիշերն աղոթք եր կարդում, իսկ ա-
ռավոտյան, վերցնելով մի կտոր հաց և հրաժարվելով
փողից՝ հեռացավ:

Ինչի՞ համար եր գնում: Այս մասին հաճախ
ինքն ել եր մտածում:

Հրաշալի յեր հայացքով հետևել թյուրքական
ֆելուգայի դանդաղ ընթացքին ծովի վրա, ականջ

դնել՝ ինչպես են խշացացնում մկները տափաստանում, տեսնել՝ ինչպես են պտտվում տերեները լեռնային գետի փրփուրի մեջ, ճանաչել կտցահարի կտկողը բուխնու վրա...

Բայց ավելի հրաշալի, ավելի՝ կարևոր եր քայլել բոլոր ճանապահներով, մարդկանց հանդիպելու և նրանց հասկանալու համար:

Նիժնից հեռանալուց առաջ Գորկին կարդաց Պոմյալովսկուն՝ մի հեղինակ, վորին նա առանձնապես սիրեց: Պոմյալովսկին գրում եր այն մասին, վոր պետք ե ուսումնասիրեկ կյանքի բոլոր մասնակիցներին՝ խանութպաններին, ձուրացկաններին, հրշեցներին, թափառաշրջեկներին...

Գորկին լարված դիտում եր այս բոլոր մարդկանց, ուսումնասիրում եր ժողովուրդը, վորի մասին այնքան շատ խոսում եին և վորին այնքան քիչ եւ յին ճանաչում ինտելիգենտներից վոմանք՝ Գորկու դաստիարակները...

Բայց նա հաճախ դիտողից դառնում եր դիպվածների մասնակից, մանավանդ, յերբ այդ դիպվածները մեջ ցավ, ցասում և վրդովմունք ելին առաջացնում:

Ուկրայնական՝ մի գյուղում պատահմամբ նա ականատես յեղավ այսպես կոչված «ՎԵՎՈԴ»-ին, կնոջ նողկալի խոշտանգման, վորը մեղադրվում եր ամուսնուն դավաճանելու մեջ:

Փոքրիկ, բոլորովին մերկ կնոջը, վոր համարյա աղջիկ եր, կապեցին սայլի առաջքին՝ ձիու կողքին՝ Արյունալի աշքերով մի շեկ գյուղացի՝ այդ կնոջ առուսիսը, բարձրացավ սայլին և ճանապարհ ընկապ,

տեղալով մտրակի հարվածներ՝ մեկ ձիու մեջքին, մեկ փոքրիկ կնոջ մարմնին: Իսկ սայլի հետեւից աղմուկով և վորոնցով վրայեր տալիս ամբոխը...

Այս բանը գյուղացիների համար գաղանային դատաստան չեր, այլ սովորույթ, կենցաղային մի գեպք, ուրիշ վոչինչ. շեկ գյուղացու վարմունքը վոչվոք գաղանային չեր համարում և վոչվոքի մտքով շեր անցնում պաշտպան կանգնել խոշտանգվող կնոջը:

Այս գեպքը հետագայում Գորկին նկարագրել ե «ՎԵՎՈԴ» պատմվածքում:

«—Այս բանը յես տեսել եմ 1891 թվին, հուլիսի 15-ին, Խերսոնի նահանգի, Նիկոլայևսկի գավառի Կանդիբովկա գյուղում» — այսպես ե վերջացրել Գորկին իր պատմվածքը:

Նա չի կամեցել հիշատակել այն մասին, վոր գունի մի մարդ ե գտնվել, վոր գուրս ե յեկել պաշտպանելու դժբախտ կնոջը: Այդ նա ինքն եր՝ պատմվածքի հեղինակ Գորկին:

Նա հարձակվեց ամբոխի վրա: Այն ժամանակ կանդիբովցիների ամբողջ ցասումը դարձավ անձանոթ ճանապարհորդի գեմ: Նրան ավելի դաժան ծեծեցին, քան կնոջը, գուրս տարան գյուղից և զցեցին ուղեմերձ ցեխի մեջ:

Գորկին ընկած եր առանց գիտակցության:

Գյուղական տոնավաճառից վերադարձող յերգեհոն ածողը թփերի մեջ տեսավ արյունաշաղախ մարդուն, վերցրեց նրան և տարավ Նիկոլայև հիվանդանոց: Այստեղ Գորկին յերկար պառկեց: Կանդիբովկայում նրան սաստիկ ելին ծեծել:

Կանդիբովկայի վողբերգական դեպքին Գորկին
պատահական վկա դարձավ: Բայց հաճախ, թափառում
ների ժամանակ, նա միանդամբ փոխում եր իր մարշ-
րուար, զնում եր գյուղական ճանապարհներով, վոր-
պես անձամբ տեսնի այն, ինչով այդ տարիներին
ապրում եր ժողովուրդը:

Կուբանի ստանիցաներում նա իմացավ, վոր Մայ-
կով քաղաքում ծագել ե «ժանտախտային բունու»:
Ժողովուրդը զբովիել ե ցարական պաշտոնյաների՝
յեղջուրավոր անասունների ժանտախտի դեմ ձեռնար-
կած անմիտ միջոցառումներից, և ծեծել ե պետական ա-
նասնաբուժներին:

Իշխանությունը զորք ե կանչել, կազակները կրա-
կել են գյուղացիների բազմության վրա: Շատերը
ուղանվել են:

Գորկին շտապեց Մայկով:

Նա այստեղ տեսավ լացող ալրիներ, վախեցած
բնակիչներ և փողոցներում լկութեն անցուդարձ ա-
նող կազակներ:

Տարորինակ անձանոթին իսկույն նկատեցին:
Գորկուն ձերբակալեցին և զորանոց նստեցրին—քո-
ղաքային բանտում այլևս տեղ չկար ձերբակալվածնե-
րի համար:

Հարցաքննության ժամանակ բեխավոր ժան-
դարմական գնդապետն ուղում եր իմանալ՝ թե ինչու
Գորկին յեկել ե Մայկով այս տագնապալի որերին:
— Ուզում եմ ճանաչել Ռուսաստանը, — կարճ պա-
տասխանեց Գորկին:

Գնդապետը բարկությամբ հայնոյեց՝

— Այս Ռուսաստան չե, այլ խողություն ե:

Զերբակալված մեշտան Պեղկովի մոտ ամեն ինչ
կասկածելի յեր Ռուսաստանում նա թափառում եր
առանց վորոշ զբաղմունքի, նրա մաղախում հայտնա-
բերեցին գրքեր և մինչեւ անգամ վոտանափորների
տետրակ, հարցաքննությանը նա պատասխանում եր
խիզախորեն՝ նայելով իշխանավորների աչքերին:

Բայց ձերբակալվածի դեմ վոչ մի ուղակի հան-
ցանչան չկար: Զորանոցում նրան մի քանի որ պա-
հեցին և արձակեցին:

Մայկովի զորանոցը յերկրորդ բանտն եր Գոր-
կու կենսագրության մեջ:

ԳԼՈՒԽ VI

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄՎԱԾՔԸ

Ռուսաստանի հսրավորմ կատարված իր յերկար
ճանապարհորդությունը Գորկին վերջացրեց Կովկա-
սում - Թիֆլիսում:

Այսուեղ ել նրա վիճակը ծանը եր, շարունակ նույն
ծանոթ կարիքը, ներքնատան կյանքը, ընդհաբուժմները
վոստիկանության հետ, ծանը աշխատանքը... Այսուա-
մինայնիվ սա լավ ժամանակ եր, թերեւ, ամենալավ
ժամանակ՝ յերիտասարդ Գորկու կյանքում:

Թիֆլիսում Գորկին գտավ նոր մարդիկ և նոր
բարեկամություն:

Նա ծառայության մտավ յերկաթուղային ար-
ևստանոցները և արագ կերպով մտերմացավ հեղա-
փոխականորեն տրամադրված բանվորների և ուսա-
նողների հետ: Գորկին նրանց մեջ տեսնում եր վոչ
թե ամբարտավան գաստիարակներ, այլ հասարակ և
լավ ընկերներ:

Նրանց հետ միասին նա տանում եր հեղաշղափոխական պրոպագանդը բանվորների մեջ՝ զլիավորապես յերկաթուղալինների։ Ապրում եր, անդադար սպասելով «փայլուն կոճակների»—ժանդարմների այցելության։

Յերբեմն Գորկուն պատում եր նորից թափառելու ցանկությունը, Մի ժամանակ նա ուզում եր գառնալ թափառաշրջիկ դերասան—մանդալ Ռուսաստանում մաղախը շաղակին և գլուղերում տալ պարզ ներկայացումներ։ Գորկուն մինչև անդամ հաջողվեց հավաքել փոքրիկ թատերախումբ։

Բայց Գորկին թափառաշրջիկ դերասան չդարձավ։ Թիֆլիսում նա հանդիպեց մի մարդու, —վորը կուհեց Գորկու իսկական կոչումը։

Այդ՝ Ալեքսանդր Մեֆոդեիչ Կալյուժնին եր, «Նարոդնայա վոլյա» հեղափոխական կաղմակերպության մասնակից, վեց տարի ցարական տաժանք կրած Կալյուժնին պատկանում եր այն մարդկանց շարքին, վորոնք, թերես, ունեն ամենահազվագյուտ տաղանդը—մարդկայնության տաղանդը։

Նա կարողանում եր գրավել մարդկանց, կարողանում եր լսելնրանց և հասկանալ կարողանում եր գտնել մարդկանց մեջ լավագույնը և նրանց իսկ հարկադրել սիրելու այդ լավագույնը…

Առաջին հանդիպումների ժամանակ, Գորկին պատմում եր Բեսարաբիակի և Վոլգայի մասին, ճանապարհորդական արկածների և իրեն մասին։ Կալյուժնին լուս հայում եր խոսակցին։ Կալյուժնու աշխում նա միայն ջանել տղա, աննպատակ թափառաշրջիկ, ուժեղ մարդ, տիսուր դեմքով զվարճարան չեր։

Գորկու պատմածների մեջ Կալյուժնին գտավ մեծ ձիրք և մեծ սիրությունը կատահական ծանոթությունը փոխվեց խոր, իսկական մարդկային բարեկամության։ Գորկու ապագան Կալյուժնին տեսնում եր գըականության մեջ։

—Գրեցէք այդ բոլորի մասին,— համառորեն կը կում եր նա, հրապուրված իր նոր ընկերող պատմածներով։

Գորկին գրում եր, բայց վոչ այն, ինչ սպասում եր նրանից Կալյուժնին։

Գորկին արդեն կարողացել եր իր հիշողության մեջ գիղել անսպառ հարստություն։ Նա մարդկանց հետ ապրել եր ներքնատներում, արհեստանոցներում, նավասենյակներում, գյուղացիական խճիթներում, քաղքենիների տնակներում, սրահներում, պահակատներում, գիտեր աշխատանքը՝ հնուտիավաճախի, խոհարարի աշկերտի, սրբապատկեր նկարողի, կրենդելագործի, բեռնողի, ցրիչի, յերկաթուղայինի, նա տեսել եր յերկիրը, ինչպես միայն վոտով ման իեկողը կարող ետեսնել—առվակից՝ առվակ, խարույկից՝ խարույկ…

Յեվ թվում ե, թե՛ պետք է գրել ահա այս մասին, ինչ ինքը տեսել և զգացել ե։ Բայց յերբ Գորկին սկսում եր գրել, այդ բոլոր հարստությունը, չգիտես ինչու, աղոտանում եր և միտն եյին զալիս նոր կարգացած գրքի տողերը։ Յեվ Գորկին գրում եր ուրիշի խոսքերը, նմանվում եր Բայրոնի պոեմներին կամ իտալական բանաստեղծ Լեոպարդի վոտանալորներին։ Ստացվում եր ինչ վոր բան՝ բարձրագոչ, բայց կոշտ։

Կալվուժնին այդ հասկանում եր:

—Գրեցեք միայն այն, ինչ ինքներդ եք տեսել—

Ներշնչում եր նա Գորկուն:

Պատահեց, վոր մտաբերելով իր Բեսսարաբիակի թափառումների մասին, Գորկին պատմեց Ռադայի և Լոյկո Զարարի լեզենդը, վորը նա լսել եր գնչուների իջևանում ծեր յերամակապան Մակար Չուղբայից:

Այդ լեզենդը հրապուրեց լսողներին:

Յեկ Գորկին վորոշեց պատմվածք գրել իր հանգիպման մասին ծեր գնչույի հետ:

Կալվուժնին պատմվածքը տարավ Թիֆլիսի խոռոշութեագիր «Կավկազի» խմբագրության:

Պատմվածքը գուր յեկավ: Ձեռագրում մի բան միայն պակասում եր—ստորագրություն: Հեղինակը, խմբագրատանը նստած, հնարեց այն.

—Գորկի..

Յեկ 1892 թվի սեպտեմբերին լույս տեսավ «Մակար Չուղբան»— Գորկու առաջին պատմվածքը:

Ուշ աշնանը Գորկին յետ ուղերձեց դեպի հայրենիք— Նիժնի:

Թիֆլիսից նա իր հետ ամբողջ կյանքի համար հիշողություն եր տանում Կալվուժնու մասին, մի մարդու, վորն առաջինը հայտնաբերեց Գորկու մեջ գրողին:

Գլուխո VII

ԻՅԵԳՈՒԴԻՒԼ ԽԼԱՄԻԴԱ

Գորկին մենակ չեր վերադառնում. Ոլգան, այն կինը, վորին նա սիրեց Նիժնիում և վորի հիշատակը նրա համար չեր աղոտացել յերկարամեկ թափառում՝ ների ընթացքում, պարզվեց, վոր Թիֆլիսումն եւ

Պատահաբար իմանալով այդ մասին, Գորկին ուշաթափեց—առաջին անգամ կյանքում:

Ոլգան թողել եր ամուսնուն, համատեղ կյանքի համար այժմ խոչընդուռ չկար: Ոլգան Գորկու հետ գնաց Նիժնի:

Նրանք տեղափորվեցին հարբեցող տերտերի այգունին բաղանիքում: Յեկավ ձմեռը, բաղանիքում խիստ ցուրտ եր, իսկ յերբ վառարանը վառվում եր, ավելների և ոճառի անտանելի հոտը լցնում եր ամբողջ բնակարանը:

Գորկին գրագրի պաշտոնով ծառայում եր Նիժնի նովգորոդի հայտնի փաստաբան և հասարակական գործիչ Լանինի մոտ: Նա արտագրում եր խնդիրներ և վերադատության գանգատներ, Լանինի գործերով զնում եր դատարան, իսկ զիշերները բաղանիքի նախասենյակում նստած—այստեղ Գորկին սարքել եր իր կարինեալը—կարգում եր Բալզակի վեպերը և Փիլիսոփաների աշխատությունները, յերազում եր հեռավոր ճանապարհորդությունների մասին զեպի Հնդկաստան, Յելոն, բայց ավելի հաճախ շարադրում եր պատմվածքներ:

Նա, չեր վստահանում տպագրել նրանց: Հեղինակը նրա համար բարձր, համարյա հրաշագործ կուչում եր, իսկ սեփական հեղինակությունները թվում եյին ազու և խեղճ:

Մի անգամ Գորկին մի պատմվածք գրեց այն մասին, թե՝ ինչպես իր ուղեկից Յեմելյան Պիլյակի հետ նա քաղցած թափառում եր Մեծ ծովի ափով, ինչպես գիշերելու տեղում՝ տափաստանում, նրա ուղեկիցը պատմեց անհաջող փորձի մասին «կտցել փողավոր մարդու գլուխը»:

Գորկու բարեկամներից մեկը վերցրեց ձեռագիրը,
տարավ Մոսկվա, և շուտով Գորկին իր «Յեմելյան
Պիլայը» տեսավ տպագրած մայրաքաղաքի «Русские
ВЕДОМОСТИ» լրագրում:

Այս բանը Գորկուն վճռականություն տվեց: Իր
պատմվածքները նա ուղարկում էր Ղազան՝ «Վոլժ-
ский вестник» լրագրին:

Այստեղից Գորկին մոտ յերեսուն ոռւրի հոնո-
րար ստացավ: Այս գումարը նրան հոկայական թվաց:

Գորկու պատմվածքների վրա ուշագրություն
դարձրեց Կորունկոն: Նա ցանկացավ տեսնել սկսնակ
գրողին, վորը ստորագրում եր այդ անսովոր հնչող
կեղծանունով—Մաքսիմ Գորկի:

Գորկին յեկալ քաղաքի ծայրի փայտաշեն տունը:

Յեվ, հանձինս Մաքսիմ Գորկու, Կորունկոն
ձանաշեց այն անհայտ յերիտասարդ մարդուն, վորը
մի քանի տարի առաջ բերեց իր պոեմը՝ «Ծեր կաղ-
նու մասին»... Ծաղիկներով, գրքերով և լրագրի կույ-
տերով լի փոքրիկ սենյակում, նրանք զբուցում եին
գրականության, ոռւս գրողի և այն մենակ ոռւս մարդ-
կանց մասին, վորոնց աղքատությունն ու անհանգը-
տությունը քշում են յերկրի անթիվ ճանապարհներով:

Կորունկոն գովեց Գորկու պատմվածքները:
—Դուք գրում եք շատ յուրահատուկ կերպով:
Ամեն ինչ կարգավորված չի ձեզ մոտ, կոկված չի,
բայց հետաքրքիր ե:

—Ուրեմն դուք կարծում եք, վոր յես կարող եմ
գրել, —հարցրեց Գորկին,

—Իհարկե, —բացականչեց Կորունկոն մի քիչ
զարմացած: —Դուք արդեն գրում եք, տպագրվում եք,

ել ի՞նչ: Կուզենաք խորհրդակցել՝ բերեք ձեռագրերը...
Հանձին Կորունկոյի այդ խոշոր և արդարամիտ
գեղարվեստագետի, Գորկին գտավ ուշադիր և զգայուն
ուսուցիչ:

Կորունկոյի նկատողությունները հասարակ ելին,
բայց ճիշտ և պետքական: Նա խորհուրդ եր տալիս
Գորկուն չիրապուրպիկ գեղեցիկ ֆրազներով, վնաս ավե-
լի ժամ խոսքի մեջ: Յեվ նա ել Գորկուն տվեց կեն-
ցաղային խորհուրդ՝ հեռանալ նիժնիից: Կորունկոն
լսել եր Գորկու կարիքի մասին, նրա անհեթեթ ապ-
լուսափ մասին բաղանիքում, լսել եր այն մասին,
վոր յերիտասարդ գրողի ընտանեկան կյանքը շատ
ել բախտագոր չի...

Գորկին ինքն ել հասկանում եր, վոր պետք ե
փոխել կյանքը և գուցե, բաժանվել Ոլգայից: Նա սի-
րում եր այդ կնոջը, բայց կյանքը սրա աչքում զվար-
ձալի փոկուս եր, վոչ ավելի: Գորկու ձեռագրերին,
սիրելի գրքերին և թանկագին յերազանքներին նա վի-
րաբերվում եր անտարբերությամբ:

Կորունկոն Գորկուն մշտական աշխատանք ա-
ռաջարկեց «Самарская газета»-ում: Գորկին ընդու-
նեց այդ առաջարկությունը:

Տաղտկալի գլխացավանքը դատարանական թըղ-
թերի և զրոշմանիշների հետ, կոկվ խոնավաճիճուների
հետ նեղ բաղանիքում, պայքարը քսան և հիսուն կո-
պեկանոցների ճամար—այս բոլորն անակնկալ կերպով
մնացին հետեւ:

Ոլգայից նա բաժանվեց ընդմիշտ:
Մամարայում վերջնականապես վորոշվեց Գոր-
կու կենսական վիճակը: Թեև առաջ նա տպագրվում եր,

այնուամենայնիվ նա գեռես գրող չեր, այլ փաստաբանի գրագիր, պատահական պրոֆեսիայի, պատահական վաստակի մարդ: Սամարայում Գորկին դարձավ պրոֆեսիոնալ գրող:

Բացի «Կորոլենկոյից» «Самарская газета»-ում տպագրվում եյին այնպիսի հայտնի գրողներ, ինչպես «Аленушкины сказки», «ի հեղինակ Մամին Սիբիրյակը և «Детство Тэмы», «ի հեղինակ Գարին-Միխայլովսկին: Յեզ նրանց կողքին յերեաց Գորկին: «Самарская газета», «ի ընթերցողներն ամեն կիրակի գտնում եյին նրա նոր պատմվածքը»:

Գորկին մտաբերում եր մոտիկ անցյալը, այն տարիները, վորոնք լի եյին ծանր աշխատանքով, արկածներով, թափառումներով, զարմանալի հանդիպումներով, և այդ խայտարդետ, հարուստ, անսպառ հիշողություններն այն նյութն եր, վորից նա ստեղծագործում եր իր պատմվածքները՝ «Վывод», «Дело с застежками», «Однажды осенью»:

Լրագրում Գորկին տալիս եր նաև ֆելետոններ՝ Սամարայի տեղական թեմաներով: Գրում եր ձիաքարշի և քաղաքային ալգու մասին, փողոցային խուլիքանների և ամառային թատրոնի մասին, հիվանդանոցի և քաղաքային վարչության մասին: Ֆելետոնները մերկացնող և մոռայլեյին: Գորկին նրանց ստորագրում եր տարրունակ անունով—«Իյեղուդիլ Խլամիդա»:

— Դուք իտույլ ֆելետոնիստ եք, — վիրավորական անկեղծությամբ ասաց նրան Գարին-Միխայլովսկին առաջին ծանոթության ժամանակ: — Յերգիծանք կա, բայց կոպտավուն և հմտորեն չեք տիրապետում նրան: Գորկին ինքը գիտակցում եր, վոր իւեգուդիլ Խլա-

միդան վառ և գրում և ֆելետոնիստի իր աշխատանքն անվանում եր «նզովված»:

Այնուամենայնիվ, վորքան ել թույլ եյին իյեգուդիլ Խլամիդայի ֆելետոնները, համեմատած Մաքսիմ Գորկու պատմվածքների հետ, նրանք իրենց գործն անում եյին: Խլամիդայի ֆելետոնները հաճախ դիպչում եյին Սամարայի տերերին՝ հարուստ հացավաճառներին: Թեկուզ կոպտավուն և անպաճույն, բայց Խլամիդան անդադար դուրս եր գալիս պաշտպանելու բանվորներին, պատանիներին, ծառաներին, ընչաղուրկներին, դուրս եր գալիս պաշտպանելու այն մարդկանց, վորոնց վիճակը նրան մոտ եր և հասկանալի:

Գորկին Սամարայում ապրում եր առանձնացած՝ Վոլգայի ափի փոքրիկ տնակում: Նա գիտեր, վորինքը գեռ շատ պետք և աշխատի: Յեզ Գորկին աշխատում եր, ինչպես կարող և աշխատել մի՛ մարդ, վորը յերկարատես տատանումներից հետո զգաց վերջապես, վոր իր կոչումը մեկ եւ:

Սկզբում, յերբ Գորկին Սամարա յեկավ, նրա ձեռագրերում յերբեմն պատահում եյին «ՅԱՅՐԱ»՝ նիկը, ուղղագրական սխալներ: Բայց նա արդեն լավ գիտեր Շեքսպիրին ու Գոյթեյին, Դիկենսին ու Մոպսանին, Տեկկերելիին ու Հյուգոյին, անդիր ասում եր Լերմոնտովի և Բարատինսկու վոտանավորները, չեր բաժանվում Ֆլորերի և Ստենդալի գրերից՝ Փրանսիական գրողներ, վորոնք այն ժամանակ քիչ եյին գնահատվում Բուսասատանում:

Սիալները հետո չքացան, ավելի և ավելի վստահ եր գառնում Գորկու գրելաձեր: Ամբողջ որեր նա

զբաղվում եր ձեռագրերով կամ կարդալով իր սենյակում, վորտեղ վոչինչ չկար, բացի յերկաթե մահակալից, գրքերի դարակից և թղթի մեջ կորած սիրանից: Ճերեկը չեր բավականանում, և Գորկին աշխատում եր գիշերը:

Վողնեսենսկի ամայի փողոցի պատահական գիշերային անցորդը, նայելով ներքնատան լուսամումուտից, տեսնում եր նավթի լամպի գեղին լուսով լուսավորված թղթի թերթեր և խոնարհած մի գլուխ՝ դեմքին թափաված մազափնջերով:

Ծագում եր արեր, լամպի լույսը գունատվում եր, բայց չեր մարում:

**

Յերբ Գորկին յեկավ Սամարա, տեղական լրագրողները ճանաչում եին միայն մի Պեշկով, ինչ վորկապակ սպա, վորը հոչակվել եր Սիբիրից մինչև Պետերբուրգ ձիով անցնելու համար. “Самарская газета”-ի խմբագիրը հարկադրված եր բացատրել, վորնը հրավիրած Պեշկովը «վոչ թե սպա յե, այլ բոսյակ»:

Մի տարուց հետո Գորկին արդեն հայտնի յեր, Բոլոր Մերձվոլգյան լրագրերն աշխատում եյին գրավել յերիտասարդ գրողին: Գորկուն հրավիրեց նաև “Нижегородский листок”-ը:

Գորկին՝ վերադարձավ նորից Նիժնի:

ԳԼՈՒԽ VIII

ՓԱՌՔԸ

Գորկին Նիժնին փոփոխված տեսավէ Նիժեգորոդյան սովորական կուպրի, թթու կաղամբի և ապշխատած ձկան հոտին այժմ խառնվում եր թարմ յուղաներկի և յեռացող ասֆալտի հոտը: Ամենուրեք ներկում եյին տները և շինում եյին մայթեր:

Նիժնիում բացվում եր համառուսական արդյունաբերական ցուցահանդես: Այն ժամանակ յերկիրն արդյունաբերական վերելք եր ապրում: Ցուցահանդեսն ամբողջ Յելրոպային պետք եցույց տար ոռուսական կապիտալի հաջողությունները և ուժը:

Տրտում դաշտի մեջ տեղը, աղքատ և կեղտոտարվարձանին կից, կառուցել եյին պավիլոններ, վորոնք հիշեցնում եյին հրուշակային տորտեր, գուեհիկ նկարների վերնատներ և շուռ տված տաշտեր, Պավիլոնները լցրին չիթ, կանեփի պարաներ. սրբանկարներ, ծաղկաղարդած հախճապակի, վոսկյա գիպակ, պատառաքաղներ, սեղեր... Ցուցահանդեսը քշածվադիրյան, հովիլները փող եյին նվազում, բաճկոնը հագին մի շեկակարմիր մարդ զանգահարելով գուլը եր բերում Շառաքանվիր, փառաքանվիր, մեր որւս թագավոր: Ցուցահանդեսի վերեկին փայլում եր յերկուլսանի արծիվը, իսկ նրա վրա ճոճվում եր կապած գորշագույն ողապարիկը:

Ցուցահանդեսի բացմանը յեկավ Նիկոլայ Ա-ը: Վաճառականները նրան փառաբանում եյին բնաճարպի մոմերով, կույսնզգույն շշերով և Ղաղանի շնա-

ոռվ։ Մոմերից մատուռ եյին շինել, շներից կառուցել
եյին կամար, ոճառից թափել եյին Ռոմանովների կի-
սանդրիները։

Յերկրի հարստության և նրա տերերի հիմա-
ըության հաղթական հանդեսն եր այդ։

Ցույց եյին տալիս ինքնագործ պիանինո յեղի
ճիւերով, փոխանակ մետաղե լրերից Գործիքը դղըր-
դում եր քայլալիած տարանտասի պիս։ Ռուսական
ինչվոր գլուտաքար ցուցադրել եր մի մեքենա, վորը,
նրա կարծիքով, հզոր հեղաշրջում պիտի առաջացներ
տեխնիկայի մեջ։ Պարզվեց, վոր մեքենան հին հեծա-
նիվ ե։ Նախկին նոտարը առաջարկում եր հասարա-
կության ուշագրությանը իր հնարած ձանձաքշին՝
Ճիւերի վրայի բոռերին վոչնչացնելու համար։ Նոտա-
րի ձանձաքշին գործադրելիս՝ ճիւերը կատաղում եյին,
Հասարակությանը ցույց եյին տալիս կենդանի ծովա-
ցուլ, Պավլովի տնայնագործների պատառաքաղներ,
հախճապակե հարմարանքներ արտաքնոցների համար,
բայց ոտւս հանձարեղ նկարիչ Վրուերելի պաննոն ցու-
ցահանդես չթողին։

Ցուցահանդեսի այցելուներին առաջարկում եյին
բարձրանալ կապած ողապարիկով։

— Շնորհակալ եմ, — ուրիշների կողմից պատաս-
խանեց սրածայր մորուքով մի ծերուկ մանրագաճառ։
Յեվ հարցուի վոր անում։

— Իսկ իեթե եդ փուչիկը բաց թողնեք, կարող ե
նա մինչև աստված թռչի։ Զի՞ կարող ել ինչ ցավ
ունենք, լիկիլիկալով լիրկինք բարձրանանք։

Լրագրերը լի ելին ցուցահանդեսի նկարագրու-
թյուններով։ Փայտափորագրությամբ զարդարած վեր-

նատները, վլաղիմիրյան հովիվները և պավլովյան պա-
տառաքաղները — այս բոլորը, լրագրողների կարծիքով,
խոսում եր ուսւական կայսրության մեծ ուժի մասին։

Ցուցահանդեսի մասին հոդվածներով հրապարակ
յեկավ նաև Գորկին։

Այժմ նա գրում եր արդեն վհչ Սամարայի ձիա-
քարշի և քաղաքային այգու մասին, այլ այն մասին,
ինչ գրավում եր ամբողջ յերկրի ուշագրությունը։

Գորկու հոդվածները հսչեցին խստությամբ։

Նկարագրելով նավթի, վոսկու, կաշվի և ոճառի
պավիլիոնները, նա հիշեցնում եր այն, թե ինչպես են
ապրում այն մարդիկ, վորոնք իրենց ձեռքերով հա-
նում են նավթը գետնից, լվանում են վոսկին, դա-
րագում կաշին և յեփում են ոճառը։

Այդ մարդկանց կյանքի մասին, Գորկին շատ
բան գիտեր իր սեփական կյանքի փորձով և իր հոդ-
վածներում արգարադատությամբ պատմում եր այդ
մասին ընթերցողին։

Ցուցահանդեսի մասին գրած հոդվածների հետ
միաժամանակ լույս տեսան Գորկու նոր պատմվածք-
ները՝ “Բ ստեpi”, “Կոնօվալով”, “Ենաքանակ լույս”:
Պատմելով բոսյակների և անոթեան թափառողների
մասին, գրողը, նիժեգորոգյան հանդեսների որերին,
կարծես թե հիշեցնում եր ցուցահանդեսի պավիլիոն-
ները լցված հասարակությանն այն մասին, վոր, ինչ-
վոր տեղ, դրա կողքին գոյություն ունեն «նախկին
մարդիկ» և նրա մեղքն ընկնում եւ ուսւական կյանքի
տերերի վրա։

* *

Այդ ժամանակ Գորկին հիվանդացավ: Քաղցածք
մուրացիկ պատանեկությունը, անոթեան կյանքը, ֆի-
զիկական ծանր աշխատանքը, ծուլայի ատրճանակից
արձակած գնդակը, վերջապես, գրողի լարված աշխա-
տանքը—այս բոլորն անհետք չեր անցել:

Գորկին պացքարում եր «Կոքրիկ թոքախտի»
դեմ, ինչպես անվանում եր նա իր հիվանդությունը,
և շարունակում եր զրել: Բայց առողջությունը շա-
րունակ վատանում եր, Շատերը կարծում ելին, թե
Գորկին այլևս չի առողջանա: Բժիշկները նրան ու-
ղարկեցին հարավ: Նա ապրում եր Ղրիմում և ապա
Ուկրանայում՝ խաղաղ Մանուկլովկա գյուղում:

Մանուկլովկայում նա իրեն լավ եր զգում:
Մեծ պարտեզը, բվեճների ընտանիքը ծեր լորենու
վրա, ահազին գալաձկներով լի գետը, զանգակատան
ժամացույցի գիշերային զարկը—ամեն ինչ այսոեդ
դուր եր գալիս Գորկուն:

Ղրիմը և Մանուկլովկան փրկեցին Գորկուն: Նա
վերադարձավ Նիժնի-դեպի կյանք, դեպի աշխատանք:

Իր պատմվածքներն ու վեպիկները Գորկին հա-
վաքեց յերկու առանձին գրքույկում: Դժվարությամբ
նա գտավ հրատարակիչներ, վորոնք վստահացան ոիս-
կու քայլ անել՝ լույս ընծայել գրքերը մի գրողի, վորը
մինչեւ այժմ տպագրվել ե գավառական լրագրերում:
Յեզ ահա, լույս տեսան աւդ յերկու համեստ հատո-
րիկները և ամբողջ ընթերցող Ծուսաստանը միանգա-
մից սկսեց խոսելնոր զարմանալի տաղանդի մասին»

Ա. Տօրեկու

Օчерки и рассказы.

ТОМЪ ПЕРВЫЙ

СОДЕРЖАНИЕ.

1. Человек	6. Виды борьбы.
2. Быт солдат.	7. Сцены из...
3. На войне.	8. Драмы.
4. Годы.	9. Нравы.
5. Записки.	10. Жизнь Петра.

ИЗДАНИЕ

С. Дороговатского и А. Чарушинова

Дороговатский

С. ПЕТЕРБУРГъ.

Первая скрепкачка И. А. Боголюбова. Невский. 1888.

Գորկու պատմվածքների առաջին ժողովածուն

Գորկու գրքերն արագությամբ տարածվեցին տասնյակ հազարավոր որինակներով:

Մանր և անողոք ճշմարտություն եյին բաց անում Գորկու պատմվածքները ոռւսական կյանքի մասին: Գորկին վոչինչ չեր ծածկում: Բայց այդ ճշմարտություն ասողը թույլ, հոգնած, հուսահատված գրողը չեր: Անջնջելի հավատը դեպի մարդը թափանցում եր Գորկու ամեն մի տողը: Ընթերցողն ուժ և արիություն եր զգում մինչ այդ պնհայտ գրողի պատմվածքների մեջ:

Գորկու առաջին գրքերը նրան իսկական փառք բերին: Նոր գրողի անունը դրվեց յերկու մեծ ժամանակակիցների՝ Լեվ Տոլստոյի և Անտոն Չեխովի անունների կողքին:

ԳԼՈՒԽ IX

ՄԵՏԵԽԻ ԲԵՐԴԸ ՅԵՎ ՆԻԺԵԳՈՐՈԴՅԱՆ ԲԱՆՏԸ

«Ինքնակալության յերկդիմանի արծիվը վոչ միայն պետության զենանիչն եր, այլ մի թուչնակ՝ չափազանց կենդանի և չարորեն գործունյա»:

Գորկի՝ «Բեսեդы о ремесле»

Գորկու հոչակը մեծանում եր և այս բանն ավելի ու ավելի յեր վրդովում ցարական կառավարությանը:

Իշխանությունները կոահում եյին, վոր յերիտասարդ կրողն իրենց անհաշտ թշնամին եւ կառավարության և գրողի միջև սկսվեց բացահայտ կոիմ: Քսան յերկար տարիներ տեսք այս...

Թիֆլիսում ձերբակալեցին հեղափոխական բանվոր Աֆանասևին, Խուզարկության ժամանակ նրա մոտ գտան լուսանկար ինքնազրով՝ «թանկագին ֆեդյա Աֆանասևին Մաքսիմիչին հիշելու համար»: Ժանդարմաներին հաջողվեց պարզել ով և Մաքսիմիչը:

Գորկուն բռնեցին Նիժնիում և ուղարկեցին Թիֆլիս, Այստեղ նրան զրին Մետեխի բերդը՝ քաղաքական բանտարկյալների բանտը:

Նա քայլում եր կամերում և ճգնում գլխի ընկնել՝ ինչի՞ համար են նրան դրել այս բանտը: Կամերի լուսամուտից յերևում ելին բանտի՝ պատերի գորշ ատամները, Քուռ գետի դարչնագույն ջուրը և ափի տների փայտյա սրահները....

Միջանցքում անցուդարձ եր անում հսկիչը և գրնդացնում բանալիները: Վորևէ բանի վրա զալրանալով, գոչում եր՝

—Նատիր տասը տարի:

Թերես հսկիչի ցանկությունը կատարվեր և Գորկուն վիճակվեր յերկար նստել Մետեխի բերդում: Բայց ժանդարմաներին՝ չհաջողվեց հաստատել Գորկու մասնակցությունն Աֆանասևի գործին:


Գորկին վերադարձավ Նիժնի: Այժմ նա արդեն գտնվում եր վոստիկանության միալար հսկողության տակ: Յերկանրկանի փայտաշեն տունը, վորտեղ քնակություն հաստատեց գրողը, միշտ շրջապատված եր տարրորինակ մարդկանցով: Նրանցից վոմանք անո կյունաքարին նստած՝ ձևացնում եյին, իբր թե դիտում են յերկինքը: Վոմանք լապտերի սյունին, հենված, ձեացնում եյին, իբրև լրագրի ընթերցանությամբ

տարգած։ Գլխավոր դռան առաջ կանգնում եր մի կառապան, նույնպես տարրինակ. նա համաձայնում եր տանել Գորկուն և նրա հյուրերին, թեկուզ ձրի, բայց միայն նրանց Յեղ յերկինք դիտողները, և լրագիր կարգացողները, և կառապանը ծպտված լրտեսներ եյին : Նրանք աշխատում եյին հետախուզել գրողի և նրա ընկերների ամեն մի քայլը։

Այդ հեշտ չեր, վորովհետև Գորկու տունը միշտ շատ մարդ եր գալիս Վասնեցովի և Լեվիտանի նկարներով լարգարած կարինետում լինում եյին գերասաններ, արհեստավորներ, նկարիչներ, ուսարելիքյանանապարհորդներ, ուսանողուհիներ, վաճառականներ...

Նիժնիից գրած մի նամակում Գորկին հաղորդում եր.

«Ամեն որ գալիս ե զանազան տեսակի շատ հասարակություն. վորը գիրք ե խնդրում, վորը տառապում ե վոտանավոր հեղինակելու հակումով... Գալիս ե գրաշարը, վորը աքսորից նոր ե վերադարձել հետո փոխանակապետի կինը՝ բերում ե անեղալ բրոցուրներ, հայտնվում ե դերձակուհին, վորքնության տակ ե, նրանից հետո զեներալը՝ տեղական հրետանային ըրիգադի հրամանատարը՝ խնդրելու զինվորների համար ներկայացում կազմակերպել։ Վաճառական Բուզբովը կանչում ե աստծու մասին խոսելու, դրամ-խմբակի նախագահ Շմելինգը՝ ըմբիշ, վորինձ անցյալ տարի վատրեց ակումբից սյուրտուկ չկրելու համար, — խնդրում ե հայնոյել տիկիններին, վորոնք նրան չեն լսում։ Յես վոչ մի բանից չեմ հրաժարվում։ Գրաշարին փոխահանգապետի կինը կտեղավորի նահանգական տպարանում, վորոնեղ նա



Մաքսիմ Գորկին Մաքսիմ Գորկու հետ. Մաքսիմ Գորկու Ա. Պ. Չեխովին նվիրած լուսանկարը։ «Ծնորհակալ նմ, Անտոն Պավլովիչ, նկարի համար» Ան ձեզ իւը, ավելացումով Մաքսիմկայի, իմ վորդու, վիլխովայական սարդու, մեկ ու կես տարեկան։ Մայմ կյանքի ամենալավ բանն եւ։ (Մ. Գորկու Ա. Պ. Չեխովին գրած նամակից 1899 թ.)

Կորալվի բանվորական խմբակների կազմակերպությամբ, զբքելի փողը նրանց կտա Բուգրովը, խառնումներին յս միշտ հաճույքով հճախոյիմ, զորի համար նրանք կողնեն իմ դերձակուհուն կազմակերպել արտելային արհեստանոց. գեներալի համար ներկայացում կոարքեմ, իսկ նա կտա ձիամարզարանը տուածառի համար և ձրի նվազախումբ¹⁾:

Այդ տոնածառը Գորկին ինքը կազմակերպեց Նիժեգորոդյան աղքատների յերեխանների համար, Փոքրիկ մարդկանց համար նա մեծ տոն եր պատրաստում: Գորկու բնակարանը լիքն եր արկղներով և յերեխանների ընծաների արկղիկներով: Ամենուրեք կտորիղեն, նրանցից շտապ վերնաշապիկներ ելին կարում:

Գորկին ուրախ գեղքով նայում եր այդ պատրաստություններին:

Տոնածառը մեծ եր, կանաչ, գույնզգույն ելեքտրական լամպիկներով:

Հավաքվել եր հինգ հարյուր յերեխա՝ կեղտոտ, մուրացիկ մանուկների մի ամբողջ բանակ, Առանձին յելույթ ուներ անխնամ յերեխանների ջոկատը Նիժնիի բաղարից—Գորկյան ջոկատը, նա կարմիր դրոշակ եր կըում:

Թախիծով եր գիտում Գորկին յերեխաններին: «Ընծաներով բեռնավորված սեղանների յերկար շարքից և ճոխ զարգարած ելեքտրական կրակներով վառվող ծառի տնօքից շշմած՝ այդ գերախտ մանուկները խիտ, խայտարդեալ հոսանքով պատվում ելին դահլիճում և շարունակ հազում ելին, հազում ելին

մի տեսակ առանձին ձեռվ, տխուր և լալագին, ինչպես ուժասպառ ծերունիներ: Ման ելին գալիս լուռ և ծանրաբարո, իսկ նրանց աչքերն ագահ եյին, խիստ, մի տեսակ լուրջ: Լավ չե, գիտեք:

... Յերբ այդ թշվառներին ընծանելը բաժանեցին, մի-մի կարկանդակ, մի տոպրակ ընծան 1-1½ ֆունտ, մի-մի զույգ կոշիկ, շապիկ, զգեստ, կոփթա, գլխարկ, թաշկինակ—գիտեք—նրանցից շատերը վորոնացին ուշախությունից, վոմանք ընծաները սեղմելով իրենց, վախան ուր-վոր, մյուսները նստելով հատակին՝ անմիջապես սկսեցին ուտել»¹⁾:

Մի միտք ել հղացավ Գորկին. պատկերագարդ ժուռնալներից կտրում ելին զանազան տեսակի նկարներ և նրանցից ալբոմներ ելին կազմում գյուղական յերեխանների համար:

—Զի վոր նրանք վոչինչ չեն տեսնում,—ասում եր Գորկին:—Իսկ այստեղ կան և քաղաքներ, և գետեր, նեռու յերկրներ... Կտեսնեն նշանավոր մարդկանց. կուզենան իմանալ բնչ են արել նրանք: Ահա...

Զեր մոռանում Գորկին և այն հասակավորներին, վորոնց բոսյակ ելին անվանում:

Քաղաքում “Ստոլբի”, անունով հայտնի սյունազգարդ տանը Գորկին յերեկվա ապաստարան սարքեց անգործ և անառւն մարդկանց համար: Այստեղ կար գրադարան, դրվագ եր պիտինո և բոսյակները “Ստոլբի” ուրմ իրենց մալդ ելին զգում.

Տեհածառը, ալբոմները և մինչև անգամ “Ստոլբի” չելին, վոր հարկադրում ելին վոստիկանությանը սկսուած հետամտել Գորկուն: Նա ավելի և ա-

1) Մ. Գորկու չերապարակված համակներից:

վելի հաճախ եր այցելում Սորմովոն, Նիժնիի բան-
վորական արվարձանը, վորտեղ խոշոր գործարաններ
կալին:

Ելտեղ գաղտնի ժողովսելում կարդում ելին
սոցիալ-դեմոկրատական «Խսկրա» լրագիրը, վորտեղ
գրում եր լենինը: Արագիրը տպագրվում եր բարակ
բրնձաթղթի վրա. վոստիկանության հանկարծակի
վրա տալու ժամանակ, ամբողջ համարը կարելի յեր
կուլ տալ:

Սորմովոյի բանվորներն ել այցելում ելին Գոր-
կուն, նրա մոտ գալիս յեխն խորհրդի, դրքի և դրամի,
գորը Գորկին առատաձեռնությամբ տալիս եր հեղա-
փոխական աշխատանքի համար:

1901 թվին Գորկին գնաց Պետերբուրգ: Նա այն-
տեղ յեղավ վոստիկանության անողոք բոնու-
թյանն ուսանողների հեղափոխական ցույցի մասնա-
կիցների վրա: Գորկին հրապարակ յեկավ մի հոդվա-
ծով, վորով համարձակուեն հարձակվում եր կառա-
վարության՝ այդ բոնության սկզբնապատճառի վրա:
Իսկ իր «Մըրկահավառում», գրած այդ դեմքերի տպա-
վորության տակ, Գորկին բացականչում ե.

«Մըրկել, շուտով կվորոտա մըրիկը»:

Այս յերգի խոսքերը բերանացի կրկնում եր ամ-
բողջ յերկիրը:

Պետերբուրգից հեռանալիս, Գորկին գաղտնի կեր-
պով իր նիժեգորոդյան բարեկամներին ուղարկեց մի-
միուրաֆ՝ գործիք, վոր հեղափոխականների համար
փոխարինում եր տպագրական մամուլ...

Միմիոգրաֆի մասին ինչ-վոր միջոցով իմացել եր
պահնորդական բաժանմունքը:

Գորկին ընկավ նիժեգորոդյան բանտի և աշ-
ուարակը: Նրան առաջարկեցին բունտի մեղադրանք՝
գերագույն իշխանության դեմ:

Գորկուն պահում ելին, վորպես վտանգավոր
հանցագործի, նրա հետ վարած ամբողջ գրագրությունը
բռնվում եր:

Գորկու ձերբակալությունն ու բանտարկությունն
առաջացրին ուժեղագույն վրդովմունք: Ամբողջ միու-
սաստանով անցավ բողոքների ալիքը: Ի պաշտպա-
նությունն բանտ նետած հիվանդ գրողի՝ դուրս էեկավ
լել Տունտոյը:

Կառավարությունը հարկադրված եր զիջելու:
Բանտը փոխարինվեց անային կալանքով: Այժմ նրա
մոտ՝ նախասենյակում և խոհանոցում վոստիկաններ
ելին նստած:

Նրանցից մեկն անդադար նայում եր կարինետը
և Ալեքսեյ Մաքսիմիչի հետ սկսում եր գիտական
գրույներ:

Գորկին նորից ձեռնամուխ յեղավ աշխատանքի,
հաճախ գրում եր գիշերները:

Ալդ մեծագույն կասկածներ եր առաջացնում վոս-
տիկանների մեջ:

—Նա հենց գիշերներն ե գործում, —հաղորդում
ելին նրանք:

Մի անգամ Գորկին վողոցում հանդիպեց վա-
ճառական Բուգրովին:

—Ալդ իդուր ե, —ասաց նա Գորկուն: —Զեր
գործն ե պատմել, վոչ թե լուծել... Հեղափոխությունը
բոլոր հանդուցների լուծումն ե...

Բուգրովը չսխալվեց: Գորկին վոչ միայն պատ-

մում եր, այլ և «լուծում եր»: Ավելի և ավելի կիպ մոտենում եր նա հեղափոխականներին, ավելի և ավելի ոժանդակություն եր ցույց տալիս Սորմովի բանվորներին:

Վաստիկանները և լրտեսներն անզոր եյին...

«Նրա ազգեցությունը բանվորների մեջ առհասարակ կարող ե արտահայտվել չափազանց անցանկալի ձևով», զեկուցում եյին նիմեքորոշան ժանդարմները Պետերբուրգ:

Կառավարությունը վօրոշեց հեռացնել Գորկուն Նիմիից, վորքան կարելի յե հեռու հեղափոխական Սորմովից: Նրան բնակության տեղ նշանակեցին Արզամասը, խուլ քաղաք, բնակեցրած տերտերներով, մեշաններով և պաշտոնաթող պաշտոնյաններով:

Դորկու վրա կատարված բռնությունն առաջացրեց Լենինի ցասկոտ յելույթը: Նա գրում եր,

«Յեվրոպական հոչակ ունեցող զրողին, վորի ամբողջ զենքն ազատ խոսքն եր, ինքնակալ կառավարությունն աքսորում ե առանց դատի և քննության»:

Նիմեքորոդյան բանտում նստելը սրեց Գորկու հիվանդությունը: Բժիշկները նրա հիվանդությունը նորից գտան շատ վտանգավոր: Գորկուն նորից հարավ եր հարկավոր և Գորկու բազմաթիվ բարեկամների, դրանց թվում ե Լեվ Տոլստոյի ճնշման տակ իշխանությունները թույլ տվին զրողին մի քանի ամսով դուրս գալ Ղրիմ:

Գորկուն Ղրիմ ճանապարհ դնելը փոխվեց փոթորկալի հեղափոխական ցույցի: Գորկուն տանող գնացքի մեկնելուց շատ առաջ, կայարանը լեփ լե-

ցուն եր ուսանողներով և բանվորներով: Հեղափոխական յերգերով եր ուղեկցում բազմությունն իր սիրելի գրողին մինչև վագոն:

Պահորդներն շտապեցրին շուտափույթ ճանապարհել գնացքը: Ցերկու ժանդարմ կանգնեցին վագոնի մուտքի մոտ...

Գնացքը շարժվեց բացականչությունների տակ՝ Կեցցե՛ Մաքսիմ Գորկին, կորչի բոնությունը:

* *

Գորկու Ղրիմում ապրելու որերին աելի ունեցավ նշանավոր ակադեմիական միջադեպը, վորը նորից ցույց տվեց պաշտոնական Ռուսաստանի ատելության չափը գեպի «Մորկահավիթ» հեղինակը:

1902 թվին Գիտությունների ակադեմիան Գորկուն ընտրեց իր պատվավոր անդամ: Գորկու ընտրությունը պրոլետարի և հեղափոխականի, մի մարդու, վոր արքեն յերկու անդամ լեզել եր բանտում, վըրդովից կառավարական շրջանները: Ընտրության մասին գեկուցեցին թագավորին: Լրագրի կտրվածքի վրա, վորտեղ հաղորդված եր Գորկու ընտրության մասին, Նիկոլայ Ա-ը գրեց:

«Ավելի քան տարորինակ ես:

իսկ ժողովրդական լուսավորության մինիստրին ուղղած նամակում թագավորը գրում եր,

«... Այդպիսի մարդուն, այժմյան խոռվաճուց ժամանակ, Գիտությունների ակադեմիան իրեն թույլ ե տալիս ընդունել իր միջավայրը՝ Այդ ինձ խորապես վրդովում ե»:

Այս բավական եր, վորպեսզի Գորկու ընտրությունն անվավեր հայտարարվեր, Ակադեմիան յերկշուտարար լուց, Զլուցին միայն յերկու գրող՝ Անտոն Չեխովը և Վլադիմիր Կորոլենկոն։ Վորպես բողոքի ցույց Գորկուն վտարելու դեմ՝ նրանք հրաժարվեցին պատվավոր ակադեմիկոսների կոչումից։ Չեխովի և Կորոլենկոյի յելույթը բացահայտ ցույց եր թագավորական կամացականության դեմ։

ԳԼՈՒԽ X

ՍՈՒԱԿՆԵՐԸ ՅԵՎ ԼՐՏԵՍՆԵՐԸ

Արգամասի վարավիրն իրեն անվանում եր «Քաղաքային մորուքավեր»։

Արգամասի մասին նա այսպես եր ասում։

Կան տեղեր, վորտեղ լինում են հեղեղումներ, յերկրաշարժեր—մեղ մոտ՝ վոչինչ, Խոլերա—այդ ել չի յեղել…

Մի ժամանակ Արգամասը խիստ բռնտեր եր բարձրացնում. արգամասցիք ցարական իշխանությունից փախչում ելին Ստեղան Ռազինի և Յեմելյան Պուգաչովի մոտ։

Այդ անհանգիստ կազակները, մորդվաները, չուզվածները վաղուց արդեն փտել են գերեզմաններում, վաղուց ե խոտով ծածկվել Արգամասի հին գերեզմանատունը։ Արգամասի բռնտերի և մահապատիժների հիշողությունը վաղուց ե մարել Արգամասը վերափոխվել եր առեարականների և միանձնուհիների քաղաքի։ Թվում եր խաղաղ, հուսալի, խսկական, նա նա-

պաստակի մորթու և ճարպի առետուը եր անում, զանգահարում եր հինգ վանքի և յերեսունչորս յեկեղեցիների զանգակատներից, լսում եր գորտերի կոկը-ողը, կարգում եր „Եպարքային տեղական վախճանում եր գողերից, գիշերը պիհնդ փակում եր իր տնակների փեղկերը…

Այսուամենայնիվ իշխանությունները յերկյուղ ե-յին կրում, վոր Գորկու դախ այդ քաղաքում ել կարող ե հուզումներ առաջ բերել։

Արգամասի վոստիկանական վերահսկիչն ստացալ հետեւյալ զաղանի գրությունը։

«Շուտով Արգամաս քաղաքն ապրելու կգա հայտնապես հսկողության տակ գանվող Ալեքսեյ Մաքսիմովիչ Պեշկովը (Մ. Գորկի)։

Արգամաս քաղաքը մտնելուն պես, հանձնարարում եմ ձեզ յենթարկել նրան հայտնապես հսկողության և ձեռք առնել բոլոր միջոցները, վորակեզրի Պեշկովին դիմավորելու ժամանակ վոչ մի անկարգություն չկանոնի։

Գորկին բնակվեց մի ընդարձակ փայտյատան։ Տանը կից կար այգի, վորտեղ գտնվում եր մի հին լորենի։

Դեռ նոր եր անցնում գարունը, Ղրիմի կարծես թիթեղային կանաչըց հետո, Արգամասում Գորկուն ուրախացնում եր ամեն մի ծառ։

Նա գնում եր անտառ Մոկրի ձորակը։

—Ահա այս մեկը, —ասում եր նա, գրկելով կեչին, —Ղրիմի ամբողջ պեյզաժից լավ ե։

Նրան գուը եր գալիս և քաղաքի շրջապատի կանաչ հարթավայրը, և Տեղա գետը, վորը լի յե պերկեսներով և գայլածկներով…

Վոստիկանությունն ամենախիստ հսկողություն

տակ առավ տունը, Ահա ինչ եր հաղորդում Գորկին
Զեխովին գրած նամակով.

«Այստեղ խաղաղ ե, հանգիստ, ողը լավն ե, բազ-
մաթիվ այգիներ, այգիներում յերգում են սոխակներ
և թփերի տակ թագնվում են լրտեսներ, Սոխակները
բոլոր այգիներումն են, իսկ լրտեսները, կարծեմ, մի-
այն իմ այգում: Գիշերային խավարի մեջ նստում են
լուսամուտների տակ և աշխատում են նշմարել թե
ինչպես յես խոռվություն եմ տարածում Ռուսաստա-
նում, և այս քանը չտեսնելով՝ տնքանքում են և վա-
խեցնում անեցիներին»:

Գորկու ամեն մի քայլը մեծագույն կասկած եր
առաջացնում: Յերբ Գորկին մուրացկանին արձաթե
գրամ եր տալիս, վոստիկանը խլում եր մուրացկանից
և ատամով փորձում, թե արդյոք կեղծ դրամներ չՔ
բաժանում հսկողության ներքո գտնվող Պեշկովը:

Յերբեմն Գորկին մոտենում եր լուսամուտին և
մոտ եր կանչում՝ լրտեսներից մեկին: Այսպիսի խո-
սակցություն եր տեղի ունենում:

— Լրտես ես:

— Վ՞ոչ:

— Սուտ ես խոսսաւմ, լրտես ես:

— Աստված վկա, չե:

— Իսկ վաղժուց ես ծառայում այդ գործում:

— Վոչ, վաղուց չե:

Գորկու տան մոտ յերբեմն յերեսում եր նաև Ար-
դամասի ծանրակշիռ իշխանավոր՝ պրիստավ՝ Դանի-
լովը: Հաստ, մեծ ծխամորճը առամերի մեջ նա ձի-
ով մոտ եր գալիս և աչալլը որեն զննում տան ներսը,
Բայտ յերեսույթին հաստատ համոզված եր, վոր յեթե

Գորկին Ռուսաստանում հեղափոխություն ե անում,
այն ժամանակ նա՝ պրիստավ՝ Դանիլովը, այդ մի-
անգամից կնկատի և կիսափանի:

Պրիստավ՝ Դանիլովը սխալվում եր: Զնայած լու-
սամուտի տակի վոստիկանին և թփերի միջի լրտես-
ներին, Գորկին Արգամասումն ել շարունակում եր
հեղափոխական պայքարը:

Միայն տերտերներ, առևտրականներ և մանր
աստիճանավորներ չեցին ապրում Արգամասում: Այս-
տեղ ուրիշ մարդիկ ել եյին ապրում՝ փոքրիկ կաշե-
գործարանի բանվորներ, կոշկակարներ, մուշտակա-
գործներ: Այս մուշտակագործների և կոշկակարների մա-
սին լենին, իր հեղինակություններից մեկում գրում եր,
վոր նրանք աերերի համար աշխատում են տասչորս ժամ
որպական, իսկ սահանում են ամսական մի քանի ոուրի:

«Այս իսկ պատճառով մուշտակողործները, — նկա-
տում եր լենինը — դալիկագեմ են, վատուժ և այլասեր-
վող»:

Այդ «դալիկագեմ», հասարակ կոչումի մարդիկ
գնում եյին Գորկու մոտ, անցնում եյին վոստիկան-
ների և լրտեսների միջով:

Արգամասում ապրելու ժամանակ Գորկին մաս-
նակցեց մի խիզախ հեղափոխական ձեռնարկության
իրականացմանը:

Արգամասի մոտ եր գտնվում Պոնետայեվսկի վան-
քը՝ հակահեղափոխության բներից մեկը:

Վանքին կից գտնվում եր պետական ողետունը:
Նիմեկորոյդյան հեղափոխականները Գորկու հետ միա-
սին վճռեցին «տիրապետելու ողետունը: Յեկ, իրոք,
ում մտքովը կանցնի հեղափոխականներ վորոնել պե-

տական կրպակում, խուլ գալառական անկյունում,
և այն ել վանքի կողքին:

Պլանն իրականացավ. հաջողվեց կրպակի գործութար նշանակել հյուսն լեբեդին՝ նիժեգորոդյան ակտիվ հեղափոխականին:



Ա. Գ. Զելյովը և Մ. Գորկին Յալտայում 1900 թ.

Հյուսնը ողի յեր բաց թողնում վանքի բնակիչներին և ուխտի յեկող մարդկանց, իսկ կրպակի հետեւ

սենյակում գտնվում եր հեղափոխականների գաղտնի տպարանը: Գետական կրպակում տպագրված թուուցիները տարածվում եյին ամբողջ նահանգում:
Իշխանությունները շուտ չի ուշագրության առան Պոնետայելսկի պետական ողետունը: Բայց տեղի ունեցավ մի պատահականություն. կողոպատիչները թալանեցին կրպակը: Այս հայտնի գարձավ վոստիկանությանը: Ամեն ըուպե կարելի յե սպասել վոր Էշիանությունը կգա պատահարի տեղը: Բարեբախտաբար, յերբ վոստիկանությունը հայտնվեց կրպակում քննություն կատարելու, նա այնուեղ վոչ տպարան, զոհ գործակատար գտավ: Տպարանը փրկվեց, Պոնետայելսկի գաղտնիքը չբացվեց:

Պրիստավ Դանիլովին զեկուցում եյին, վոր Գորկու կաբինետի լուսամուտում լույսը վառվում ե ամբողջ գիշերը: Այդ դուր չեմ գալիս պրիստավին:

— Հակոբության ներքո՝ գտնվողը քիչ ե քննում, գիշերը բնակարանում աշխատում ե:
Գորկին շատ եր գրում և աշխատանքը հրապուրում եր նրան:

Նա պիես եր գրում թատրոնի համար, վորի մասին մի անգամ Զելյովին գրած նամակում նկատեց, վոր թատրոնը չսիրելն անհնարին ե, իսկ նրա համար չաշխատելլ հանցագործություն:

ԳԼՈՒԽ XI

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԲԵՄԻ ՎՐԱ

Մուկվայի Փոքր կամ Կորշի հին թատրոններում, կարմիր վոսկեկար վարագույրը վերև եր բարձրանում

նվագախմբի աղմկալի ձայների տակ ինչպես ոպերացում: Դերասանները զոչում ելին; հարվածում ելին վոտքերով և սիրում ելին այնպիսի դերեր, վորոնց մեջ կարելի յեր հաճախ կրակել ատրճանակը: Հանդիպահներում խշիչում ելին յուրկաներ և զրնգում ելին խթաններ՝ բարձր խոսում, ծափահարում կամ սուլում ելին:

Նոր բացված թատրոնում կարողանում ելին գնահատել անդորրությունը: Համեստ վարագույրը չեր բարձրանում, այլ հանդարտ բացվում եր, կարծես գիրք լիներ: Մարդիկ բիմի վրա աշխատում ելին չտարածել ձեռքերս, սիրում ելին յերբեմն լուռ կենալ՝ դիտողների հետ միասին ականջ դնելով անձրսի մեղմ աղմուկին, թոշունների առավոտյան յերդին, հեռացող կառքի թիթկոցին և ժամացույցի զարկերին:

Դերակատարները կանչերին չելին դուրս գալիս և հանդիսատեսները չելին ծափահարում:

Այս թատրոնում խաղում ելին յերիտասարդ արտիստներ ու սիրողներ: Լավագույն դերասաններից մեկը գեղագրության ուսուցիչ եր:

Այն մարդիկ, վորոնք խորապես զգում ելին նոր արվեստը՝ ստեղծում ելին Գեղարվեստական թատրոնը:

Գորկին մի անգամ Մոսկվա յեկած ժամանակ, գնաց ալդ թատրոնը: Բեմադրվում եր Զեխովի «Ճանակական» Վանյա պիեսը:

Գորկին նացում եր՝ ինչպես դյաղյա վանյան նստած և հաշիվների, Վաֆլյան կամաց խփում եր գիրարերին, ինչպես բժիշկ Աստրովը նայում եր,

չգիտես՝ ինչու, սենյակում կախած Աֆրիկայի քարտեղին, ինչպես պրոֆեսոր Սերեբրյակովը չի ուղում, վորդաշնամուր նվագեն—նայում եր սովորական մարդկային կյանքին և, սեփական խոստովանությամբ, շաց եր լինում կնկա պես»:

Այն թատրոնից, վորտեղ այնպիս սիրում ելին անդորրությունը, Գորկին առևա վերագարձավ շշմած:

Նա Զեխովին նամակ ուղարկեց և սա Գորկու նամակներից ամենանուզվածն եր:

«Չի կարելի լավ և պարզ ասել այն, ինչ զարթեցնում ե այդ պիեսը հոգու մեջ, բայց նրա հերոսներին նայելով, յես զգում ելի, կարծես ինձ սղոցում են բութ սղոցով: Նրա ատամներն անցնում են ուղղակի սրտիս վրայով, և սիրտս սեղմվում ե նրանց տակ, հառաջում ե, գոզզում: Ինձ համար այդ զարթութելի բան ե: «Ճանակական» արվեստի բոլորովին նոր տեսակն ե:

«Վանյայի» վերջին գործողության մեջ, յերբ բժիշկը լիրկարատե լսությունից հետո խոսում ե Աֆրիկայի շոգի մասին, յես զողովուացի՝ թե՛ ձեր տաղանդով հիացած, թե՛ լիրկյուղից՝ մարդկանց համար, թե՛ մեր անգույն, մուրացիկ կյանքի համար»:

Գորկին ափառաց, վոր ապրում ե Նիժնիում, վորտեղ չեր կարելի գնալ այդ սքանչելի թատրոնը:

Այնուհետև նրանք հանդիպեցին Ղրիմում՝ Գորկին և Գեղարվեստական թատրոնը: Նրանք լիրկել ելին Յալտա նրա մոտ, ով զրել եր «Պյաղյա վանյան»— Զեխովի մոտ:

Գարուն եր, Զեխովի սպիտակ ամառանոցի այգում ծաղկել ելին զրողի անկած թփերը....

Զեխովն ու Գորկին անցնում ելին քարոտ փողոցներով, Յալտայի սպիտակ ծովափով, իսկ յերեկոյան գնում ելին անհրապուր փոքրիկ թատրոնը, վորտեղ գեղարվեստականները սիրելի դրամատուրգին ցույց ելին տալիս իրենց ներկայացումները:

Զեխովը համոզում եր Գորկուն՝ պիես գրել, Յեղաղավեստական թատրոնն սպասում եր այդ Գորկուց:

Այժմ, Արգամասում, Գորկին ձեռնամուխ յեղավայր իրեն համար նոր աշխատանքին: Նա գրում եր առաջին պիեսը՝ «Մեշանները» — Բեսսեմնովների դժողով կյանքի մասին»

Պիեսը Գորկուն դժվարությամբ եր հաջողվում: Դրամատիկական ձևը նրա համար անսովոր եր: Նա գրում եր, փոփոխում և հիշում եր մի գրականագետի հանաք խորհուրդը՝ գրել հինգ գործողությամբ տրագեդիա, մի տարուց հետո նրան դարձնել յերեք գործողության գրամա, սույնը ելի մի տարուց հետո՝ մի գործողության վոդեվիլ, այսուհետեւ, ելի մի տարուց հետո, վոդեվիլն այրել...

«Մեշանները» Գորկին չվոչնչացրեց: Այնուամենայնիվ նա դժուն մնաց նըանից, նրան թվում եր վոր պիեսը շփոթ և տաղտկալի յե դուրս յեկել:

«Դուք չի գալիս ինձ, — խօստովանում եր Զեխովին Գորկին, — Անպատճառ հենց ձմեռը նորը կորիմ: Եմ չաջողվի՝ տասը կորիմ, ուզածս կանեմ: Յեր աժըշտության պես ներդաշնակ և գեղեցիկ պիտի լինի»:

Զեխովի պիեսներում, Գեղարվեստական թատրոնը բեմի վրա, հնչում եր այդ յերաժշտությունը՝ մարդկային հասարակ խոսքի յերաժշտությունը: Նրան

մտարերում եր Գորկին, յերբ սկսում եր գրել նոր պիես:

«Մեշանների» մեջ սա նկարագրում եր մանկությունից իրեն ծանոթ մարդկանց, վորոնք ապրում ելին՝ կճուճներով, ինքնայեռներով, սրբազատկերներով և ննդուկներով լեփ-լեցուն տնակներում:

Նոր պիեսում Գորկին շուռ յեկավ դեպի բոսյակները՝ նիժեգորովյան Միլիոնկի և Ղաղանի «Մտեկաննի զավոդի» բնակիչները:

Դեռևս Ղրիմում, մի անգամ յերեկոյան մթության մեջ, սատած դարավանդի վրա, Գորկին բարձրաձայն յերազում եր ապագա պիեսի ձասին: Նա պատմում եր, վոր գործող անձը կլինի հարուստ տան սպասավոր, վորն ընկել եր գիշերոթեանը և այլևս այնտեղից գուրս չեր յեկել: Ամենից շատ խնամքով նա պահում եր Փրակի շապիկի ոճիքը՝ միակ բանը, վոր նրան կապում եր առաջնարի հետ: Դիշերոթեանում նեղվածք եր, նրա բնակիչներն ատում ելին միմյանց: Բայց վերջին գործողության մեջ գալիս եր գարունը, բեմը լցվում եր արեկի լուսով, գիշերոթիկները գուրս ելին գալիս իրենց գարշահոտ բնակարանից, մոռանում ատելությունը...

Այսպես ելին՝ պատկերանում Գորկուն պիեսի առաջին ուրվագծերը, վորին նա սկզբում ավեց «Կյանքի հատակում» անունը:

Եր պիեսի հերոսներին նա հանդիպում եր շուկաներում, մեծ ճանապարհներին և նավահանգիստներում, նրանց հետ թափալվում եր տախտակամածների վրա, սատում եր գիշերային խարույկի մոտ...

Սատինի կերպարանքն, որինակ, գրողին ներշնչ-

չել եր փոստի մի նախկին պաշտոնյա, վորը յեղել եր տաժանավայրում: Նա ման եր գալիս բաց մերկ կրծքով նիժնիի փողոցներում և ֆրանսերեն լեզվով վողորմություն եր խնդրում կանանցից: Նա ուներ գեղատեսիլ, ոռմանտիկական կերպարանք, և կանայք նրան յերենին տալիս եյին հինգ կոպեկ...

Յերբ «Հատակում» պիեսն ավարտվեց, Գեղարդաստական թատրոնում կազմակերպեցին պիեսի ընթերցում:

Կարդում եր ինքը՝ Գորկին:

Յերբ սկսեց կարդալ այն տեսարանը, վորտեղ լուկան բարի յերթ և մաղթում և մխիթարում և մեռնող Աննային, արտիստաները շնչները պահեցին և խաղաղություն տիրեց: Նրա ձայնը դողաց և ընդհատվեց: Նա կանգ առավ, լսեց, մատով սրբեց արցունքը: Փորձեց շարունակել, բայց յերկու բառից հետո նորից լսեց և արդեն համարյա բարձրածայն; բացահայտ կերպով լաց յեղալի...

Կառավարությունը դժվարությամբ թույլ տվեց Գորկու պիեսների բեմադրությունը: Գորկու ձեռագրերի վրա գրաքննությունը շատ ջնջումներ և կատարել, «Մեշանների» մեջ առանձին կասկած եր առաջ բերել «առեւտրական Ռոմանովի կինը» դարձվածքը: Արա մեջ գրաքննիչն թվացել եր ակնարկ Ռոմանովների թագավորական ընտանիքի մասին: Հրամայվեց Ռոմանովը դարձնել իվանով....

«Մեշանների» գլխավոր փորձի ժամանակ, թատրոնը շրջապատված եր վոստիկանական ջոկատներով և հեծյալ ժանդարմներով: Թվում եր թե՛ս սպասում եր վոչ թէ գլխավոր փորձ, այլ գլխավոր ճակա-

տամարտ: Իսկ «Մեշանների» առաջին -րեմադրությունների ժամանակ, իշխանությունները կարգադրեցին կապելիքիների փոխարեն դնել քաղաքապահն - վոստիկաններ: Կառավարությունը յերկյուղ եր կրում, վոր թատրոն կմտնի ուսանող յերիտասարդությունը և ցույց կարքի Գորկու պատվին...

«Յերբ մարգուն անհարմար ե մի կողքի վրա պառկել, նա շուռ ե գալիս մյուսին, իսկ յերբ նրան ապրելն անհարմար ե՝ նա միայն գանգատվում ե: Իսկ դու ճիգ գործադրի՞ն շուռ յեկ:

Այսպես եր ասում բեմից պիեսի հերոսներից մեկը՝ յերկաթուղային բանվոր Նիլը:

Հասարակությունն այդ խոսքերին պատասխանում եր կատաղի ծափահարություններով:

Ել ավելի չերմ արձագանք եր գործում հանդիսադիմում Գորկու յերկրորդ՝ «Հատակում» պիեսը:

«Սուտը ստրուկների և տերերի կրնն ե»:

Սատինի այս դարձվածքը գրաքննիչն արգելեց արտասանել բեմից: Բայց պիեսի ներքին իմաստը գուրս մղել գրաքննիչին չհաջողվեց: Ամեն մի տողը ծնված եր ցասկոտ բողոքով այն կարգերի գիմ, վորի ժամանակ անթիվ մարդիկ կորցնում են կլանքի իրավունքը:

Այն իրավակարգը, վոր թույլ ե տալիս մարդկանց ստորացումը՝ մինչև նրանց նախկին մարդկանց աստիճանին հասնելը և կոստիլովի գիշերոթեանի բնակչիներ դառնալը՝ ստություն ե, և այդ ստությունը պետք ե վոչնչանա: Այսպես եյին հասկացել պիեսի քողարկված դիտավորությունը՝ վերնահարկի հանդիսականները՝ ուսանող յերիտասարդությունը:

«Հաստակում»-ի առաջին ներկայացումը վերափոխվեց Գորկու փոթորկահուլզ մեծարանքի: Հաստակությունն անվերջ դուրս եր կանչում հեղինակին: Նա բեմ եր դուրս գալիս շվարած ժպիտով, վարանումից մոռանալով հանել պապիրոսը ըերանից:

Այդ մեծարանքի մեջ զգացվում եր ինչ վոր ավելի նշանակալից բան՝ քան թատրոնական հաջողությունը:

ԳԼՈՒԽ XII


ՅԵՐԵՔ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՆՎԱՐԻ 9

«Միշտ պետք է կը ակե՛ւ մշշտ
կրակեցնք, գեներալ»:
Նիկոլայ II-ը Վլա-
դիվասովի պարես
Կազբեկի հետ խո-
սելիս:

Մրրիկը, վոր նախագուշակում եր «Մրրկահավը», վերջապես պալթեց: Յեկավ 1905 թվականը: Այն տարին արյուն եր հոսում ցարի մոայլ պալատի առաջ և Մանջուրիայի ոտար հողի վրա, վոստիկանական մասերի բակերում և ձյունածածկ կիսակայարաններում, Մոսկվայի խուլ փողոցներում և ուղմանավերի յերկնագույն տախտակամածի վրա:

Հեղափոխական անցքերը բոնկեցին այդ տարվա հենց առաջին որերին: Հունվարի 9-ին Գապոնը՝ ցարական պահնորդական բաժանմունքում ծառայող տեր-



Գորկին Կապրի կղզում: Հրապարակվում ե առաջին անդամ: (Պետական Գրական թանգարան):

տերը, վոր մեծ կարյերա յեր յերազում, Պետերբուրգի
բանվորական բազմությանը տարավ դեպի Զմեռային
պալատը: Բանվորները հանրագիր եյին տաշնում ցա-
րին տալու համար: Նրա մեջ ասկած եր.

«Մենք, Պետերբուրգի բանվորներս, մեր կանայք,
յերեխաները և անզոր ծեր ծնողները, յեկել ենք քեզ
մոտ, թագավիր, արդարություն և պաշտպանություն
վորոնելու:

... Այլևս ուժ չկա, թագավիր, Համբերությունը
հասել և սահմանին: Մեզ համար յեկել ե այս սոսկա-
լի սոմենտը, յերբ մահը լավ է, քան անտանելի տան-
ջանքների շարունակությունը»:

Յարի մոտ գնում եր յերկուհարյուր հազար մարդ՝
գնում եր հուսալքված և խարված ժողովուրդը: Նրա
մեջ դեռևս մարդում եր հավատ, թե Զմեռային պա-
լատում կարելի յե պաշտպանություն գտնել ձնշողնե-
րի դեմ:

Առաջիկա յերթի մասին կառավարությունը վա-
ղորդ գիտեր, այդ մասին գիտեր և թագավորը: Զոր-
դորք գիտեր, այդ մասին գիտեր և թագավորը: Զոր-
դորք բերված եյին մարտական պատրաստության:
Յարի ազգական մեծ իշխան Վլադիմիրը պալատում
տառում եր, թե —միայն ժողովրդի արյունը կփրկի գի-
տառում: Նրան հանձնվեց զորքերի հըամանատա-
ռությունը:

Այդ որը Գորկին փողոցումն եր, բանվորների
բազմության մեջ նա լսեց՝ ինչ զաղըելի կերպով
հնչեց փողհարի փողը և ինչպես այդ աղղանշանով
ոկսեցին գնդակահարումները:

Այդ սոսկումի որ եր—«այլող, ինչպես սառած
կերկաթը»:

Բայց բազմությունը միայն սարսափակ չեր-
բոնված: Գորկին լսում եր՝ ինչպես ե ժողովուրդը
ճշում մարդասպաններին.

— Դուք կարծում եք ժողովրդին կսպանեք:

— Ժողովրդին սպանել չի կարելի: Նա չի հատնի...
— Դուք ցարին սպանեցիք, հասկանում եք:

Հունվարի 9-ի առավոտյան բանվորները դեռ հա-
վատում եյին, թե իրենք կարող են գտնել ցարի-
պաշտպանությունը և իրենց ձեռքին բռնած ունեյին
հանրագիրը:

Այդ որվա կեսորին նրանք արդեն վրա ընկան-
գենքի և, չգտնելով այն, ձեռք եյին մեկնում աղյու-
սի ու քարի. Կապոնը թագնվեց, խնդրողները գարձան-
մարտիկներ և հունվարի 9-ը դարձավ սուսական հե-
ղափոխության առաջին որը:

Գորկին տուն վերադարձավ ցնցված և խկույն-
ցրեց մի կոչ՝ «Ռուսական բոլոր քաղաքացիներին և
յեվրոպական պետությունների հասարակական կար-
ծիքին»:

Այս, ինչ կատարվեց Պետերբուրգի փողոցներում,
նա անվանում եր կանխամտածված սպանություն և
վատահ կերպով տալիս եր գլխավոր դահճճի՝ ցարի-
անունը:

Գորկին բացարձակ կովի կոչ եր անում՝ ինքնա-
կալությունը տապալելու:

Կոչն ընկավ վոստիկանության ձեռքը:

Պահորդական բաժանմունքին արդեն լավ ծա-
ռոթ եր գրող-հեղափոխականի ձեռագիրը: Հունվարի
9-ից յերկու որ հետո Գորկուն ձերբակալեցին: Նա
ընկավ Պետրոպալովսկի բերդը—մի բանտ՝ ուր կա-

ուալարությունը գցում եր կարևորագույն քաղաքական հանցավորներին:

Եերկար միջնորդություններից հետո Գորկուն տվին ռազմագաներ՝ գրական աշխատանքների համար։ Կազմական աշխատանքների մասը։ Ապահովագույն աշխատանքների մասը։ Պիեսի վրա Պիեսի վրա ընկան հունվարի 9-ի տարբապալի ստվերները։ Գործող անձերից մեկն առում ե.

ԵՅԵՐՄ լսում եմ վորեե կոպիտ, խիստ բան, լեր կարմիր եմ. տեսնում, իմ հոգում հարություն ե առնում վշտոտ սարսափը և խկույն աչքերիս առաջ կանգնում ե այն գաղանացած ամբոխը, արյունովող դեմքեր, տաք կարմիր արյան լճակներ ավագի վրա...»

Բայց ինքը Գորկին արիությունը չեր կորցնում։ Պիեսի մեջ նաև մտցրեց կոմիկական տեսարաններ։ ԵՅԵՎ նրանց գրելիս բարձրաձայն ծիծաղում եր։ Պահնորդները լսում եյին բանտարկյալի ծիծաղը և տագնապալից տարակուսանքով կանչում եյին բերդի պարետին...

Եերբ դրանից մի քանի տարի առաջ Գորկուն զրին Նիժեգորոդսկի բանտը, բողոքների ալիք բարձրացավ ամբողջ Ռուսաստանում։ Այժմ գրողին պաշտպանելու դուրս յեկավ ամբողջ Ենվրոպան, «Գորկին պատկանում ե վոչ միայն Ռուսաստանին, այլ և ամբողջ աշխարհին»—հայտարարեց Փարիզի միտինգում նշանավոր Փրանսիական գրող Անատոլ Ֆրանսը։

Պետերբուրգ բողոքներ եյին սլանում Գերմանիայից, Պորտուգալիայից, Իտալիայից, Բելգիայից, Նիսից

Մաքսիմ Գորկու ազատությունն եյին պահանջում Փիգիկոս Պյեր Կյուրին և քանդակագործ Ոգյուստ Ռոդենը, սոցիալիստական առաջնորդ Ժան Ժո-

քեսը և նկարիչ Կլոդ Մոնեն—արտասահմանի մեջ բարեկամները մի մարդու, վորին ոռւս իշխանությունները բթամիտ համառությամբ շարունակում եյին անվանել «Նիժնի Նովգորոդ քաղաքի մեջանց»

Չեր կալանքով Յելրոպան անհանգստացած է, ասաց Գորկուն բերդում հարցաքննության ժամանակ ժանդարմական սպան՝ նախկին ծանոթը։ Յունարի առաջ այդ նույն սպան հարցաքննում եր Գորկուն Մետեխի բերդում....

Յեկ նորից, արգեն յերրորդ անգամ, կառավագությունն ստիպված յեղավ զիջել։ Գորկուն ազատ թողին։

Հավանորեն նա յերկար չեր կարող տանել բանտի կյանքը, վորտեղ քարը կարծես թե ուսում եր մարդկանց, Միամսյա բանտարկությունից հետո Գորկին նորից արյուն եր թքում։

Այն որը, վոր ժողովուրդը արյունոտ կիրակի անվանեց, չմոռացվեց։ Բանվորները պատրաստվում եյին զինված պալքարի, ապստամբության։ Նա բանկեց տարգա վերջին։

Գործադուլ արին Մոսկվայի բանվորները և դեպքերը միանգամից ահեղ կերպարանք ընդունեցին։ Դեռ վոչ վաղուց, միայն «Կազմակերը» գոչից փախչող բազմությունը, այժմ ինքն եր հարձակվում կազմակերի վրա։

Մոտենում եյին 1905 թ. հեղափոխության վճռական որերը։

Այդ ժամանակ Գորկին ապրում եր Մոսկվայում։ Նա զենքի փող եր հավաքում։ Նրա բնակարանը, ձիամարզարանի գիմաց, դարձել եր ուսումնական ճամ-

բար: Այստեղ բերում եյին հրացաններ, ատրճանակ-ներ, ոռումբեր և այստեղ բաժանում եյին մարտա-կան գուգազների մասնակիցներին: Տան բարեմիտ բնակիչները սարսափով ականջ եյին դնում խլացու-ցիչ կրակոցներին, վորոնց վորոտը գալիս եր Գորկու-ցնակարանից: Գրողին պաշտպանող կովկասցի ուսա-նողների գուգազը սենյակներում վարժական հրաձգու-թյուն եր սարքում:

Գորկին վկա յեր, թե ինչպես բանվորները բա-րիկազներ Եյին շինում, ինչպես զինվորների ջոկատ-ները կապար եյին թափում փողոցներում, ինչպես հրանոթները ջարդ ու փշուր եյին անում Պրեսնյան:

Ապստամբությունը ճնշվեց, բայց հեղափոխու-թյունը ճնշված չեր: Ամբողջ Ռուսաստանում տա-րածվում եյին մեքենայով արտազրած թերթիկներ՝ Գորկու նամակները բանվորներին:

«Պրոլետարիատը հաղթված չե, թեև կորուստներ կրեց: Հեղափոխությունն ամրացած և նոր հույսերով, նրա կադրերը հսկայական չափերով մեծացել են:

...Ռուսական պրոլետարիատը շարժվում և առաջ, զեղի վճռական հաղթություն, վորովհետեւ Ռուսաս-տանում այդ միակ դասակարգն եւ բարոյապես ուժեղ գիտակից և հավատացող իր ապագային: Յես ճշմար-տություն եմ ասում և այդ ճշմարտությունը կհաստա-տի ապնիվ և անշահախնդիր պատմաբանը»:

1905 թվին, Մոսկվայի ապստամբության նա-խորյակին, Գորկին ծանոթացավ Լենինի հետ:

Ճշմարտությունը, վորով Գորկին դիմում եր ուսւ ժողովրդին, այն ճշմարտություններ, վորն ասում եր և լենինը հեղափոխության մասին:

Յեղ այդ ճշմարտությունը պատմությունն ավե-լի շուտ հաստատեց, քան յենթադրում եյին պատմա-բաններից ամենաազնիվները:

*
**

Բարեկամները Գորկուն նախազգուշացրին սպաս-վող ձերբակալության մասին: Նա գնաց արտասահ-ման Գերմանիա և Ֆրանսիա, իսկ այնտեղից Ամերիկա:

Գորկին Նյու-Յորքում միահնդներում և լրա-գրերում յելույթներ ունեցավ ճառերով և հոգվածնե-ցով: Գորկին ագիտացիա յեր մզում ցարական կա-ռավարության դեմ և կոչ եր անում համաշխարհային հասարակական կարծիքին՝ խանգարել ոտարերկրյա բանկիրներին փոխառություն տալու ցարին:

Այդ փոխառությունը պիտի գնար հեղափոխական շարժումը ճնշելուն նույսաստանում:

Ամերիկայում, Ադիրոնդակայան լեռների կա-ռաչապատ փայտե տնակում, Գորկին սկսեց աշխատել «Մայրը» վեպի վրա: Իր հերոսներին Գորկին վեցրեց Ռումովովի բանվորների միջավայրից:

Պալել վասպովի և նրա մոր, Նիլովնալի պատ-կերները Գորկուն ներշնչել եին մարդիկ, վորոնք ի-րականության մեջ գոյություն ունելին և վորոնց նա-լավ ճանաչում եր: Հեղափոխական-բանվոր Պյոտր Զալոմովին եր այդ, դատապարտված ցարական դատա-բանի կողմից՝ Սորմովովի բանվորների մայիսնեկան ցուցին մասնակցելու համար: Իրա մայրն աշխատում էր հեղափոխական կազմակերպության միջ: ծպտված, մորթես ուխտավորուհի, նա յերկրում տարածում եր հեղափոխական զրականություն:

բար: Այստեղ բերում եյին հրացաններ, ատրճանակշներ, ոռումքեր և ալստեղ բաժանում եյին մարտական գոգազների մասնակիցներին: Տան բարեմիտքնակիչները սարսափով ականջ եյին դնում: Խլացուցիչ կրակոցներին, վորոնց վորոտը գալիս եր Գորկութնակարանից: Գրողին պաշտպանող կովկասցի ուսանողների գուգազը սննյակներում վարժական հրաձգություն եր սարքում:

Գորկին վկա յեր, թե ինպես բանվորները բարիկադներ Եյին շինում, ինչպես զինվորների ջոկատները կապար եյին թափում փողոցներում, ինչպես հրանոթները ջարդ ու փշուր եյին անում Պրեսնյան:

Ապստամբությունը ճնշվեց, բայց հեղափոխությունը ճնշված չեր, Ամբողջ Ռուսաստանում տարածվում եյին մեքենայով արտազրած թերթիկներ՝ Գորկու նամակները բանվորներին:

«Պրոլետարիատը հաղթված չե, թեև կորուստներ կրեց: Հեղափոխությունն ամբացած է նոր հույսերով, նրա կադրերը հսկայական չափերով մեծացել են:

...Ռուսական պրոլետարիատը շարժվում է առաջ, դեպի վճռական հաղթություն, վորովհետեւ Ռուսաստանում այդ միակ գասակարգն ե՝ բարոյապես ուժեղ, գիտակից և հավատացող իր ապագային: Յես ճշմարտություն եմ ասում և այդ ճշմարտությունը կհաստատի ազնիվ և անշահախնդիր պատմաբանը»:

1905 թվին, Մոսկվայի ապստամբության նախորյակին, Գորկին ծանոթացավ Լենինի հետ:

Ճշմարտությունը, վորովի Գորկին դիմում եր ուսւողովրդին, այն ճշմարտություններ, վորն ասում եր և Լենինը հեղափոխության մասին:

Յեկային ճշմարտությունը պատմությունն ավելի շուտ հաստատեց, քան յենթադրում եյին պատմաբաններից ամենաազնիվները:

*
**

Բարեկամները Գորկուն նախազգուշացրին սպասվող ճերբակալության մասին, նա գնաց արտասահման Գերմանիա և Ֆրանսիա, իսկ այնտեղից Ամերիկա:

Գորկին Նյու-Յորքում միտինգներում և լրագրերում յելույթներ ունեցավ ճառերով և հոգվածներով: Գորկին ագիտացիա յեր մզում ցարական կառավարության գեմ և կոչ եր անում համաշխարհային հասարակական կարծիքին՝ խանգարել ոտարերկրյա բանկիրներին փոխառություն տալու ցարին:

Այդ փոխառությունը պիտի գնար հեղափոխական շարժումը ճնշելուն Ռուսաստանում:

Ամերիկայում, Աղբերոնդակյան լեռների կանաչապատ փայտեւ տնակում, Գորկին սկսեց աշխատել «Մայրը» վեպի վրա: Իր հերոսներին Գորկին վեցըրեց Սորմովոյի բանվորների միջավայրից:

Պավել Վլասովի և նրա մոր, Նիլովնայի պատկերները Գորկուն ներշնչել եին մարդիկ, վորոնք իրականության մեջ գոյություն ունելին և վորոնց նալավ ճանաշում եր: Հեղափոխական-բանվոր Պյոտր Զալոմովին եր այդ, գատապարտված ցարական դատաքանի կողմից՝ Սորմովովի բանվորների մայիսներանցուցին մասնակցելու համար, նրա մալրն աշխատում եր հեղափոխական կազմակերպության մեջ, ծպտված, վորպես ուխտավորուհի, նա յերկրում տարածում եր հեղափոխական զբականություն:

Այդ նշանավոր կինը բացառություն չեր: Գորկին ճանաչում եր հեղափոխական Կադոմցեմբերի մորը՝ վորն Ուժայում գտավել եր այն պատճառով, վոլքորդու համար բանտ եր անցկացրել ուսւմբեր, վո-



Վ. Ի. Լենին և Մ. Գորկի. 1920 թ.

րոնցով փախուստի ժամանակ պայթեցրել եյին պատը: Գորկին կարող եր անվանել մալրերի մինչև տաս անուն, վորոնք դատվել ելին վորդիների հետ միաս սին:

Այդ հերոսական մայրերից վոմանց Գորկին ճանաչում եր անձամբ:

Ցարական իշխանությունը կոահեց վեպի հսկայական հեղափոխական նշանակությունը:

Այն ժուռնալը, վորի մեջ տպվեց «Մայրը» վեպի առաջին մասը, բռնագրավեց, իսկ վեպի յերկը ըորդ մասը գրաքննիչները բգկատել եյին ոինչև անձանաշելություն: Յերկից գուրս եյին գցվում ամբողջ գլուխներ:

Գորկուն իրեն կառավարությունը վորոշեց դատի տալ:

«Ведомости петербургского градоначальства» թերթում լույս տեսավ մի հայտարարությունն թի «Սանկտ-Պետերբուրգի շրջանային գատարանի մեղադրանքով վորոնվում ենիժեկորոգյան ցեխային, ներկարարական ցեխի վարպետ Ալեքսեյ Մաքսիմովիչ Պետրովը»

Բարեբախտաբար Գորկին հեռու յեր:

Արտասահմանի հեղափոխական յելույթներից հետո չեր կարող վերադառնալ Ռուսաստան և բնակություն հաստատեց Իտալիայում՝ Կապրի կղզում:

Այս տարիներին նա ձտերմացավ Լենինի հետ, Այս տեղի ունիցավ 1907 թվին, Ռուսաստանի սոցիալդեմոկրատական Վ համագումարին Լոնդոնում, ուր Գորկուն հրավիրել եյին բոլշևիկների առաջնորդները: Ամեն որ հինավորց փակ կառքը, նման այն

Գառքերին,, վորոնցով գնում եյին Դիկենսի հերոսները, տանում եր Գորկուն Հոնդոնի ծայրը, նետաձելուսամուտներով փայտա յեկեղեցու շենքի մոտ, վորտեղ տեղի լիր ունենում համագումարը. ուրիշ ավելի շամապատասխան շենք չճարվեց:

Սյունին հենված Գորկին ժամերով դիտում եր համագումարին մասնակցողներին՝ և ականջ եր դնում մենշևկիների ու բոլշևիկների կրօսու վեճերին:

«...Բայց, ահա, արագ ամբիոն բարձրացավ Վլադիմիր Իլիչը, կոկորդում արտասանեց «տօվարիզմ»: Ինձ թվաց, թե նա վատ ե խոսում, բայց արդեն մի բոպեյից հետո, լես, ինչպես և բոլորը, «կլանված» եյի նրա ճառով. Առաջին անգամն եկի յեա լսում, վոր քաղաքականության ամենաբարդ հարցերի մասին կարելի յե խոսել այդպես հասարակ ձևով: Նա չեր աշխատում հնարել գեղեցիկ դարձվածքներ, այլ ամեն մի խոսքը տալիս եր պարզ, զարմանալի հեշտությամբ մերկացնելով նրա իսկական իմաստը»:

Իր հիշողությունների մեջ այսպես եր հաղորդում Գորկին իր տպագորությունները տրիբուն Վլադիմիր Իլիչի մասին:

Այս որերից սկսվեց անձնական բարեկամություն Գորկու և Լենինի միջև:

Վլադիմիր Իլիչը գալիս եր Կապրի՝ Գորկու մոտ: Այսուեղ, հանգստանալով իր լարված աշխատանքից՝ Լենինը շախմատ եր խաղում, ձուկ եր վորսում, ման եր գալիս քարոտ շաղիղներով, հիանում եր որոճի վոսկյա ծաղիկներով:

Տերեկոները Գորկին հիշում եր իր թափառումների մասին Ռուսաստանում, և Լենինը ազահությամբ

լսում էր այդ գարմանալի պատմությունները: Կապրիի ձկնորսները սիրեցին Գորկու հյուրին: Յերբ Լենինը հեռացավ, նրանք շարունակ հարցնում ելին Գորկուն.

—Ցարը նո չի ճանկի նրան:

Գորկուն գրած նամակներում Լենինը ցուցահանում եր խոր ընկերական կարեկցություն և մտահոգվում եր նրա գրական աշխատանքի մասին ու անհանգստանում թոքախոռվ հիվանդ այդ մարդու առողջության համար:



Մ. Գորկին 1910 թ.

Լենինը Գորկուն անվանեց պրոլետարական արվեստի խոշորագույն ներկայացուցիչ:

«Կասկած չկա, — գրում եր Լենինը, — վոր Գորկին վիթխարի գեղարվեստական տաղանդ ե, վորը բերել ե կրերի մեծ ոգուաներ համաշխարհային պրոլետարական շարժմանը»:

Յերբ 1913 թվին ցարական կառավարությունը քաղաքական ներում հայտարարեց, Լենինը Գորկուն խորհուրդ տվեց վերագրունալ Ռուսաստան:

Գորկին թողեց կապրին և տեղափոխվեց Պետերբուրգ:

Մի տարի հետո սկսվեց համաշխարհային պատերազմը:

Այս տաղերը գրողին վիճակվեց այդ ժամանակ տեսնել Գորկուն մի հեղափոխական ուսանողական խմբակի ժողովում:

Գորկին խոսում եր պատերազմի մասին, պատմում եր այն մասին՝ ինչպես ուսղմաճակատում յերկու զինվոր—ուսւ և գերմանացի—միաժամանակ սվինները իրեցին մեկը մլուսի մեջ և մեռած մնացին կանգնած հրացանի խաչմերուկի պես:

Այդ իրեղու զինվորը, կարծես թե, մարմնացնում ելին ժողովուրդների ճակատագիրը՝ դատապարտված անմիտ և ամոթալի փոխադարձ վոչնչացման:

Վշտի արտահայտությամբ եր խոսում Գորկին ուսղմաճակատի մարդկանց մասին: Բայց վիշտը փոխարինվեց ցասումով, յերբ նա խոսեց թիկունքի մարդկանց մասին—այդ խոնութպանների վորոնք պատրաստ են ամեն մի ամենազազելի հանցագործություն վեր հանել վորպես աղքային հերոսություն:

Իր հրապարակային լեռոյթներից մեկում Գորկին տասց:

Մենք սերկա յենք ինչ վոր հրեշային խողի տոնակատարության, վորը կատաղել ե և բութ դնչով վոչնչացնում ե ամբողջ աշխարհը:

Գորկու ստեղծած «Լետոպիչ» ժուռակական կառավարությունը պետք է առաջարկ կատար աշխարհի առաջարկ կառավարությունը:

յեկավ իմպերիալիստական սպանդի գեմ: Այստեղ առաջին անգամ լույս տեսավ Մայակովսկու «Յօնի և միք» պոեմը:

Մայակովսկին դեռ քիչ եր հայտնի: Հասարակությունն ուղղում եր նրա մեջ տեսնել միայն քաղաքական սկանդալիստ՝ դեղին կոֆտով և ցիլինդրով: Բայց նա սկանդալիստ չեր, այլ բունտարար և իր պոեմում, սեփական արտահայտությամբ՝ «հանգելոյի թքել ե պատերազմի յերեսին»:

Պատերազմի յերրորդ տարվա ձմեռը թվում եր յերկար, անվերջ: «Լետոպիչ» մի խմբագրատանը խուսում ելին գործարանների հուզումների և ուղմաճակատներում ցարական բանակի պարտությունները մասին:

Խմբագրական մի ժողովում Գորկին ասաց:

—Մենք մոտենում ենք վախճանին:

Մի շաբաթից հետո Պետերբուրգի և կայսնի միջև թրի յեկող ցարական կապույտ զնացքը պահպեց Դնտկայարանում և Նիկոլայը ստորագրեց հրաժարմանակտը: 1917 թվի փետրվարն եր:

* *

«Իմ հիշողության մեջ,—մտաբերում ե Գորկու ընկերներուց մեկը՝ Վ. Դիսնիցին,—մնացել ե Գորկու և Լենինի 1917 թվից հետո տեղի ունեցած հանդիպումներից մեկը: Լենինի կյանքի գեմ եսերունիկապլանի կատարած մահափորձից կարճ ժամանակ հետո յեր այդ վաղիմիր իլիշն աշխույժ եր, ուրախ շփում եր ձեռքերը, ժպտում եր՝ Գորկուն, շտապեցնում եր նրան:

— Դե, դե, պատմեցեք, ասացեք, ինչն ե ձեզ
վշտացնում...

Ներս մտավ Յակով Սվերդլովը «Հայրենակիցներին» տեսնելու*):

Վլագիմիր Իլիչը հանգիստ պատմում եր մահափորձի մասին, լրիվ գործիմացությամբ բացատրում եր հիվանդության պատմությունը, ինչպես անցավ վերահատությունը:

— Ինչպես պատերազմում, Նա դեռ շուտ չի վերջանա...

Համառորեն հյուրասիրում եր մեզ.

— Պանիր կերեք, հացը թարմ ե, փափուկ, կեռաս կերեք, հենց նոր ե գնաց, լվացած ե...

Հյուրասիրությունը շատ համեստ եր: Հյուրասեր տանտերը չգիտեր, վոր թել չունի, և յես կամացուկ գնացի գրասենյակ, վորտեղ մի ծառայողից՝ նիժեգորոցի հին բարեկամունուց, մի գցելու թեյ ճարեցի ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահի համար:

Գորկին մասյլված հարցուվորձ եր անում վլագիմիր Իլիչին նրա առողջության մասին՝ չի անդրադառնա, արդյոք, վերքը նրա աշխատունակության վրա: Վլագիմիր Իլիչը, զգուշ, բայց ազատ, ձեռքը վերև եր բարձրացնում, ձգում եր նրան, ծալում և ուղղում: Գորկին զգուշությամբ շոշափում եր վիզը, ձեռքի մկանները: Վլագիմիր Իլիչը կանգնած եր ուղիղ և խատրեն նայում եր Սլեքսեյ Մաքսիմովիչին, թվում

*) Յես, Սվերդլովը, ինչպես և Մ. Գորկին ու հիշողությունների հեղինակ Վ. Գեսնիկին, նախահեղափոխական տարիներին ապրում ելինք նույնի-նովդորովում:

եր, վոր Գորկու շարժմունքները ասում եյին ինչ վոր ավելի մեծ բանի մասին, քան հասարակ ցանկություն՝ համոզվելու ընկերոջ Փիզիկական հզորության մեջ: Գորկին, կարծես թե, ուզում եր նորից և նորից վերջնականապես հավատացնել իրեն նրանում, վոր հատկապես կենինի մեջ ե կենտրոնացած միլիոնների ուժն ու կամքը, վոր նրանից ճառագայթում ե պայծառ լույս՝ վաղվա որվա վրա: Յեվ նա համոզվեց»:

Լենինն ել չեր գագարում Գորկու մասին հոգալուց: Յերբ 1921 թվին նրա հին հիվանդությունը նորից սուր կերպարանք ընդունեց՝ կենինը պնդեց արտասահման գնալ բուժվելու:

Գորկին նորից բնակություն հաստատեց Խտալիայում—Սորբենտոյում:

Նա ուշագրությամբ հետամտում եր այն բոլորին, ինչ կատարվում եր խորհրդային յերկրում, ավելի և ավելի ամուր ու բազմաթիվ ելին դառնում այն թելերը, վորոնք գրողին կապում ելին իր հայրենիքի հետ:

Յերբ Գորկին իր վաթսունամյա տարիքում, 1928 թվին, յեկավ ԽՍՀՄ, յերկիրը նրան ընդունեց, վորպես իր մեծ արվեստագետ—հեղափոխականին:

1932 թվին Խորհրդային Միությունը հանդիսավոր կերպով տոնեց Գորկու գրական գործունեցության քսանամյակը:

«Մաքսիմ Գորկու անունը,—ասված եր Համ. Կ (թ) կ կենտկոմի վողջունի մեջ,— թանգ ե և հարազատ խորհրդային յերկրի աշխատավորներին և նրա սահմաններից ել գուրս, վորպես անուն մեծագույն արվեստագետ—հեղափոխականի, մարտնչողի՝ ցարիզ-

մի դեմ, կապիտալիզմի դեմ, միջազգային պլրուետարական հեղափոխության համար և բոլոր յերկրների աշխատավորների ազատության համար՝ կապիտալիզմի լծից»:

Գորկու հորելյանի տոնակատարությունը փոխվեց իսկական համաժողովրդական հանդեսի: Յեղի յերբ Մեծ թատրոնի հավաքույթում կուսակցության անունից յելույթ ունեցավ ընկեր Ստեղլին՝ նա ասաց.

«Վաղիմիր Իլիչը առաջինը հայտարարեց, վոր Գորկին պրոլետարական արվեստի բնագավառում մեծագույն հեղինակությունն է:

Լենինը չկա: Զկա Լենինը, վորին Ա. Մ. Գորկին նվիրել ե իր գեղեցիկ եջերը: Բայց կենդանի յե մեր կուսակցությունը, կենդանի յե Լենինի գործը՝ մարդիկ, վորոնց նա գգվել—սնուցել ե: Յեղ զարմանալի չե, վոր այժմ մեծ պրոլետարական գրող Գորկու անունը հյուսվում ե ընկեր Ստալինի անվան հետ՝ պրոլետարական հեղափոխության առաջնորդի, վորի մեջ մարմնավորվում ե այն բոլոր լավը, ինչ ունեցինք մենք կուսակցության մեջ»:

*
**

Մտերմությունը լենինի հետ՝ Գորկու բունտարությունն ուղղեց դեպի հեղափոխական հունը: Մտերմությունը Ստալինի հետ կազմակերպեց Գորկու գործը, նրա կյանքի վերջին տարիների աշխատանքը:

Վերադառնալով ԽՍՀՄ, Գորկին մեր յերկրի գրական կյանքի գլուխ ե կանգնում: Նա հիմնում և խըմ-



Խ. Վ. Ստալին և Ա. Գորկի. 1932 թ.

ըագլում և մի քանի ժուռնալներ, առաջ և մղում՝ «Թարթիկների և գործարանների պատմության» և «Քաղաքացիական պատերմագմների պատմության» հրատարակության միտքը, էեկավարում և Խորհրդային Միության գրողների գործունեյությունը:


Այդ հսկայական աշխատանքը Գորկուց շատ ուժ և ժամանակ եր խլում, բայց նա չեր թողնում նաև զրողի աշխատանքը: Նա գրում և «Կիմ Սամգին» վեպի շարունակությունը, մի շարք հոդվածներ, պիեսներ, վորոնցից «Յեգոր Բուլիչովը» մտնում և Գորկու ամենանշանակալի և փայլուն ստեղծագործությունների շարքը:

Հիվանդությունը՝ Գորկու հին քառասնամյա հիվանդությունը, վոր վաստակել եր բուլկու հիմնարկների ներքնատներում, գիշերոթեանների թախտերի վրա և բանտային կամերներում, իրեն զգալ եր տալիս՝ ամեն մի տկարությանը տալով վտանգավոր բընութիւն:

Բայց ապրելու ցանկություն կար: — Ելի չորս գիրք պիտի զրել: Չորս գիրք, յերկու տարի: Ութ տարի:

Այսպես եր ասում Գորկին իր ընկերներին: Բայց 1936 թվի հունիսին նա հիվանդացավ գրիպով, և հիվանդությունը մի անգամից սպառնալի կերպարանք ընդունեց:

Բժիշկները, մտերիմները, ընկերները, ամբողջ յերկիրը հետամտում եին մեծ զրողի հիվանդության ընթացքին: Իսկ նայ այն ծեր մարդը, այնպիսի թոքերով, վորոնք հազիվհազ եյին ոդ ներշնչում, այնպիսի սբառով, վորը հազիվհազ եր արյուն մղում, վոչ



Մ. Գորկու յելութը ճողովում. 1932 թ.

մի անդամ չգանգատվեց իր հիվանդությունից ։ Նա ականջ չեր գնում իր ծանր շնչառությանը և անկանոն զարկերակին—նա լի յեր նրանով, ինչով ապրել եր այն բոլոր տարիները՝ խոհերով իր աշխատանքի և իր հայրենիքի մասին։

Հեալով, ընդհատելով իր խոսքը յերկար ընդմիջումներով, նա խոսում եր Խորհրդային Միության սահմանադրության մասին՝ և յերկու բարձիկ թթվածին ընդունելու արանքին՝ խնդրում եր ցուց տալ իրեն այն լրագիրը, վրաեղ տպագրված և սահմանադրության բնագիրը։ Անագին զգացմունքով հիշատակում եր Ստալինի մասին, մի քանի անդամ հիշեց Լենինին, իր առաջին հանդիպումը նրա հետ։

Զառանցանքի մեջ անդամ նա չարտասանեց վոչ մի գանգատ, վոչ մի խոսք իր մասին։

Այն ինչ, նա գիտակցում եր, վոր մեռնում և

Յերբ բժիշկները, համաձայն իրենց պարտականության, փորձեցին հիվանդին միտք ներշնչել, թե նրա դրությունը լավանում է, թե նա կառողանա, Գորկին քմծիծաղով պատասխանեց։

— Դուքեկան ե, թեև անհայտալի։

Հունիսի լույս 18-ի գիշերը նա գիտակցությունը կորցրեց։ Զառացանքի մեջ նա խոսեց այն մասին, ինչ նրան անհանդատացնում եր մինչև անդամ այդ վերջին ժամերին։

— Պատերազմներ կլինեն, Պետք ե պատրաստվել... Հանկարծակի չպետք ե դալ...

Առավոտյան գեմ նա մեռավ։

Գորկու մահվան լուրն արագությամբ տարածվեց ամբողջ լերկում։ Այն, ինչ զգում եյին միլու-

նավոր մարդիկ վշտի այդ որերին, արտահայտեց Վ. Մոլոտովը իր ճառով՝ սպի միտինգում, Կարմիր հրապարակում։

«Այսոր, հրաժեշտ աալով Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկուն, մենքն ընրա ընկերները և անհամար ընթերցող—լերկպագուները, ապրում ենք այնպիսի զգացում, վոր մեղանից ամեն մեկի սեփական կյանքից ինչ վոր փայլուն կտոր հեռանում և ընդմիշտ դեպի անցյալը»

...Լենինից հետո Գորկու մահը ամենածանր կորուստն ե մեր լերկը և մարդկության համար։

ԳԼՈՒԽ XIII

ԳՐԱԴԱՐԱՆ

Հասարակ ծագումի տարատոհմիկ ոռւս գրողներից շատերի վիճակն և լեզել վոլգերգական։

Սրա շատին հիշեցրել ե Գորկին իր հոգվածներից մեկում։

Պոմյալովսկուն սեմինարիայում սովորելու ընթացքում զանահարել են 400 անդամ։ Լեյլիտովին մտրակահարեցին հրապարակով, ամբողջ գասարանի առաջ, ինչպես ինքն և արտահայտվել—«հոգին մտրակահարեցին մարմնից»։ Տասչորս տարեկան Ռեշետնիկովը գատի տակ ընկալ և յերկու տարի բանտ նստեց։ Այս գրողները, վորոնք ուսւ գրականությանը տվել են այնպիսի գործեր, ինչպիս «Օчерки бурсы», «Мещанское счастье», «Поддиповцы», շատ լավ գիտելին թե ինչ ե մոլացիկ գոյությունը և խուլ անհայտությունը։

Հաղիվ հասնելով լրիվ հասունության՝ նրանք
մեռնում եյին իրենց խլանկյուն բնակարաններում կամ
հիվանդանոցի՝ աղքատներին հատկացրած, թախտերի
վրա:

Նրանք իրենցից հետո թողնում ելին միայն ձեռ-
ուագրեր, և այդ ձեռագրերը յերբեմն հիշեցնում եյին
ինքնասպանների ընդարձակ հիշատակարաններ՝ այն-
քան նրանց մեջ վիշտ ու հուսահասություն եր լի-
նում:

Գորկու վիճակն ավելի ծանր եր, կարծես թե նա
իր մեջ միացնում եր այն բոլոր փորձությունները,
վոր բաժին եր ընկնում այդ գրողներին:

Նրան տանջում եյին ինչպես Պոմյալովսկուն,
հրապարակով ստորացնում եյին ինչպես Լեվիտովին,
նա Վոլգայի վրա աշխատում եր վորպես բեռնող,
ինչպես Կուշչեվսկին Նեվայի վրա:

Ճիշտ ե, առաջին անգամ նա բանտ մտավ իրու
արդեն հասակավոր մարդ բայց գեռես տասնվեց տա-
րեկան հասակում Գորկին դառնում ե բուլկի թխող
Սեմենովի «կալանավորիկ», իսկ այդ, գուցե, բան-
տից սարսափելի յե:

Չորս տարեկան հասակում Գորկին հիվանդա-
ցավ խոլերայով, ութ տարեկան՝ ծաղիկով: Վոտնա-
մանի խանութում աշկերտ ժամանակ սաստիկ այ-
րեց իրեն շշիով: Նրան տանը և մարդկանց մեջ
այնպես եյին ծեծում, վոր մի անգամ հարկ յեղավ նրան
հիվանդանոց տանել և բժիշկը նրա մարմից հանեց
42 ցլեպ, այս անգամ նրան ծեծել ելին փիջու մար-
խի կապուկով: Վորսորդն անտառում մխեց նրա մեջ
կոտորակի լից: Ուկրայնական կանգիբովկա գյուղում

ամբոխը քիչ եր մնում սպաներ նրան: Մերձվոլգյան
կրասնովիդով գյուղում հազիվ ազատվեց իր վրա
հարձակված կուլակներից: Լաստանավի վրա աշխատե-
լիս՝ նա ընկալ նավամբարը և ծանր ջարդվածքներ
ստացավ:

Մահացու հիվանդությունները, գաղանացած մար-
դիկ և դժբախտ գեղքերը լրացնում են յերիտասարդ
Գորկու կենսագրությունը:

Նա վաղ զգաց իր կյանքի ամբողջ ծանրությու-
նը և գոյության զարհուրանքը նրանց, վորոնք շրջա-
պատում եյին նրան:

Յերեխսա ժամանակ նա սիրում եր ընկերների հետ
միասին իջնել ձորակը, այնտեղ, հատակին, նստելով
մեծ գերանի վրա, յերեխաները յերգում եյին: Յեր-
գեցիկ խումբը զեկավարում եր Գորկին, և նա միշտ
տխուր յերգեր եր ընտրում: Զորակի յեղբին հավաք-
վում եյին մարդիկ և յերկար լսում եյին յերեխաների
յերգը: Տիսուր յերգերը դուր եյին գալիս:

Յեկ ահա, այդ յերեխան, վորին վիճակված եր
անցնել անվերջ ծանր ու տանջալից ուղի, հետո զառ-
նալով զրող, զրականություն բերեց վիչ միայն ամե-
նասկ ճշմարտությունն այն մասին, թե ինչպես եր
ապրում հատակում նվաստացած ոռու մարդը, այլ և
ուրախալի կոչ՝ զեպի ավելի լավ կյանք:

Վորտեղ եր վերցրել Գորկին այդ զարմանակի
արիությունը:

Շատ արիություն նա պարգև եր ստացել հորից՝
հյուսն և պատառող Մաքսիմ Սավատեկչից: Արիու-
թյունը յերեխալի մեջ ամրացնում եր Ակուլինա իվա-
նովյան՝ Գորկու հրաշալի տատը Ավելի ուշ Ալյոշա

ՊԵՀԿՈՎԸ՝ նիժեկորության չարդախների և ներքնաւաների բնակիչը, արիությունը չտավ զրգերի մեջ։
Բայց արդյոք, իրկան կարող եր բավականաւանալ հավատը դեպի կյանքը։


Գորկու հերոսուհիներից մեկը՝ պառավ իդերգիլու ասում ե.

«Յերբ մարդ սիրում ե սխրագործություններ, նա միշտ կարող ե անել, և կզմնի՝ վորտեղ այդ հարկավոր ե։ Դիտես, կյանքում միշտ տեղ կա սխրագործությունների համար»։

Այն սիրագործությունը, վոր կատարեց Գորկին, հենց նրա ապրած կյանքն եր։ Նա գնում եր նրա հանդեպ, կարծես ուզում եր իմանալ բոլոր ծանրություններն ու տառապանքները. վորոնք սպասում երին մուրացիկ թափառաշրջիկին և գանազան սև աշխատանքների մարդուն՝ Ալեքսեյ Պեշկովին։

Կարծես՝ նպիսագուշակելով, վոր մարդիկ, վորոնց հետ Գորկին բախվում եր յերկար ու խճված ուղիներում միժամանակ կիոխարկվեն նրա պատմվածքների, վեպիկների և դրամաների հերոսների, նա վոչ միայն դիտում եր նրանց—նա հետամտում եր նրանց, գնում եր նրանց հետեւից կրնկակոխ, ինչպես անխոնջ վորսորդ։

Մի անգամ, թափառումների ժամանակ, Գորկին ընկավ մի գավառական քաղաք, վոր նման եր տաղտկալի յերազի։ Բայց անպիտան հյուրանոցում տեսավ ինչ-վոր մարդ չեսուչե բաճկոնով և հետաքրքրվեց նրանով։ Գորկին մոռացավ տաղտկալի քաղաքի մասին, իր հետագա ճանապարհի մասին։ Նա հետեւմ եր հերոսին փողոցներում, ճաշարաններում, գերեզմանատանը, մինչև նրա համար չպարզվեց, վոր նրան



Մ. Գորկին պիտուղների խմբի մեջ՝ «Վազ Կրոսիք» դրակ հղումների. 1934 թ.

հետաքրքրող մարդը միայն կուշտ քաղքենի յի, տաղու-
կալի այս քաղաքի պես:

Այսպիսի հիասթափումներ հաճախ ելին լինում,
բայց ամեն անգամ Գորկու հիշողության մեջ նստում
եր նոր գիտելիքի մի փշուր:

Նա գրականություն բերեց վոչ միայն այն մարդ-
կանց ճանաչելը, վորոնց հին գրողները դեռևս յերբեք
երենց հերոս չելին ընտրել այլ և գրականագետների
կողմից մոռացված ժողովուրդների, յերկրի, գետերի
ու ճանապարհների ճանաչելը:

Մի պատմվածքում իր հերոսի բերանով նա նկա-
տել ե. «Ուստաստանի մասին, յեղբայր, չի կարելի
ասել՝ ինչ խելքդ կտրի: Ամեն մի նահանդ ջոկ հոգի
ունի»:

Ինքը Գորկին նկարագրում եր մոլդավական
«Վայրի դաշտը» և կերֆենցի անտառները, ուկրայնա-
կան մեծ ճանապարհները և կուրանի ստանիցաները,
և բոլոր անհամար պելզամների մոտով, վորոնք բաց-
վում են ընթերցողի առաջ, Գորկին անցել և ինքը՝
մաղախը շալակին և գավաղանը ձեռքին:

Գորկին՝ իր գիտելիքները դործադրելը մի ան-
գամից չսովորեց: Փառքը նրա մոտ շուտ յեկավ, այ-
նուամենախիվ Գորկու ուղին գեպի իր արվեստը յեր-
կարատե եր:

Նա համարյա տասը տարեկան հասակից սկսեց
հիշատակարան տանել, և այդ նրա առաջին գիրքն
եր, վոր նա գրում եր միայն մի ընթերցողի համար—
իրեն համար:

Ավելի ուշ, Հաղանում ապրելու ջահել որերին,
վոտանավորներ եր գրում, նրանք վատ ելին դուրս

գալիս, իսկ յերբ նա վորոշեց ձեռնարկել արձակի, շա-
րունակում եր զբել ինչ վոր կիսավոտանավորով, յեր-
գող դարձվածքներով:

«Յես ընդհանրապես, — մտարերում եր Գորկին,—
աշխատում եյի «գեղեցիկ» զրել:

«Ծովը ծիծաղում ե», գրում եյի յես և յերկար
ժամանակ ճավատում եյի, վոր այդ լավ ե: Դեղեցկու-
թյան հետեւ ընկնելով, յես շարունակ մեղանչում
եյի նկարագրությունների ճշտության դեմ, իրեն
անկանոն եյի դում, անձգրիտ եյի լուսաբանում
մարդկանց»:

Յերկու գրող, վորոնց կարծիքը Գորկին ամե-
նից թանգ եր գնահատում—Տոլստոյը և Զեխովը—
այդ մասին ասում եյին յերիտասարդ գրողին.

—Վառարանը ձեղ մոտ այնպես չի դրված, —ա-
ռաց Տոլստոյը Գորկուն «Քսանվեց և մեկ» պատմված-
քի առթիվ:

Պարզվեց վոր վառարանի կրակը չեր կարող
բանվորներին լուսավորել այնպես, ինչպես զբել եր
Գորկին:

Իսկ Զեխովը Գորկու հերոսուհիներից մեկի մասին
նկատեց.

—Նա յերեք ականջ ունի, բարեկամ, մեկը
կզակի վրա, նայեցնք:

Սրանք, ի հարկե մանր բաներ եյին, բայց ա-
ռաջանում եյին նրանից, վոր ճիշտ ու պարզ զբելու
և ամեն մի խոսքի խիստ ընտրություն անելու հըմ-
տությունը պակասում եր: Գորկին ավելի և ավելի
հասկանում եր, թե ինչքան գժվար ե և ինչպես ան-
հրաժեշտ արվեստագործի համար այդ ճշտությունն ու
պարզությունը:

Նույն զեխովն ասում եր Գորկուն վաղ գրված
«Մալիա» պատմվածքի մասին:

—Այ, դուք կարդացիք՝ «Ճռվլ ծիծաղում եր» և
կանգ առաք: Դուք կարծում եք կանգ առաք այն
պատճառով, վոր այդ լավ ե, գեղարվեստորեն ե: Զե,
ինարկե: Դուք կանգ առաք պարզապես այն պատճառ-
ով, վոր մեկեն չհասկացաք՝ ինչպես թե՝ ծով՝ և
հանկարծ ծիծաղում ե: Ծռվլ չի ծիծաղում, չի ար-
տասկում, նա աղմկում ե, ծփում ե, փայլում ե:

—Նայեցեք Տոլստոյի մոտ, արել ծագում ե, թռչ-
նակները յերգում են... վոչ վոք չի հեկեկում և չը
ծիծաղում: Բայց չե վոր, հենց սա յե ամենազլսա-
վորը՝ պարզություն...

Այդ արվեստը, պարզ գրելու շատ դժվարին ար-
վեստը, Գորկին սովորում եր, յերկար և անխոն: Շատ
բան եր սովորում ուրիշ գրողներից և շատ բան ժո-
ղովրդից՝ լեզվի այդ ստեղծագործողից: Նորից և
նորից ուշադրությամբ կարդում եր կլասիկներին՝ Տոլս-
տոյի, Ֆլորենի, Չեխովի, Դիկենսի, Լեսլովի նիւելի-
գրքերը, բայց անդադար ականջ եր դնում մարդկանց
խոսքին, վորոնց միջավայրում ապրում եր՝ արհեստա-
վորների, առետրականների, զինվորների, բուրլակների,
գերասանների, բուլիագործների, յերգիչների, նավաս-
տիների...

Յեվ հասավ, վերջապես, արվեստի այն բարձր
աստիճանին, յերբ գեղեցկությունն անբաժան և պար-
զությունից և ճշմարտությունից, յերբ ալդ պարզու-
թյունն ու ճշմարտությունը հենց ինքը գեղեցկու-
թյունն ե:

Նա սովորեց նկարագրել մարդկային գեմքեր,
գետեր, տներ, յերկինք, անտառ այնպիսի ճշգրիտ

և հիշողության մեջ մնացող բառերով, վոր կար-
ծես թե նրանք թղթի վրա չեն տպագրված, այլ
քանդակած են թանկագին քարի վրա:

Ահա Գորկու ուշ տարիների նկարագրություն-
ներից մեկը.

«Նատած ելինք այդում՝ պտուղների ամետիստի-
ուլունքներով ճոխ դարձարված կեռասէնիների ստվե-
րում: Յերեկո յեր, հեղձուցիչ շողը ամպրոպ եր նախա-
գուշակում: Բաշած կաթի գույնի յերկնքում փրփրում
եյին ամպերի թուխ գորշագույն փաթիլները, ստվեր-
ները սահում եյին այդով, և տարորինակ եր տեսնել-
վոր սաղարթն անշարժ ե»:

Գորկու հեղինակային սկեսուն տեսողությունը
իր շրջապատում՝ չոկում եր այդ բազմաթիվ յերանգա-
վորումները, իսկ հիշողությունն նրանց ամրացնում եր:

Դեռևս մանուկ ժամանակ Գորկին ապշեցնում
եր իր հիշողությամբ՝ պապը «Ճիռւ հիշողություն» եր
անվանում: Մի անգամ, իր ընկեր գիմնազիստ Յեվրե-
ինովի մոտ տեսնելով Ավստրալիայի քարտեզը, Գոր-
կին վերցրեց նրան նայելու և հետևյալ որն արդեն
անդիք գիտեր ալդ քարտեզի բոլոր կղզիները, գե-
տերը, սարերը և քաղաքները:

Յերբ Գորկին գրող գարձափ, նրա զարմանալի
հիշողությունը վերածնում եր արգեն վոչ թե Ավստրա-
լիան, այլ Ռուսաստանը՝ կյանքը վոլգայի ափերին,
Դրիմի և Կովկասի լեռներում, բազմաթիվ ոռւսական
քաղաքներում:

Դաժան անարդարության և անչափելի մարդ-
կային տառապանքների քարտեզն եր այդ:

Յերբ Գեղարվեստական թատրոնում պատրաստ-

վում եյին բեմադրել Հատակումը՝ ոեժիսյորն ու գեկորատորն ուզում եյին ստանալ վորեե գիշերոթեանի լուսանկար:

Գորկին բացատրեց նրանց, վոր գիշերոթեանում լուսանկարելու համար զոնե մազնեղիոն պիտի լինի, այլապես անկարելի յե, վորովհետեւ այնտեղ յերբեք գույս չի լինում:

Գորկին առաջինը պատմեց այն մարդկանց մասին, վորոնց խավար կյանքը չի յենթարկվում տպավորման լուսանկարչական ապակու վրա: Գորկու բույակների այդ խորհրդային կյանքը սարսափելի յեր, բայց ավելի սարսափելի յեր: Գորկու մեշանների կյանքը:

Եերբ Գորկին յերրորդ դասարանի քննություն տվեց, նա պարզե ստացավ մի ավետարան, կոիլովի առակները և գովասանական թերթ:

Գորկին գրքերը հիսուն կոպեկով ծախեց կրպակին՝ տատը հիվանդ պառկած եր և փող չուներ:

Իսկ գովասանական թերթի վրա գրեց.

«Մեր խողային կունավինյանը»^{*)}:

Գորկին այդ ժամանակ տատը տարեկան եր, և նա արդեն լավ տեսնում եր. կունավինոյի մեշանական կյանքի խողությունը:

Գորկու շատ պատմվածքները, վեպիկները և պիեսները կարելի են միացնել այս ընդհանուր անունով՝ «մեր խողային կունավինյանը», վորովհետեւ միայն կունավինոյի կյանքը չեր, վոր լի յեր ծանր գարշանքներով:

^{*)} Կունավինոն—Նիժնի նովորոդի ժայրամաս, վորտեղ ապրում եյին մեշաններ և քաղաքի աղքատ ժողովութեան:

Բայց Գորկին միայն չեր մատնանշում, թե ինչ-քան տխուր ու սարսափելի յե նուսաստանը:

Դեռևս վաղ ջահելության ժամանակ, գեռես թույլ ուղղագրության մեջ, նա արգեն ամուր կարծիք ուներ գրականության նշանակության մասին:

Ղազանի տարիներին մի անգամ նա ընկալ մի գասախոսության՝ Շեքսպիրի մասին, Զանգակի պետնչուն գասախոսը հայտարարեց.

— Դրականությունը գոյություն ունի հոգու հանգըստության համար:

Հացթուխ Պեշկովը նրա հետ չհամաձայնեց, Դասախոսի այդ նախադասությունը մտցրեց որատետրի մեջ՝ կցելով կարճ նկատողություն՝ «սուտ և խոսում»:

Նա գիտեր, վոր գրականությունն ավելի բարձր կոչում ունի և այդ կոչումն եւ վոչ թե հանգստացնել, այլ անհանգստացնել հոգին:

Հետազայում, գառնալով գրող, նա իր հերոսներից մեկի բերանով ասաց.

«Վողնի պետք ե գցել մարդու գանգի մեջ, վորովի նա յերեք չհանգստանա»:

Գորկու խոօքը ծակող եր, հուզումնալի, և նա խոր մանում եր վողնու պես ընթերցողի գիտակցության մեջ:

Այն նախահեղափոխական տարիներին, յերբ յերիտասարդ գրող Գորկին ապրում եր Նիժնիում, նարամոտ հաճախ գալիս եր մի բարձրահասակ մարդ՝ յերկար անդիմական վերարկույով և շիկակարմիր գույնի կեպկայով, վոր հիացմունք եր պատճառում փողոցային յերեխաներին: Գորկու տան մոտ հերթապահող լըրտեսները գիտեյին, վոր շուտով փողոցում կհավաքվել:

անցորդների բազմություն՝ լսելու նշանավոր բառ
Շալյապինի յերգեցողությունը:

Գորկին նրա հետ մտերմացել եր դեռևս Դավա-
նում: Նրանք յերկուսն ել բուլկեգործ Գորկին և
կոչկակար Շալյապինը, մի անգամ մտան թատրոն՝
խմբերգիշ վարձկելու: Գորկուն ընդունեցին, իսկ Շալ-
յապինը համարվեց անձայն....

Բուլկեգործն ել կոչկակարն ել հասան համաշ-
խարհային փառքի, բայց նրանց ուղիները բաժան-
վեցին:

Դեռ 1902 թվին, Շալյապինի մեծարանքի ժա-
մանակ, Գորկին ճառ արտասանեց՝ շեշտակի և խիստ:

— Դուք հանձար եք, — ասաց նա Շալյապինին —
բայց ձեր յերգերը կորչում են զամանկվարեցիկի կուպչի-
խաների սենեկաշարքերում: Հիացմունք զարթեցրեք
դժբախտների, ընկճվածների հոգիների մեջ, Այն ժա-
մանակ դուք ճշմարտապես մեծ կլինեք:

Շալյապինը չհետեւց այդ խորհրդին և, յերբ հե-
ղափոխությունը ներխուժեց վոսկեղոծ սենեկաշար-
քերը, նա դավաճանեց այն ժողովրդին, վորից դուրս
եր լեկել:

Գորկին իր յերգերն ուղղում եր ժողովրդին: Յեզ
յերբ այդ ժողովուրդը կատարեց մեծագույն հեղափո-
խությունն աշխարհում և ձեռնարկեց նոր կյանքի
ստեղծագործման, Գորկին նրան տվեց վոչ միայն իր
յերգերը, այլ և մարտիկի ամբողջ եներգիան, կառու-
ցողի ձեռներեցությունը և մեր ժամանակի ամենա-
կրթված անձնավորություններից մեջի գտելիքները:

Գորկու վերջին տասնամյակի կենսագրությունը՝
այդ վոչ միայն գրողի կենսագրություն ե, այլ և ակա-

նավոր խորհրդային գործչի, ԽՍՀՄ-ի գրական կյան-
քի ղեկավարի, կուլտուրայի մարտիկի, հեղափոխականի,
վորը կանգնած և աշխարհի այն լավագույն մարդ-
կանց շաբաթում, վորոնք իրենց ստեղծագործական հան-
ձարով ծառայում են ամբողջ մարդկության աղատու-
թյան գործին:

Ամբողջ աշխարհի առաջավոր ինտելիգենցիայի
գիտակցության մեջ Գորկու անունը միայնունելի և
Փրանսիական գրող Ռոմեն Ռուլանի անվան հետ:

Մեր ժամանակի այդ յերկու մեծ գրողների ու-
ղին դեպի հեղափոխությունը տարբեր եր, ինչպես նման
չեր պրոլետար և ինքնուս Գորկու կենսական վիճակը
և յերաժշության պատմության պրոֆեսոր Ռուլա-
նինը: Բայց և Գորկու և Ռուլանի վերաբերմանը հա-
շաւար չափով կարելի յէ կիրառել այն խոսքերը, վոր
ասել և նրանց ընդհանուր ընկեր, արվեստի համախոհ
յեղալրակից, և նորերս մեռած Փրանսիական գրող
Անրի Բարյոյուսը:

«Գիրք ստեղծող վիպագիրը պիտի լինի մասնա-
չից այն մեծ հասարակական գործի, վորն անհրաժեշտ
և ապագա մարդկության համար, սոցիալիզմի և հա-
ճամաշխարհային հեղափոխության համար»:

Այդ մեծ աշխատանքի մեջ հանուն մարդկության
Գորկին ու Ռուլանը գրավեցին վոչ միայն պատվա-
չոր, այլ և ոսղմական պոստեր, անխոնջ կերպով աշ-
խատելով իսկական մարդկային կուլտուրայի համար,
այն իսկական մարդկայնության համար, վորը բե-
րում և պրոլետարական հեղափոխությունը, բերում և
այն աշխարհին՝ վորպես իր ամենաբարձր և սքանչե-
լի նպատակը:

Հեղափոխականի կյանքն ու պատքարը դարձած
ե ապագային։ Այս պատճառով նրանցից շատերին
հասուկ ե սերը դեպի մանուկները։

Գորկու ամբողջ կյանքի միջով անցնում ե այդ
մեծ և խոր սերը։

Այս մասին ամենից լավ խոսում են Գորկու
զարմանալի նամակները մանուկներին։ Նրանց վե-
րապատմել անհնարին ե։ Ավելի լավ ե բերենք դրան-
ցից յերկուսը։

Մեկը գրված ե վաղուց, մինչև հեղափոխությունը
և այս պատճառով նրա մեջ խոսվում է «ՅԱՅ» տա-
սի մասին։

Նա հասցեադրված ե Կառլիից Բագու, մանկա-
պարտեզի յերեխաններին, վորը կոչվում եր «Զարաձը-
ճիների զպրոց»։ Այս պարտեզում սովորում ելին հե-
ղափոխականների և բանվորների յերեխանները։ Ահա
այդ նամակը։

«Ստանալով ձեր նամակները, յես ուրախությու-
նից այնպես եյի հրնում, վոր բոլոր ձկները
դուրս հանեցին իրենց քթերը ջրից—այս ինչ ե։ Յես
նրանց բացատրեցի, վոր մի ուրիշ ծովի ափին ապ-
րում են հիանալի մարդիկ, նրանք գեռ փոքրիկ են,
բայց յես հավատացած եմ, վոր մեծացած ժամանակ
ել նրանք լավ կլինեն—այ թե ինչու յեմ ուրախ։

Վորպեսզի դուք չասեք, վոր յես վատ եմ զրում
և ինձ չի կարելի կարդալ—ահա յես տպեցի այս նա-
մակը մեջենալի վրա։

Երբ թե ինքներդ շատ լավ եք զրում։ Սպասե-
ցեք, յես կպահեմ ձեր նամակները և, եսպես, մի
քսան տարուց հետո ցուց կտամ—լճվ խոսքեր կկար-
գաք դուք այնտեղ։

Որինակ, թուլ ավել հարցնել, ինչ կնշանակի
ուրախա, լունյա, ճյուղա, ուլուսաց լեզուն, ինչ-
պես այդ դուք եք անում։

Մի բանի մեջ եմ յես թույլ՝ «ՅԱՅ» տասի գործա-
ծության մեջ, միայն դուք այդ մասին վոչ վոքի չա-
ռեք։

Այդ տասն ինձ միշտ շփոթում ե, և հենց վոր
յանը նրան և հասնում՝ յես ինձ դպում եմ ախպես,
վոր, իբր թե, յես, վոչ թե քառասուն տորեկան եմ,
այլ ընդամենը չորս։ Մինչև տնկամ «ՊԱՅՏԵ», «ՊՈԴԱՅՏԵ»
«ՊՈՆՅՏԵ», բառերի մեջ աչքի այդ «ՅԱՅ»-ն և յերկում,
այս պատճառով պատահում ե, վոր յես «ՊԱՅՏԵ» գրելու
փոխարեն զրում եմ «ՊԻԵՏԵ»։

Ինչ մեծ ուրախությամբ կտեսնվելի ձեզ հետ,
սիրելի յերեխաններ, ինչ հիանալի մենք կիսայինք և
ինչքան զվարճալի բաներ կարող եյի ձեզ պատմել։
Յես թեև շատ ել ջանել չեմ, բայց տխուր տղա չեմ և
կարողանում եմ լավ ցույց տալ, թե ինչ ե պատա-
հում ինքնակնին, վորի մեջ կրակ են զցել և մոռա-
ցել են ջուր լցնել, Կարող եմ նույնպես ցույց տալ ինչ-
պես ծուլլ և հիմար «պերկիա» ծուկը կարթից վերցնում
և խայձը, և շատ ուրիշ ծիծաղաշարժ բաներ։ Յես շատ
սիրում, եմ յերեխանների հետ խաղած այդ իմ հին
սովորությունն ե, յերբ գեռ փոքր եյի—տասը տարե-
կան—յես պահում եյի իմ փոքրիկ յեղբարը—նա մե-
ռած ե—հետո պահում եյի ելի յերկու յերեխալի և
վերջապես, յերբ յես քսան տարեկան եյի, տոներին
յերեխաններ եյի հավաքում ամբողջ փողոցից, վոր-
տեղ անդրում եյի, և ամբողջ որոնք նրանց հետ զնում
եյի անտառ առավատից մինչև յերեկո։

Այդ հիանալի յեր, զիտեքք: Հավաքվում ելին
մինչև 60 յերեխա, նրանք փոքր եյին, մոտավորա-
պես չորս տարեկանից մինչև տասը տարեկան, վոչ
ավել, անտառում վազվելով, պատահում եր, նրանք
հաճախ չեյին կարողանում վոտքով տուն գնալ:

Իսկ յես դրա համար շինել եցի մի տեսակ բազ-
կաթոռ. յես նրան կապում եյի մեջքիս ու ուսերիս,
նրա մեջ նստում եյին հոդնածները և յես նրանց հի-
անալի կերպով դաշտով տուն եյի բերում: Հրաշալի
յեր:

Լավ ժամանակ եր, ինձ համար հաճելի յե այդ
ամենը հիշելը: Իսկ հետո յես դարձա զրող, այդ շատ
դժվար գործ է, թեև յես հենց այդ եմ սիրում:

Մյուս նամակն արգեն գրված ե մեր որերին
իրկուտսկի զպրոցի աշակերտներին, վորը կրում ե
Մաքսիմ Գորկու անունը:

«Ընկեր Բասովն ինձ մոտ եր, պատմում եր այն
մասին, թե ինչպիսի լավ զպրոցներ են շինվում ձեզ
մոտ, Արևելյան Սիբիրում, պատմում եր՝ ինչպես եք
դուք սովորում և ինչքան շատ շնորհալի մարդիկ կան
ձեր մեջ:

Առանձնապես հաճելի յե իմանալ, վոր դուք սո-
վորում եք ջանասիրությամբ և սիրով: Այդպես ել
պետք է, յերեխաներ, զիտությունը պետք և սիրել—
մարդիկ չունեն ավելի հզոր և հաղթական ուժ, քան
զիտությունը: Հողի աշխատավոր ժողովուրդը մեծ
տանջանքներ և կրել իր անդրագիտության և կիսա-
գրագիտության համար: Ձեր հայրերը, աշխարհի թա-
լանչիների ձեռքից իշխանությունը առնելով՝ ձեր ա-
ռաջ լայն ուղի լին բացել զեպի զիտության գրաված

բարձունքը և մեղ վրա պարտականություն և գրված
շարունակել հայրերի համաշարհային գործը: 18 տար-
վա նրանց քաջարի աշխատանքը, ուժերի հերոսական
լարումը ցույց են տալիս ձեզ, թե ինչ հրաշքների
յե ընդունակ—գիտության ոժանդակությամբ—պրո-
լիտարիատը, յերկը տերը: Այս դեռևս միայն սկիզբն
ե նոր, չեղած պետություն ստեղծելու աշխատանքի,
սկիզբն և սոցիալիստական աշխարհի կառուցման:

Մեզ հարկավոր են հարյուր հազարավոր բժիշկ-
ներ, ճարտարագետներ, յերաժիշտներ, դերասան-
ներ, բանաստեղծներ, վիպասաններ և այլն, հարկա-
վոր և մարդկանց բանակ, վորոնք զբաղվեյին վորո-
նումներով և մշակումով այն գանձերի, վոր գտնվում
են մեր յերկը լնդերքում: Մեր պետության մեջ
չպետք և լինեն մարդկանց առողջության համար վա-
ստակար միջատներ, չպետք և լինեն մոլախոտեր, վո-
րոնք սպառում են հողի հյութերը, չպետք և լինեն
անտառի և հացարույսերի վնասառուներ:

Մենք այդու պիտի մշակենք մեր ամբողջ
հողը, չորացնենք ճահճները, ջուր մատակարարենք
անջղղի անապատներին, կանալիզացիայի յենթար-
կենք և խորացնենք գետերը, կառուցենք միլիոնավոր
կիլոմետր ճանապարհներ, մաքրենք մեր հսկայական
անտառները: Մեր յերկում տեղ չպիտի ունենա մո-
րեինք՝ վոր լափում և հացը, մոծակները՝ վորոնք մարդ-
կանց տեսնդ են պատվաստում, ճանձերը՝ վոր հիվան-
դություններ են տարածում, միջատները՝ վորոնք
տանջում են տնային կենդանիներին: Առնետները և
մինները՝ այդ մակարույնները — մեզ հարյուրավոր
միլիոններ վնաս են հասցնում, ինչպես և դաշտերի
կրծողները՝ խլուրդները, գետնասկյուռները, դաշտա-

մկները։ Այս, իհարկե, դեռ բոլորը չի, կտ ելի շատ
բազմանահովի ուրախ աշխատանք՝ առաջին իսկական
կուլտուրական սոցիալիստական ոլետության շինա-
րարարության ուղղությամբ, այդ աշխատանքը ձեզ
և սպասում, և նա պահանջում է լայն գիտական գի-
տելիքներ։

Այս ինչպիսի նպատակներ են կանգնած՝ ձեր
առջև, իսկ բուրժուազիայի պետությունների մեջ ֆա-
շիստները՝ հարուստների ստրուկներն ու լաքեյները,
ճշում են—հերիք և կուլտուրան, լեռ գեղի միջնա-
դարը, գեղի հավատ առ աստված և սատանան, հե-
րիք և տեխնիկան, յետ գեղի ձեռքի աշխատանքը։
Այս ձիչերը՝ ձիչեր են մեջանների, գորոնք վայրե-
նացել են՝ անխուսափելի կործանման լերկուդից։
Նրանք կործանվում են և նրանք զգում են, վոր գո-
չինչ և վոչչվոք չի փրկի նրանց կործանումից։

Շատ զանազան գարշանքներ են կատարում յերկ-
րի սատկող թալանչիները։

Յերեխաներ, այս բոլորը կտք պիտի գիտենաք։
Այն բոլորը, ինչ կար յերեկ և արգում և այսոր, պետք
և հայտնի լինի ձեզ, վորովհետեւ զուք պատմության
կողմից կոչված եք շարունակելու ձեր հայրերի կոր-
ծերը վոչ միայն ձեր յերկրում, այլ և ամբողջ աշ-
խարհում։

Հանուն այդ բերկալի աշխատանքի, վորն ա-
պագան զարձնում և ներկա յերազանքներ՝ իրակա-
նություն, ապրել զրել և պայքարել և պըուհասար-
կան մեջ գրողը։

Ուստի այս տոքերով, վորոնք ուղղվուծ են նրանց,
վորոնց պատկանում և մեր յերկրի ապագան, ուզում
եմ վերջացնել Մաքսիմ Գորկու կինոադրությունը։

Յ Ա Ն Կ

Գլուխ	I.	Մանկություն	5
»	II.	Ղաղանում	24
»	III.	Յերկաթուղային պահակ	39
»	IV.	Ծեր կազմություն	44
»	V.	Թափառություն	51
»	VI.	Առաջին պատմվածքը	57
»	VII.	Իլեգութիւն Խլամիդա	60
»	VIII.	Փառքը	67
»	IX.	Մետեխի բերքը և Նիժեղորոպ- յան բանտը	72
»	X.	Առիակները և լրուեաները	82
»	XI.	Գեղարվեստական թարսոնի բիմի վրա	78
»	XII.	Յերեք հեղափոխություն	94
»	XIII.	Գրողը և մարտիկը	115

ԱՄԱՐՏՈՒՄ ԳՈՐԾՎՈՒՄ ՅԵՐԱԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԴԻՄԱԿԱԽԹՅՈՒՆՆԵՐ

1. Քնարիր յերկեր: Հատոր I-ին: Մանկություն: Թարգմ. Արագիլ: Յեր., Պետհատ. 1932. 233 էջ:
2. Քնարիր յերկեր: Հատոր 2-րդ: Մանայության մեջ: Թարգմ. Արագիլ: Յեր.-Մոսկ., Պետհատ. 1934. 343 էջ:
3. Քնարիր յերկեր: Հատոր 3-րդ: Խմ համալսարանները: Թարգմ. Արագիլ: Յեր., Պետհատ. 1937. 186 էջ:
4. Կիմ Սամզինի կյանքը: Վեպ: I. Թարգմ. Ա. Աթայան: Յեր.-Մոսկ., Պետհատ. 1935. 574 էջ:
5. Պատմվածքներ: Հատոր I. խմբ. Ստ. Զորյան: Յեր., Պետհատ. 1928. 130 էջ:
6. Պատմվածքներ: Հատոր II. խմբ. Ստ. Զորյան: Յեր., Պետհատ. 1928. 110 էջ:
7. Հեքյաթներ: Խմբ. Սիմակի: Յեր., Պետհատ. 1928. 48 էջ:
8. Յերիտասարդ գրողը—Մարգը: Մոսկ. ԽՍՀՄ Ժող Կենտր. հրատ. 1926. 29 էջ:
9. Քառնվից և մեկ: Մոսկ., ՀԽՍՀ Պետհատ. 1926. 29 էջ:
10. Արտասովորը: Թարգմ. Ա. Տեր-Հովհաննյան: Մոսկ., ԽՍՀՄ Ժող. Կենտր. հրատ. 1927. 55 էջ:
11. Մըրկահավիր յերգը—Բագհյի յերգը: — Քնկերը— Մերունին: Մոսկ., ԽՍՀՄ Ժող. Կենտր. հրատ. 1927. 23 էջ:
12. Մի անգամ աշնանը... Թարգմ. Ստ. Շահումյան: Թիֆ. 1901. 18 էջ:
13. Յերկու պատմվածք: Թարգմ. Հակոբ Հակոբյանի: Թիֆ. հրատ. տպագրական բանվորների: 1914. 15 էջ:
14. Խմ ուղեկիցը: Թարգմ. Ա. Աթայան: Թիֆ. 1904. 63 էջ:
15. Դանկոյի սիրտը: Թարգմ. Ա. Աթայան: Թիֆ. 1904. 16 էջ:

16. Ամայի դաշտում: Թարգմ. Սարգիս Մ. — իսահակյան: Աղեք — պոլ: 1902. 31 էջ:
17. Զելկաշ և Հին ժամանակի պատմություններ: Թիֆ. 1903. 86 էջ:
18. Պատմվածքներ: Ա. գրքույկ: Թարգմ. Զ. Զամբազյան: Թիֆ. 1904. 80 էջ:
19. Պատմվածքներ: Բ. գրքույկ: Թարգմ. Զ. Զամբազյան: Թիֆ. 1904. 47 էջ:
20. Չարաճը: Թարգմ. Ա. Աթայան: Ս. — Պետհրբուրգ: 1904. 45 էջ:



Թարգմանիչ Մ. Խ ա ն գ ա յ ա ն
Խմբագիր Ա. Զ ա բ յ ա ն
Տեխ. խմբագիր Լ. Ռ է ա ն յ ա ն
Սրբագրիչ Ա. Շ ա հ բ ա զ յ ա ն
Անվանաթերթ հ կազմը Ա. Մ ա մ մ ջ ա ն յ ա ն ի

4074

ՀՀ Ազգային գրադարան



NL0142992

Գրադիտի լիազոր Կ—4529. Պատվեր 390 Հրատ. 4940, Տիրամ
3000, Թուղթ 72×195, հեղինակ, մամ. 4¹/₄, տօղագր. 4¹/₄ մամ.
մի մամուրամ 41200 նիշ

Գիտհաստի տպարան, Յերևան, Լենինի փող. Հ 65

Այս տուի լաւյս կտեսնեն

Տուրզենեվի կյանքը

Չեխովի կյանքը

Պուչյանի կյանքը

Հ. Թումանյանի մանկուրյունը յեվ պատանեկուրյունը

Պուչինի կյանքը

Շիրվանգաղեյի մանկուրյունը յեվ պատանեկուրյունը

Նեկրասովի կյանքը յեվ գործը

Բելինսկու կյանքը յեվ գործը

Աղայանի կյանքը

Շատարյանի կյանքը

А. И. РОСКИН

Буревестник революции

Сектор детской и юнош. литературы

Армгиза при ЦКЛКСМ Армении, Ереван, 1937